

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

**ՄԱՐԳԱՐՅԱՆ ՄԵՐԻ ԱՐԱՅԻԿԻ**

**ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱՅԱՐՑԵՐԸ ԵՎ  
ԴՐԱՆՑ ԼՈՒԾՄԱՆ ՈՒԴԻՆԵՐԸ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՈԼՈՐՏՈՒՄ  
(ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՕՐԻՆԱԿՈՎ)**

# **ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ**

**Ը-00.02. «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում»  
մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման  
ատենախոսություն**

Գիտական ղեկավար՝  
Տնտեսագիտության թեկնածու,  
դոցենտ, Հայկ Ռազմիկի Ղազարյան

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ .....	4
--------------------	---

## **ԳԼՈՒԽ 1. ԱԳՐԱՐԱՅԻՆ ՈԼՈՐՏԻ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ**

1.1. Ձեռնարկատիրությունը որպես տնտեսական կատեգորիա, էությունը, ձևերը, գործոնները և սկզբունքները .....	12
1.2. Ագրարային ոլորտի ձեռնարկատիրության առանձնահատկությունները և բնորոշ գծերը .....	26
1.3. Ագրարային ոլորտի ձեռնարկատիրության զարգացման միջազգային փորձը ...	39

## **ԳԼՈՒԽ 2. ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՈԼՈՐՏՈՒՄ**

2.1. Արարատի մարզի բնատնտեսական պայմանները .....	53
2.2. Ագրարային քաղաքականության առանձնահատկությունները Արարատի մարզում .....	57
2.3. Գյուղատնտեսության տեղը Արարատի մարզի սոցիալ-տնտեսական զարգացման գործընթացում և առանձնահատկությունները .....	66
2.4. Ագրարային ոլորտի ձեռնարկատիրության զարգացման ներկա վիճակը և հիմնախնդիրները .....	82

## **ԳԼՈՒԽ 3. ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՈԼՈՐՏՈՒՄ**

3.1. Պետական աջակցության մեխանիզմների կատարելագործման ուղիները .....	104
3.2. Ձեռնարկատիրական ռիսկերի կառավարման կատարելագործման ուղիները ՀՀ Արարատի մարզի ագրարային ոլորտում .....	118
3.3. Ագրարային ոլորտի արտադրական ենթակառուցվածքների զարգացման ուղիները Արարատի մարզում .....	130

3.4. Տնտեսավարման ձևերի կատարելագործման ուղիները .....	146
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ .....	161
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ .....	169

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Չեռագոտության թեմայի արդիականությունը: Հայաստանի Հանրապետությունում անցումը շուկայական հարաբերություններին արմատականորեն փոխեց տնտեսավարման մեթոդների իրականացման մոտեցումները, ինչը զգալիորեն բարձրացրեց մասնավոր ձեռներեցության ակտիվացման անհրաժեշտությունը: Ձեռներեցությունը հաստատուն հիմքերով իրականացվող գործունեություն է, որը հետապնդում է շահույթի ստացում և ունի ընդլայնման ու զարգացման միտում: Ձեռնարկատիրությունն արտադրության առանձնահատուկ գործոն է՝ միավորում է արտադրության մյուս գործոններին, գիտությունը, արտադրության կազմակերպման հմտությունը, գործի իմացության մշակույթը: Ձեռներեցի համար որոշիչ է տնտեսական ռիսկի և նորարարության հետ կապված հարցերի բարեհաջող լուծումը: Ձեռնարկատիրությունը՝ դա այն նոր ապրանքների, ծառայությունների, աշխատանքների ստեղծման գործընթաց է, որոնք սպառողների համար որոշակի արժեք են ներկայացնում, սպառողների մշտապես հարաճուն պահանջումների բավարարման գործընթաց է արտադրության գործոնների և առկա ռեսուրսների համակցման և օգտագործման հիման վրա առավել բարձր արդյունքների հասնելու համար: Այդ գործընթացը հանդիսանում է անընդհատ, մշտապես նորացվում է, քանի որ մշտապես փոփոխվում են սպառողների պահանջումները, ճաշակը և նախասիրությունները:

Կարևոր նշանակություն ունի ձեռնարկատիրության զարգացումը ագրարային ոլորտում, որը պայմանավորված է ինչպես երկրի սոցիալ-տնտեսական զարգացման և բնակչության պարենային անվտանգության ապահովմամբ, այնպես էլ ժողովրդագրական և մի շարք այլ ռազմավարական գործոններով:

Ագրարային ոլորտը վճռորոշ նշանակություն ունի երկրի սոցիալ-տնտեսական զարգացման և բնակչության պարենային անվտանգության ապահովման գործում: Հայաստանում ագրո-արդյունաբերական համակարգին բաժին է ընկնում երկրի ՀՆԱ-ի մոտ 25%-ը, այդ թվում ագրարային հատվածին՝ շուրջ 18%-ը: Արտաքին ապրանքաշրջանառության մեջ գյուղատնտեսական արտադրատեսակների տեսակարար կշիռը կազմում է շուրջ 20%: ՀՀ բնակչության մոտ 36%-ը ապրում է գյուղական

բնակավայրերում, իսկ ագրարային հատվածում զբաղված են տնտեսությունում ընդհանուր զբաղվածների 46%-ը: Ագրարային ոլորտը ոչ միայն նյութական արտադրության ռազմավարական ճյուղ է և ունի ոչ միայն սոցիալ-տնտեսական այլև պատմամշակութային, ժողովրդագրական բարոյահոգեբանական կարևոր նշանակություն երկրի համար: Ըստ էության գյուղատնտեսական արտադրության կազմակերպումով մարդն առաջին վճռական քայլը կատարեց վայրի բնությունից դեպի քաղաքակրթություն: Գյուղատնտեսությունը եղել և մնում է անփոփոխ և անփոխարինելի՝ իր տված բարիքների և մարդու կյանքում ունեցած կենսական դերի առումով: Հնուց ի վեր՝ դեռևս տնտեսագիտության զարգացման նախապատմության շրջանում, տնտեսագիտական-փլիսոփայական միտքը առավելապես ուղղված է եղել գյուղատնտեսական խնդիրների լուծմանը: Գյուղատնտեսությունը համարվել է տնտեսագիտության հետազոտության առաջնային ուղղությունը: Այն առավելապես արտահայտվել է այնպիսի անտիկ մտածողների աշխատություններում, ինչպիսիք են Արիստոտելը, Պլատոնը, Քսենոֆոնը: Գյուղատնտեսության առաջնայնության գաղափարն արդեն գիտական հիմնավորումներով ներկայացվել է ֆիզիկրատների կողմից՝ հանձինս ֆիզիկրատների ամենակառկառուն գործչի՝ Ֆրանսուա Քենեի՝ ըստ նրա հարստությունը ստեղծում է միայն գյուղատնտեսության մեջ ստեղծված արժեքները: Թեև ֆիզիկրատներից մինչև այսօր տնտեսագիտական միտքը հսկայական թռիչք է ապրել, այնուամենայնիվ գյուղատնտեսության ոլորտի զարգացման հիմնահարցերը չեն կորցրել իրենց կարևորությունը և արդիականությունը: Ձեռնարկատիրությունը գործարարության ձևերից մեկն է, որը բնութագրվում է նորարարությամբ ու ստեղծարար բնույթով: Ձեռնարկատիրությունը՝ որպես տնտեսավարման մեթոդ, տնտեսավարման ձևերի, եղանակների ամբողջություն է, որի նպատակը արտադրական ռեսուրսների արդյունավետ օգտագործման միջոցով առավելագույն շահույթի ստացումն է:

Ձեռնարկատիրական գործունեությունը՝ որպես տնտեսական մտածողություն յուրահատուկ տեսակ բնութագրվում է այն առանձնահատուկ հայացքների և ընդունակությունների ամբողջությամբ, որով օժտված է ձեռներեցի անձը:

Գյուղատնտեսությունում ձեռնարկատիրական գործունեությունը իրականացվում է նույն կերպ և նույն սկզբունքներով, ինչպես տնտեսություն մնացած ճյուղերում:

Սակայն ի տարբերություն այլ ճյուղերի գյուղատնտեսությունը բարձր ռիսկայնության ոլորտ է, արտադրությունն իրականացվում է բաց երկնքի տակ և ավելի շատ է ենթարկվում բնության տարերային դրսևորումների ազդեցությանը: Գյուղատնտեսության ճյուղի ձեռնարկատիրական գործունեությունը լիարժեք կազմակերպելու համար անհրաժեշտ է հաշվի առնել բնական գործոնների ազդեցությունը և կենդանիների ու բույսերի կենսական գործառույթները:

Իր գործունեության ընթացքում ձեռնարկատերն առնչվում է այնպիսի գործոնների հետ, ինչպիսիք են կլիման, եղանակը, հողի բերրիությունը, կենդանի օրգանիզմների աճի և զարգացման կենսաբանական երևույթները և այլն: ՀՀ-ում ագրարային ռեֆորմները ռազմավարական տեսանկյունից լիովին արդարացված էին ու օբյեկտիվորեն անհրաժեշտ և ըստ էության լուծեցին գյուղում շուկայական ազատ տնտեսական հարաբերությունների ստեղծման կարևորագույն խնդիրը: Սակայն պետք է նշել, որ ռեֆորմի իրականացման ժամանակ թույլ տրվեցին մարտավարական սխալներ: Ռեֆորմն իրականացվեց հապճեպ, հաշվի չառնվեցին միջազգային փորձը, գիտականորեն հիմնավորված մոտեցում չցուցաբերվեց ագրարային ռեֆորմների նկատմամբ: Մասնատվեցին և փլուզվեցին հողն ու արտադրության միջոցները: Ըստ էության Հայաստանում ագրարային ռեֆորմները ոչ թե հաղթահարեցին գյուղատնտեսության մեջ ստեղծված ճգնաժամը, այլև խորացրեցին այն: Գյուղատնտեսությունում տնտեսական բարեփոխումների շարունակականության ապահովումը և շուկայական հարաբերությունների խորացումը անհրաժեշտություն են առաջացնում իրականացնելու համապատասխան միջոցառումներ ձեռնարկատիրական գործունեության հետագա զարգացման համար, ինչը ենթադրում է տնտեսավարման ձևերի կատարելագործում, արտադրական և սոցիալական ենթակառուցվածքի զարգացում, մատչելի վարկային ռեսուրսներով ապահովում, պետական աջակցության կառուցակարգերի կատարելագործում, առանց որի գրեթե անհնարին կլինի ոլորտի զարգացումն ու սպասվելիք արդյունքների ստացումը: Չնայած նրան, որ Հայաստանում ձեռնարկատիրական գործունեության ձևավորումն ունի կարևոր նշա-

նակություն ագրարային ոլորտի զարգացման գործում, սակայն անցման ժամանակաշրջանում դրա անհրաժեշտությունը պատշաճ ձևով չի գնահատվել, որի արդյունքում էլ ներկայումս այդ ոլորտում առկա են մի շարք հիմնախնդիրներ:

Միջազգային փորձի վերլուծությունը վկայում է, որ գյուղատնտեսական արտադրության առանձնահատկություններից ելնելով, ոլորտի տնտեսավարող սուբյեկտների գործունեությունն արդյունավետ դարձնելու նպատակով խիստ կերպով անհրաժեշտ է պետության կողմից ցուցաբերվող ապահովագրական աջակցությունը, ինչը խթանում է գյուղատնտեսության ապահովագրության գործընթացի բարելավմանը, բարձրացնում է ապահովագրական ընկերությունների ներդրումային վստահությունը, թուլացնում է ռիսկերի աստիճանը՝ նպաստելով ձեռներեցության զարգացմանը ագրարային ոլորտում:

Հայաստանի Հանրապետությունում ձեռներեցության պետական կարգավորման համակարգի ձևավորման բնորոշ գծերի և առանձնահատկությունների բացահայտմանը, դրանցով պայմանավորված հիմնախնդիրների հետազոտությունը նվիրված են հայրենական տնտեսագետ գիտնականների որոշ աշխատանքներ: Դրանք նպաստել են ոլորտի տվյալ հիմնախնդիրների առկա հարաբերությունների կանոնակարգմանը և արդյունավետ կառավարման համար պահանջվելիք մեթոդական ու մեթոդաբանական հիմքերի ստեղծմանը: Սակայն տնտեսական գործընթացների կատարվող փոփոխությունը և սոցիալ-տնտեսական վիճակը պահանջում են ձեռնարկատիրական գործունեության պետական կարգավորման համակարգի կատարելագործում և զարգացում, պետական խթանող քաղաքականության իրականացում: Դա հատկապես առավել չափով առնչվում է ագրարային ոլորտի հետ:

ՀՀ Արարատի մարզի գյուղատնտեսության ձեռներեցության զարգացմանը խոչընդոտող հիմնախնդիրների լուծման արդիականությունը և հրատապությունը որոշակի չափով պայմանավորված է մինչ այժմ գիտականորեն հիմնավորված ոչ բավարար մակարդակով և քիչ ուսումնասիրված տեսական հարցերով, ինչն էլ պահանջում է հիմնախնդրի բազմակողմանի ուսումնասիրություն՝ բացահայտելով նրա դերն ու նշանակությունը մարզի գյուղատնտեսության ոլորտի վերականգնման ու հետագա զարգացման համար:

Այս ուղղությամբ դեռևս կան տեսական ուսումնասիրությունների անհրաժեշտություն և ընտրված թեմայով վերլուծությունը կոչված է ինչ-որ չափով նպաստելու տվյալ հիմնախնդրի լուծմանը:

**Յետազոտության նպատակը և խնդիրները:** Ատենախոսության հիմնական նպատակն է ուսումնասիրել ՀՀ Արարատի մարզի ագրարային ոլորտում ձեռնարկատիրության գործունեության վիճակը, մատնանշել այն ուղղությունները, որոնք կբերեն գյուղատնտեսության ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացմանը՝ տնտեսավարման առաջավոր մեթոդների կիրառման շնորհիվ:

Այդ նպատակի իրականացման համար ատենախոսությունում՝

- հետազոտվել է ագրարային ոլորտի ձեռնարկատիրության առանձնահատկություններն ու բնորոշ գծերը,
- վերլուծվել է ագրարային ոլորտի ձեռնարկատիրության գործունեության միջազգային փորձը,
- ուսումնասիրվել է ագրարային քաղաքականության առանձնահատկություններն Արարատի մարզում,
- ներկայացվել է գյուղատնտեսության զարգացման առկա վիճակը և տեղը մարզի սոցիալ-տնտեսական համակարգում,
- գնահատվել է ագրարային ոլորտի ձեռնարկատիրության զարգացման ներկա վիճակը, բացահայտելով նրանում ձևավորված հիմնախնդիրները,
- ցույց է տրվել Արարատի մարզի ագրարային ոլորտի պետական աջակցության կատարելագործման ուղիները,
- վերլուծվել է ձեռնարկատիրական ռիսկերի առանձնահատկություններն Արարատի մարզում, մատնանշելով ռիսկերի կառավարման կատարելագործման ուղիները,
- գնահատվել է ագրարային ոլորտի արտադրական ենթակառուցվածքների մակարդակը, ցույց տալ դրանց պահպանման, շահագործման և զարգացման հնարավորությունները հեռանկարում,
- ցույց է տրվել Արարատի մարզում գյուղատնտեսության տնտեսավարման ձևերի կատարելագործման ուղիները,



- կատարված հետազոտությունների վերլուծման արդյունքներով բացահայտված հիմնախնդիրների վերացման ուղղությամբ կատարվել է գիտականորեն հիմնավորված առաջարկություններ Արարատի մարզի ագրարային ոլորտում ձեռնարկատիրական գործունեության հետագա կատարելագործման ուղղությամբ:

**Հետազոտության օբյեկտը և առարկան:** Հետազոտության օբյեկտն է ընտրվել ձեռնարկատիրական գործունեությունը ՀՀ Արարատի մարզի ագրարային ոլորտում, իսկ առարկա՝ Արարատի մարզի գյուղատնտեսության ձեռնարկատիրության կատարելագործման միջոցառումները, որոնք կնպաստեն տվյալ հիմնախնդրի լուծմանը:

**Հետազոտության տեսական, տեղեկատվական և տնտեսամեթոդական հիմքերը:** Հետազոտության համար տեսական և գիտամեթոդական հիմք են հանդիսացել տնտեսագիտության տեսության դասական աշխատությունները, ձեռնարկատիրական գործունեության վերաբերյալ հայրենական և միջազգային ուսումնասիրությունները, հիմնախնդրի վերաբերյալ հրատարակված գիտական աշխատանքները, ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից ընդունված կանոնակարգերը և նորմատիվ բնույթի գերատեսչական ակտերը, ՀՀ Արարատի մարզպետարանի որոշումները, ինչպես նաև ոլորտը կարգավորող որոշումները՝ կապված սույն հիմնախնդրի հետ:

Ատենախոսության համար տեղեկատվական հիմք են հանդիսացել ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության տվյալները, ՀՀ ֆինանսների նախարարության, ՀՀ գյուղատնտեսության նախարարության, ՀՀ Արարատի մարզպետարանի տեղեկատվական նյութերը և հաշվետվությունները:

Ուսումնասիրության ընթացքում կիրառվել են գիտական արստրակցիայի, համեմատական և համակարգային վերլուծության, ինդուկցիայի և դեդուկցիայի, վերլուծության և համադրության, պոզիտիվային և նորմատիվային, տնտեսավիճակագրական մեթոդները:

**Հետազոտության հիմնական արդյունքները և գիտական նորույթը:** Ատենախոսության հիմնական արդյունքներն ունեն տեսական, մեթոդական և կիրառական ուղղվածություն: Այն ագրոտնտեսագիտության տեսությանն առնչվող գիտական հետազոտություններում իրականացվող աշխատանքներից է, որում ձեռնարկատիրական գործունեությունը դիտարկվում է մարզային կտրվածքով, բացահայտելով դրանց

բնորոշ գծերն ու առանձնահատկությունները, տրվում է համակարգային լուծումներ հետագա կատարելագործման ուղղությամբ, ինչից էլ բխում է աշխատանքի գիտական նորույթը.

1. մշակվել են Արարատի մարզի ագրարային ոլորտում տնտեսավարման ձևերի կատարելագործման ուղիները՝ գյուղացիական տնտեսությունների և կոոպերատիվների ձևավորման, ինչպես նաև վարձակալական հարաբերությունների կատարելագործման միջոցով տարածաշրջանի համար առավել արդյունավետ տնտեսությունների կիրառումը,
2. հիմնավորվել են մարզի ագրարային ձեռնարկատիրության զարգացման գործում արտադրական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացման կարևորությունը, ուղիները, միջոցները և դրանց առաջնայնություններն ու առաջնահերթությունները,
3. մշակվել են Արարատի մարզի ագրարային ոլորտի ձեռնարկատիրության արդյունավետ զարգացման նպատակով պետական աջակցության մեխանիզմներն ու գերակայությունները,
4. մշակվել են մարզի ագրարային ոլորտում ռիսկերի արդյունավետ կառավարման ուղղությունները, ռիսկ-մեներջմենթ ծառայության ներդրման և ռիսկերի նվազեցման գործում պետության աջակցության ուղիները:

**Չետագոտության արդյունքների կիրառումը և գործնական նշանակությունը:**

Ատենախոսությունը հանդիսանում է տարածքային զարգացման կառավարմանը և տնտեսության կազմակերպմանը նվիրված ուսումնասիրություն, որի գործնական նշանակությունը պայմանավորված է գյուղական համայնքների զարգացման և սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների լուծման անհրաժեշտությամբ, իսկ տեսական առումով մի փորձ է առաջադրված հարցադրումների, վերլուծությունների և հիմնավորումների միջոցով նպաստել ձեռնարկատիրական գործունեության առավելությունների բացահայտմանը, դրա տեսության ու պրակտիկայի զարգացմանը: Ատենախոսության արդյունքները կարող են արդյունավետ կիրառություն ստանալ ձեռներեցությունը լուսաբանող գիտահետազոտական աշխատանքներում: Չետագոտության արդյունքները կարող են օգտագործվել ՀՀ գյուղատնտեսության նախարար-

րության, ՀՀ Արարատի մարզպետարանի, տեղական ինքնակառավարման մարմինների (ՏԻՄ), ինչպես նաև այդ հիմնախնդրով զբաղվող մասնագետների կողմից: Վերլուծության ընթացքը և արդյունքների գնահատումը կարող են օգտագործվել նաև հանրապետության մյուս մարզերի համանման ուսումնասիրությունների ժամանակ: Ուսումնասիրության շնորհիվ կատարված եզրահանգումները կիրառելի են նաև Հայաստանի Հանրապետության ազգային տնտեսության մյուս ճյուղերում և ոլորտներում:

**Հետազոտության արդյունքների փորձարկումը և հրապարակումները:** Հետազոտության հիմնական դրույթները քննարկվել են Հայաստանի ազգային ագրարային համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետի ամբիոնների համատեղ նիստում: Ատենախոսության հիմնական արդյունքները հրապարակվել են հեղինակի «5» հոդվածներում:

**Ատենախոսության կառուցվածքը և ծավալը:** Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացություններ և առաջարկություններից, օգտագործված գրականության ցանկից: Այն շարադրված է «178» համակարգչային էջի վրա, պարունակում է «17» աղյուսակ, «1» գծապատկեր:

## ԳԼՈՒԽ 1.

### ԱԳՐԱՐԱՅԻՆ ՈԼՈՐՏԻ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

#### 1.1. Ձեռնարկատիրությունը որպես տնտեսական կատեգորիա, էությունը, ձևերը, գործոնները և սկզբունքները

Ձեռնարկատիրությունը արտադրության գործոնների (հող, աշխատանք, կապիտալ) միավորման և արդյունավետ օգտագործման միջոցով նյութական բարիքների ու ծառայությունների ստեղծման գործընթաց է, որի հիմնական նախադրյալներն են.

- ա) տնտեսավարող սուբյեկտների տնտեսական ազատությունը՝ ի՞նչ արտադրել, ինչպե՞ս, ինչքա՞ն և ո՞ւմ համար արտադրել, հիմնախնդրի ռեսուրսների և իրացման շուկաների ընտրության հարցերում,
- բ) գների ազատականացումը և արտադրության գործոնների շուկաների զարգացումը,
- գ) սեփական շահույթը տնօրինելու և ինքնուրույն որոշումներ կայացնելու առկայությունը,
- դ) ապրանքադրամական հարաբերությունների զարգացումը և այլն:

Ձեռնարկատիրությունն ունի բազմադարյան պատմություն: Այն առաջինը ձևավորվել է գյուղատնտեսության ոլորտում դեռևս 8-10 հազար տարի առաջ, երբ մարդիկ սկսեցին հայտնաբերել իրենց համար արժեքավոր վայրի բույսեր, կենդանիներ և ընտելացնել դրանք ընտանի պայմաններում: Սակայն որպես ձևավորված և կայուն երևույթ ձեռնարկատիրության ծագումը ընդունված է համարել 17-րդ դարը: Ձեռնարկատիրությունը հանդիսանում է շուկայական տնտեսավարման անքակտելի մասը, որն ունի դարերի պատմություն և խոր արմատներ, որոնք աստիճանաբար պայմաններ ստեղծեցին ժամանակակից ձեռնարկատիրության ձևավորմանը: Տնտեսագիտության տեսության մեջ «ձեռներեց» հասկացությունը ի հայտ է եկել դեռևս 18-րդ դարում, որը հաճախ նույնացվում էր սեփականատեր հասկացության հետ: Առաջինը ձեռներեց կատեգորիան կիրառել է՝ անգլիացի տնտեսագետ Ռ.Կանտիլոնը, ըստ որի

«ձեռնարկատերն անորոշ կամ ոչ հաստատուն եկամտով մարդն է (գյուղացի, արհեստավոր, առևտրական, նույնիսկ ավազակը և մուրացկանը)՝ նա ձեռք է բերում ուրիշի ապրանքը որոշակի գնով, ինչը պետք է վաճառի դեռևս իրեն անհայտ գնով»<sup>1</sup>: Դրանից հետևում է, որ ռիսկը ձեռնարկատիրոջ հիմնական բնորոշ գիծն է, իսկ առաջնային գործառույթը՝ շուկայական պահանջարկից ելնելով ապրանքների ու ծառայությունների մատուցումն է: Ադամ Սմիթը ձեռնարկատիրոջը նույնպես բնութագրել է որպես սեփականատիրոջ, որը հանուն իրացման և շահույթի ստացման տնտեսական ռիսկի է գնում, պլանավորելով և կազմակերպելով որոշակի արտադրություն, ակնկալելով նրանից արդյունքներ:<sup>2</sup> Շուկայական տնտեսության զարգացման գործում ամենամեծ ներդրումն իրականացրել է ավստրիացի տնտեսագետ Շումպետերը: Ըստ նրա, ձեռնարկատերը «գրավիչ է» (պատրաստ է ռիսկի, հոգեպես ազատ է, ունի հարուստ գաղափարներ, կամք և հետևողականություն), «կազմակերպիչ է» (ունակ է համատեղ աշխատանքի համար միավորել մարդկանց) և «առևտրական է» (ունակ է համոզելու մարդկանց գնելու իր ապրանքները, շահագրգռել նրանց հետաքրքրությունը, ձեռք բերել վստահություն և այլն): Շումպետերը գտնում էր. պարտադիր չէ, որ ձեռներեցը լինի արտադրության միջոցների սեփականատեր: Ըստ նրա, որպես այդպիսին կարող է լինել նաև բանկի կամ բաժնետիրական ընկերության կառավարիչը:<sup>3</sup> Այսպիսով, կարելի է փաստել, որ ձեռնարկատիրության և սեփականության միջև ներկայումս էլ չկա խիստ արտահայտված կապ, քանի որ ձեռնարկատիրությունն իր հիմքով չի հանդիսանում միայն սեփականատիրոջ գործառույթ, դրանով կարող են զբաղվել նաև այն անձինք, ովքեր անմիջականորեն չեն հանդիսանում սեփականության իրավունքի սուբյեկտներ: Այս ամենից հետո հարց է առաջանում, թե վերջապես ձեռնարկատիրությունը տնտեսական ձևակերպման տեսակետից ի՞նչ է իրենից ներկայացնում: Գիտական գրականությունում ընդունված է ձեռնարկատիրությունը դիտարկել երեք տեսանկյու-

<sup>1</sup> Курс экономической теории под. ред. Чепурина М.Н. Учебное пособие, Изд. “АСА”, Киров, 1996, էջ 217

<sup>2</sup> Смит А., Исследование о природе и причинах богатства народов. М.: 1962

<sup>3</sup> Шумпетер Й. Теория экономического развития. Прогресс, М., 1982, էջ 169-170 “Экономические науки”, 1992, N 4, էջ 134-137

նից՝ որպես տնտեսական կատեգորիա, որպես տնտեսավարման մեթոդ և որպես տնտեսական մտածողության տեսակ:<sup>1</sup>

Որպես տնտեսավարման մեթոդի, ձեռնարկատիրության համար կարևոր պայման է հանդիսանում տնտեսվարող սուբյեկտների ինքնուրույնությունը և անկախությունը, ձեռնարկատիրական գործունեության ձևի ընտրության, արտադրական ծրագրի ձևավորման, ֆինանսավորման ռեսուրսներից օգտվելու, արտադրանքի իրացման, գնի սահմանման, շահույթի տնօրինման և այլ իրավունքների տիրապետումը: Ձեռներեցի ինքնուրույնությունը բնորոշվում է նրանով, որ նա չունի վերադաս, ղեկավար մարմին: Սակայն, ձեռներեցը միշտ էլ կախվածության մեջ է գտնվում շուկայական կոնյուկտուրայից (հրավիճակից), գների մակարդակից և ապրանքադրամական հարաբերությունների համակարգից:

Ձեռնարկատիրությունը, որպես տնտեսական մտածողության հատուկ տեսակ, բնութագրվում է որոշումների ընդունման յուրահատուկ ձևով և մոտեցումներով, որոնք կիրառվում են գործնականում: Այստեղ կենտրոնական դեր է կատարում ձեռներեցի անձը: Ձեռնարկատիրությունը զբաղմունքի տեսակ չէ, այլ ձեռներեցի անձի, նրա գիտակցության հատկություն: Այս առիթով Շումպետերը նշում էր, որ «Լինել ձեռներեց նշանակում է անել ոչ այն, ինչ անում են ուրիշները, պետք է ունենալ առանձնահատուկ երևակայություն, կանխատեսելու ձիրք, հաղթահարել վախը և գործել ոչ թե իրականացվող գործընթացից ելնելով, այլ ինքը որոշի այդ գործընթացները»:<sup>2</sup> Այս ամենից բխում է, որ ձեռնարկատիրությունը, որպես տնտեսական մտածողության յուրահատուկ տեսակ, ամբողջությամբ օժտված է ձեռներեցի անձով:

Սակայն, միշտ չէ, որ ձեռներեցը գործում է սահմանված կանոններով և ընդունված օրենքներով: Անորոշության և ռիսկի պայմաններում նա հաճախ ձգտում է լուծել չափազանց բարդ խնդիրներ, ընտրել նոր ոլորտ, անժանոթ ուղղություն, կիրառել հարցերի իրականացման նոր մեթոդներ ու եղանակներ:

Տնտեսագիտությունը ձեռներեց հասկացությունը կապում է սեփականատեր հասկացության հետ, սակայն վերջինս միշտ չէ, որ կարող է լինել ձեռներեց (հիմնա-

---

<sup>1</sup> Նույն տեղում

<sup>2</sup> Шумпетер Й., “История экономического анализа” (пер. с англ. под ред. В.Антонова), Санкт-Петербург, 2004

կանում օժտված չլինելով համապատասխան հատկանիշներով): Որպես կանոն, սեփականատերը ձեռներեցությամբ զբաղվում է փոքր ձեռներեցության պայմաններում, իսկ խոշոր արտադրություններում տեղի է ունենում ձեռներեցի և սեփականատիրոջ տարանջատում, որտեղ դրսևորվում է ձեռներեցի գործառույթներ: Դրանք են.<sup>1</sup>

1. Ռեսուրսային գործառույթ, ինչի էությունը կայանում է նրանում, որ ձեռներեցն իր տրամադրության տակ գտնվող դրամական միջոցներով ձեռք է բերում տնտեսական գործունեություն իրականացնելու համար անհրաժեշտ գործոններ և ռեսուրսներ:
2. Կազմակերպչական գործառույթը ենթադրում է արտադրության գործոնների այնպիսի համակցում, որը կապահովի առավել բարձր արդյունք:
3. Ստեղծագործական գործառույթով իրականացվում է նոր գաղափարների նյութականացում, գիտահետազոտական և փորձնակոնստրուկտորական աշխատանքների արդյունքների օգտագործում, արտադրության արդյունավետության լավագույն տարբերակների ընտրություն, աշխատանքի կազմակերպման կատարելագործում և այլն:
4. Սոցիալ-տնտեսական գործառույթով ձեռներեցը հասարակության պահանջմունքները բավարարելու նպատակով իրականացնում է աշխատանքային, նյութական, տեղեկատվական ռեսուրսների արդյունավետ օգտագործում:
5. Անձնական գործառույթը վերաբերվում է ձեռներեցի անձնական նպատակի իրականացման, աշխատանքի արդյունքներից ստացված բավականությանը, ինքնազարգացման և անհատական ընդունակությունների դրսևորմանը և այլն: Ժամանակակից տնտեսագիտությունը ձեռնարկատիրությունը դիտարկում է որպես ինքնուրույն արտադրության գործոն, քանի որ դրա միջոցով է իրականացվում արտադրության մյուս գործոնների միավորումը և օգտագործումը: Ձեռնարկատիրության գործունեությունը տնտեսական գիտությունների ուսումնասիրության առանցք է, դրանով է բացատրվում ձեռնարկատիրության էության բնորոշումների, մեկնաբանությունների բազմազանությունը: Բացի այդ, կախված տնտեսական կյանքում կատար-

---

<sup>1</sup> Խաչատրյան Գ. Տնտեսագիտության տեսություն: Ուսումնական ձեռնարկ, Եր.: Հեղինակային հրատ., 2007, էջ 235-236

վող պահանջմունքներից փոխվում են նաև ձեռնարկատիրության գործունեության ուղղությունները, իրականացման մեթոդները, մեխանիզմները և այլն:

Այսպես, ներկայումս զարգացած շատ երկրներում որոշակիորեն ուրվագծված են XXI դարի ձեռներեցության հեռանկարային ուղղվածությունները: Օրինակ, ճապոնիայում մեծ տեղ է տրվում տեղեկատվական բիզնեսի զարգացմանը: Օգտագործելով համաշխարհային տեղեկատվական շուկան, ճապոնացի ձեռներեցներն ավելի արագ և լավագույն ձևով են ներդրում տեխնոլոգիական նորույթները: Գերմանիայում, Անգլիայում և Ֆրանսիայում շեշտը դրվում է արդյունաբերական տեխնոլոգիաների վրա, համարելով, որ նա, ով ուժեղ է արդյունաբերական տեխնոլոգիաների մեջ, հաջողություն կունենա նաև գիտության և տեխնիկայի բոլոր բնագավառներում: ԱՄՆ-ում ուշադրության կենտրոնում աշխատողների մտավոր զարգացման խնդիրն է, որից կախված է գործարարության տեխնոլոգիական ներուժը:<sup>1</sup>

Ձեռնարկատիրական զարգացման մակարդակով է բնորոշվում շուկայական տնտեսության շարժիչ ուժը, ինչը նպաստում է տնտեսության մրցունակության բարձրացմանը և տնտեսության կայուն զարգացմանը, որն իր հերթին հնարավորություն է տալիս ապահովել բնակչության զգալի մասի զբաղվածություն, նոր աշխատատեղերի ստեղծում, սոցիալական լարվածության թուլացում և բարեկեցության բարձրացում:

Սակայն, մասնագիտական գրականության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դեռևս ձեռնարկատիրության ամբողջական տեսություն մշակված չէ, թեպետ այդ ուղղությամբ իրականացված են մեծածավալ վերլուծություններ և տեսական մշակումներ: Բավական է նշել, որ ներկայումս գոյություն չունի ձեռնարկատիրության վերաբերյալ ընդհանրական սահմանում, ինչը վկայում է դրա վերաբերյալ գոյություն ունեցող բազմակարծության մասին:

Ձեռնարկատիրության տեսության զարգացման վերաբերյալ տնտեսագետ-գիտնականների հայացքները ժամանակային կտրվածքով կարելի է բաժանել հինգ փուլի:

Առաջին փուլն ընդգրկում է մինչինդուստրացման ժամանակաշրջանը, որտեղ գերակշռում էր վաշխառուական կապիտալը՝ փողատերերը բարձր տոկոսով վարկ

---

<sup>1</sup> Տնտեսագիտության տեսություն (ուսումնական ձեռնարկ), Գ.Կիրակոսյանի և Ի.Խլղաթյանի խմբ., Եր.: «Տնտեսագետ», 2009, էջ 415



էին տրամադրում գյուղացիներին ու մանր առևտրականներին, հետագայում դրանց պահելով տնտեսական կախման մեջ: Այս երևույթը նպաստեց կապիտալի նախասկզբնական կուտակման գործընթացին, ինչի արդյունքում դրամական միջոցները կուտակվեցին առանձին անձանց մոտ, իսկ բնակչության հիմնական զանգվածը վերածվեց վարձու աշխատողների: Չենց դա էլ ձևավորեց կապիտալիստական արտադրական հարաբերությունները և անցում կատարվեց ձեռնարկատիրական գործունեության հաջորդ փուլին:

Երկրորդ փուլը ձևավորվեց արդյունաբերական հեղաշրջման արդյունքում (1770-1820-ական թվականներ), երբ անցում կատարվեց մանուֆակտուրային արտադրությունից խոշոր մեքենայական արտադրությանը: Այս փուլում է տեղ գտել «ռիսկ» հասկացությունը, որը համարվում է ձեռներեցության հիմնական հատկանիշը: Ժամանակագրական առումով երկրորդ փուլը տևեց մինչև 19-րդ դարի վերջը, քանի դեռ գոյություն ուներ ազատ շուկայական մրցակցային տնտեսություն և գիտության դերն արտադրության զարգացման գործում խիստ կերպով չէր գերազնահատվում:

Երրորդ փուլն ընդգրկում է 19-րդ դարի վերջից մինչև 20-րդ դարի կեսերը, որտեղ ձեռնարկատիրական զարգացման բնութագրական հանգամանքը կապվում էր ինովացիոն նորարարական հատկանիշի հետ: Այդ ընթացքում ձեռներեցների հիմնական խնդիրը նորամուծությունների ներդրման շնորհիվ արտադրության բնույթի և եղանակի արմատական վերափոխումն էր՝ նոր ապրանքատեսակների արտադրության համար նորագույն տեխնոլոգիաների օգտագործում և (կամ) թողարկվող ապրանքատեսակների արտադրության համար հումքի նոր աղբյուրների և արտադրանքի իրացման բացահայտման շնորհիվ նորագույն մեթոդների օգտագործումը:

Ձեռնարկատիրական գործունեության զարգացման չորրորդ փուլը ներառում է 20-րդ դարի երկրորդ կեսը, ինչը բնութագրվում է շուկայական հարաբերությունների կարգավորման և միկրոհավասարակշռության վիճակի ապահովման գործում տնտեսական գիտությունների դերի բարձրացումով: Այս փուլում զարգացում ապրեցին ձեռներեցի «կարգավորիչի» դերն ու նշանակությունը, որն ապահովում է միկրոմակարդակով շուկաների հավասարակշռությունը, ինչպես նաև ձեռներեցության և ար-

տադրության անմիջապես կազմակերպողների ու կառավարողների (մենեջերների) կապերը:<sup>1</sup>

Ձեռնարկատիրության զարգացման հինգերորդ փուլն արդի ժամանակաշրջանն է, որը պայմանավորված է ձեռներեցության գործունեության իրականացման նոր հարցադրումներով՝ կապված ինստիտուցիոնալիզմի՝ հարկային, մաքսային, գնային քաղաքականությունների և շուկայական մեխանիզմի պահանջների դրսևորումների հետ:

Հասկանալի է, որ հիշատակված բոլոր փուլերում էլ տնտեսագետների կողմից տրվել է ձեռնարկատիրության բնորոշումներ, որոնք արտահայտում են նրա էությունը: Բացի վերը նշված դասական տնտեսագետների կողմից տրված բնորոշումների (Կանտիլոն, Սմիթ, Սեյ, Շումպետեր), ձեռնարկատիրության էության վերաբերյալ հետաքրքիր մոտեցումներ են ցուցաբերել նաև՝

- Ա.Բուսիգինը<sup>2</sup>, որը ձեռնարկատիրությունը համարում է տնտեսական գործունեության հատուկ տեսակ (շահույթի ստացմանն ուղղված նպատակային գործունեություն)՝ հիմնված սեփական նախաձեռնության, պատասխանատվության և ինովացիոն մտքի վրա,
- Ա.Կրուտիկը և Ա.Պիմենովան, որոնք շեշտը դնում են ձեռնարկատիրության աղբյուրների և նպատակների վրա: Ըստ նրանց սահմանման, ձեռնարկատիրություն է համարվում ամեն մի գործունեություն, որը սեփական միջոցների ներգրավման շնորհիվ եկամտի ստացման նպատակ է հետապնդում, կամ էլ սեփական կապիտալը գործի մեջ դնելու ճանապարհով միջնորդավորված մասնակցությունն այդպիսի գործունեությունում:<sup>3</sup>

Արդի շուկայական տնտեսության պայմաններում հանդիպում ենք նաև ձեռնարկատիրության վերաբերյալ այլ բնորոշումներ: Օրինակ, Շեյնինը գտնում է, որ ձեռնարկատիրությունը նպատակադրված, մտավոր գործունեություն է, որը ենթադ-

<sup>1</sup> Предпринимательство в конце XX века. М., 1992, էջ 24

<sup>2</sup> Бусыгин А.В. “Предпринимательство”, т.1. М., Интерпреск, 1994, էջ 14

<sup>3</sup> Օհանջանյան Ս., Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական կարգավորման խնդիրները Հայաստանում. /Սերժ Օհանջանյան/ Ե., Լիմուշ, 2010, էջ 50

րում է նախապես նպատակադրված խնդիրների լուծում, տնտեսական բարիքների արտադրություն:<sup>1</sup>

Հայաստանի Հանրապետությունում ձեռնարկատիրության բնորոշումն ու սահմանումն արտացոլվել է քաղաքացիական օրենսգրքում, համաձայն որի ձեռնարկատիրական գործունեություն է համարվում անձի ինքնուրույն, իր ռիսկով իրականացվող գործունեությունը, ինչի հիմնական նպատակը գույք օգտագործելուց, ապրանքների վաճառելուց, աշխատանքներ կատարելուց կամ ծառայություններ մատուցելուց շահույթ ստանալն է:<sup>2</sup>

Այնուհանդերձ ձեռնարկատիրության էության վերաբերյալ, մեր կարծիքով դասական ձևակերպումը տրված է Մ.Մեսկոնի կողմից: Ըստ նրա «ձեռնարկատիրությունը մի գործունեություն է, որն ուղղված է որոշակի արտադրատեսակի կամ ծառայության ստեղծման և իրացման ճանապարհով շահույթի ստացմանը»:<sup>3</sup>

Արտադրության տարբեր ոլորտներում և ճյուղերում ձեռնարկատիրությունն ունի որոշակի առանձնահատկություններ ու բնորոշ գծեր, որոնք իրարից տարբերվում են տնտեսության վարման բնույթով, եղանակներով և գործունեության ընթացքով: Սակայն, անկախ այդ ամենից, ընդհանուր առմամբ, շուկայական տնտեսության պայմաններում կիրառվում են ձեռնարկատիրության հետևյալ տեսակները.

- արտադրական,
- առևտրային,
- ֆինանսավարկային,
- ապահովագրական,
- միջնորդական:

Ձեռնարկատիրության նշված հինգ տեսակներն էլ իրենց մեջ ներառում են որոշակի տարբերիչ առանձնահատկություններ:<sup>4</sup>

Արտադրական ձեռնարկատիրությունը տնտեսական գործունեության տեսակ է, որտեղ իրականացվում է ապրանքների, ծառայությունների և տեղեկատվության ար-

<sup>1</sup> Шейнин Э.Я., Предпринимательство и бизнес, Ростов-на-Дону. Феникс, 2002, էջ 8-14

<sup>2</sup> Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրք, ՀՀ պտ 2003/05.0202.2003

<sup>3</sup> Мексон М.Х., Основы менеджмента. Пер. с англ.- М.: Дело, 1992

<sup>4</sup> Лапуста М.Г., Смакай Л.Г., Малое предпринимательство. Учебное пособие для ВУЗ-ов. ИНФРА-М., 1997, էջ 38

տադրությունը՝ շահույթ (եկամուտ) ստանալու ակնկալիքով: Այս տեսակն ամենատարածվածն է շուկայական տնտեսության պայմաններում: Արտադրական ձեռնարկատիրությունը ներառում է արդյունաբերական և գյուղատնտեսական արտադրանքի թողարկումը՝ ունենալով արտադրական և անձնական սպառման նշանակություն:

Արտադրական ձեռնարկատիրական գործունեության զարգացման աստիճանով է պայմանավորված երկրի սոցիալ-տնտեսական մակարդակը: Այդ տեսակն ամենառիսկայինն է տնտեսական գործունեության համակարգում, քանի որ նրանում կորուստների և վնասների հավանականությունը շատ մեծ է:

Առևտրային ձեռնարկատիրությունը կապված է ապրանքների ու ծառայությունների իրացման գործընթացի հետ, որտեղ նրանք կապ են ստեղծում արտադրողների և սպառողների միջև, ստանալով արտադրությունում ստեղծված շահույթի իրենց բաժինը: Առևտրային ձեռնարկատիրությունն իր մեջ ընդգրկում է ապրանքի հայթայթումը, դրա գնումը, տեղափոխումը, պահեստավորումը և վաճառքը: Այստեղ ձեռներեցը պետք է ուսումնասիրի շուկայական պահանջարկը, ձգտի հնարավորինս ցածր գնով ձեռք բերի ապրանքը և վաճառի ավելի բարձր գնով:

Ֆինանսական ձեռնարկատիրությունն առևտրային ձեռներեցության հատուկ տեսակ է, տեղի է ունենում արժույթի, արտարժույթի, արժեթղթերի և վարկային մյուս ռեսուրսների առք ու վաճառքի ժամանակ, որտեղ նրանց շահույթը ստացվում է գնման և իրացման, ինչպես նաև տոկոսների տարբերությունների հաշվին:

Ապահովագրական ձեռնարկատիրությունը դրսևորվում է գույքի, ունեցվածքի, կյանքի, առողջության և մի շարք այլ անորոշ ռիսկային արդյունքների ապահովագրման դեպքում:

Միջնորդական ձեռնարկատիրությունը ծառայությունների մատուցում է տնտեսվարող այլ սուբյեկտներին գործարարության և այլ բնույթի աշխատանքները կազմակերպելիս:

Ինչպես նկատում ենք, ձեռնարկատիրության նշված բոլոր տեսակներն ուղղված են շահույթի ստացմանը:

Ձեռնարկատիրական գործունեությունը բացի տեսակներից բաժանվում է հետևյալ երեք խումբ հիմնական ձևերի.

1. կազմակերպա-տնտեսական
2. սոցիալ-տնտեսական
3. կազմակերպա-իրավական:

Ձեռնարկատիրական գործունեության կազմակերպա-տնտեսական ձևերը դասակարգելիս հիմք են ընդունում արտադրության միջոցների հանդեպ սեփականության ձևերը և դրանց վրա հիմնված ձեռնարկատիրության կազմակերպական տեսակը, որտեղ առանձնացվում են ձեռնարկատիրական գործունեության կազմակերպական-տնտեսական երեք տեսակներ.

- ա) անհատական ձեռնարկատիրություն,
- բ) ընկերակցություն կամ գործընկերություն,
- գ) միավորումներ (կորպորացիա):

Վերը նշված կամ այս ձևի կազմավորման հիմքում առկա են հետևյալ հանգամանքները.<sup>1</sup>

1. գործարքային ծախսերի կրճատումը,
2. գիտատեխնիկական նորությունների կիրառման հնարավորությունը,
3. արտադրության ընդլայնումը՝ կապված ֆինանսական հնարավորությունների հետ,
4. ռիսկի գնալու սահմանները,
5. մասնագիտական առավելությունները,
6. կառավարման արդյունավետության բարձրացման անհրաժեշտությունը,
7. բազմազանեցման (դիվերսիֆիկացման) հնարավորությունը՝ գործունեության տարբեր ոլորտների ընդգրկման առումով,
8. լոբբինգի միջոցով սեփական շահերի պաշտպանությունը,
9. «գործատեր-գործակալ» արդյունավետ փոխհարաբերության կարգավորումը:

Ձեռնարկատիրական գործունեության վերը նշված ձևերը ներկայացվում են մասնավոր և հասարակական ձեռնարկատիրության տեսքով, որտեղ մասնավոր ձեռնարկատիրության խմբին են դասվում անհատական ձեռնարկատիրությունը և ընկերակցությունը, իսկ հասարակականինը՝ իրավաբանական անձիք:

<sup>1</sup> Աղաջանյան Յ., Տնտեսագիտության տեսություն: Ուս. ձեռնարկ, Մաս 1.- Եր. Չեղինակային հրատ., 2009, էջ 409-410

Անհատական ձեռնարկատիրությունը տնտեսավարման ձև է, որտեղ ձեռներեցը շահավետ գործունեություն է իրականացնում սեփական արտադրության գործոնների միջոցով՝ կրելով լիակատար պատասխանատվություն դրա արդյունքների համար: Որպես կանոն, անհատական ձեռնարկատիրությունը քանակապես գերազանցում է ձեռնարկատիրական գործունեության ընդհանուր կազմակերպման մեջ, որոնց վերաբերյալ Հայաստանի Հանրապետության տվյալները բերվում են աղյուսակ 1.1.-ում:

Ըստ ՓՄՁ ԶԱԿ հիմնադրամի կողմից հրատարակված «Փոքր և միջին ձեռնարկատիրությունը բնութագրող հիմնական ցուցանիշները ՀՀ-ում 2010-2012թթ.» հաշվետվության, 2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Հայաստանում գործունեություն է իրականացրել 73925 սուբյեկտ, այդ թվում՝ Արարատի մարզում՝ 8157, որը 2010-ի համեմատ աճել է շուրջ 25%-ով:

### Աղյուսակ 1.1

**Հայաստանի Հանրապետությունում գրանցված  
անհատ ձեռնարկատերերի և իրավաբանական անձանց վերաբերյալ  
ցուցանիշները մարզային կտրվածքով 2013թ. հունվարի 1-ի դրությամբ<sup>1</sup>**

	Անհատ ձեռներեցներ		Իրավաբանական անձիք		Ընդամենը	
	քանակ	%	քանակ	%	քանակ	%
ք. Երևան	30209	41.0	31647	53.4	61857	46.5
Ընդամենը մարզեր	43484	59.0	27583	46.6	71066	53.5
Արագածոտն	2949	4.0	1647	2.8	4596	3.5
Արարատ	5394	7.3	2763	4.7	8157	6.1
Արմավիր	6187	8.4	2597	4.4	8784	6.6
Գեղարքունիք	3369	4.6	3334	5.6	6703	5.0
Լոռի	5904	8.0	4248	7.2	10152	7.6
Կոտայք	3223	8.4	4522	7.6	10745	8.1
Շիրակ	4046	5.5	2899	4.9	6945	5.2
Սյունիք	3872	5.3	2872	4.8	6744	5.1

<sup>1</sup> ՀՀ Արմավիրի մարզի 2015-2018թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիր, Արմավիր, 2014, էջ 40

Վայոց Ձոր	1841	2.5	795	1.3	2636	2.0
Տավուշ	3698	5.0	1906	3.2	5604	4.2
<b>Ընդամենը ՀՀ</b>	<b>73693</b>	<b>100</b>	<b>59230</b>	<b>100</b>	<b>132923</b>	<b>100</b>

Համաձայն Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի հրատարակած հաշվետվության 2013թ-ին ՓՄՁ պետական աջակցություն է տրամադրվել հանրապետությունում 17243 գործող և սկսնակ ՓՄՁ (Արարատի մարզում՝ 1529): Ֆինանսական աջակցություն են ստացել առավել իրատեսական գործարար ծրագրեր ներկայացրած 224 սկսնակ գործարար (10-ը Արարատի մարզից), որոնց միջին գումարը կազմել է 3.6 մլն. դրամ:

Ձեռնարկատիրական գործունեության սոցիալ-տնտեսական ձևերը բացի սեփականության սուբյեկտից բնորոշում են նաև տնտեսավարման սուբյեկտները, համաձայն որի սեփականության ձևով պայմանավորված իրականացվում են անհատական, կոլեկտիվ և պետական ձեռներեցություն:

Անհատական ձեռնարկատիրական գործունեությունն իրականացվում է կամ սեփական, կամ էլ վարձակալած արտադրության միջոցների հիման վրա՝ արդյունքը պատկանում է մեկ անձի:

Կոլեկտիվ ձեռնարկատիրությունն իրականացվում է խմբակային սեփականության հիմքի վրա, արդյունքները պատկանում են այդ խմբի անդամներին, որոնց բաշխումը կատարվում է ելնելով տարբեր չափանիշներից՝ կատարված ներդրումներից, աշխատանքի ծավալից և մասնակցության այլ ցուցանիշներից: Ներկայումս կոլեկտիվ ձեռներեցության տարածված ձևերից են բաժնետիրական ընկերությունները, արտադրական կոոպերատիվները, գյուղացիական տնտեսությունները, սահմանափակ պատասխանատվության ընկերությունները և այլն:

Պետական ձեռնարկատիրությունն իրականացվում է արտադրության միջոցների պետական սեփականության բազայի վրա, որի դեպքում դրանք ամրացվում են առանձին կազմակերպություններին տնտեսավարման իրավունքով՝ տիրապետման, օգտագործման և կառավարման սկզբունքով: Այս դեպքում պետության կողմից սահմանված «խաղի կանոնները» տարածվում են բոլորի վրա: Բացի դրանից պետական ձեռնարկությունները մի կողմից հանդես են գալիս որպես պետական կենտրոնացված

կառավարման օբյեկտ, իսկ մյուս կողմից՝ շուկայական հարաբերությունների ինքնուրույն սուբյեկտ:

Կազմակերպական-իրավական ձեռնարկատիրության ձևերը դասակարգվում են նաև տարբեր սկզբունքներով: Այսպես՝

Ըստ գործունեության բնույթի՝ արտադրական և ոչ արտադրական: Արտադրականի մեջ մտնում են արտադրությունը, առևտուրը, բանկային գործը, արտադրական ծառայությունների ոլորտը և այլն, որոնք հետապնդում են շահույթի ստացում, իսկ ոչ արտադրականն ընդգրկում է կրթությունը, մշակույթը, իրավաբանական, բարեգործական հիմնարկները, որոնք շահույթ չեն հետապնդում:

Ըստ գործունեության ոլորտի՝ դասակարգվում են արդյունաբերական, գյուղատնտեսական, շինարարական, տրանսպորտի և կապի, բանկային, միջնորդական, գովազդային և այլն:

Ըստ արտադրության գործոնների՝ լինում են աշխատատար, կապիտալատար, գիտատար, նյութատար, բնապահպանական ծախսեր պահանջող և այլ ձեռնարկատիրություն:

Ըստ գործունեության մակարդակի՝ լինում են տեղական, տարածաշրջանային, ազգային և միջազգային տեսակի ձեռնարկատիրություն:

Ըստ շուկայական մրցակցության աստիճանի՝ լինում են ազատ մրցակցային, օլիգոպոլիստական և մենաշնորհային:

Ըստ թողարկվող արտադրանքի ծավալի՝ լինում են փոքրաքանակ, սերիական և զանգվածային ձեռնարկատիրություններ:

Այս վերջինից ելնելով ձեռնարկատիրական գործունեության մեջ դրանք բաժանվում են երեք խմբի՝ փոքր, միջին և խոշոր:

Արդի շուկայական տնտեսության պայմաններում փոքր և միջին ձեռներեցությունը դարձել է յուրաքանչյուր երկրի տնտեսության առաջատար հատվածներից, որոնք կարևոր դեր են խաղում ազգային տնտեսության կայունության ապահովման և հետագա զարգացման գործում: Փոքր ձեռներեցությունը արևմտյան երկրներում կազմում է տնտեսության խոշոր հատվածներից մեկը, որտեղ աշխատում են երկրի



գբաղվածների կեսից ավելին: Փոքր ձեռնարկությունների բաժինը տնտեսավարող սուբյեկտների ընդհանուր քանակում կազմում է 70-90%:<sup>1</sup>

Պետք է նշել, որ ներկայումս չկա միասնական մոտեցում փոքր ձեռնարկությունների բնորոշմանը: Որպես հիմնական չափանիշ է ընդունվում ներգրավված աշխատողների թվաքանակը: Օրինակ, ԱՄՆ-ում փոքր ձեռնարկությունների շարքին են դասվում մինչև 500 աշխատող ունեցող տնտեսավարող սուբյեկտները կամ տնտեսական միավորները, Ճապոնիայում՝ մինչև 300, Սկանդինավյան երկրներում և Ռուսաստանում՝ մինչև 100:<sup>2</sup> Հայաստանի Հանրապետությունում փոքր է կոչվում այն ձեռնարկությունը, որն ունի ոչ ավելի քան, արդյունաբերության և շինարարության ոլորտում՝ 200, նյութական արտադրության մյուս ճյուղերում՝ 50, գիտության բնագավառում՝ 50, առևտրում և այլ ոլորտներում՝ 15 աշխատատեղ:<sup>3</sup> «ՀՀ քաղաքացիական օրենսգրքում», որը գործողության մեջ է դրվել 1999 թվականին, փոքր ձեռնարկությունը չի ներկայացված որպես ձեռնարկատիրության կազմակերպական-իրավական առանձին տեսակ: Ներկայումս փոքր ձեռնարկատիրությանն են վերագրում անհատական (միանձնյա) ձեռնարկությունները և գյուղացիական տնտեսությունները:

Փոքր ձեռնարկատիրությունը շուկայական տնտեսության առանցք է, որի նշանակությունն ավելի է բարձրանում շուկայական հարաբերություններին անցման շրջանում, քանի որ դա հնարավորություն է տալիս ձևավորել շուկայական միջավայր, տնտեսական գործունեության մեջ ներգրավել բնակչության աշխատանքային, նյութական և դրամական ռեսուրսները, կրճատել գործազրկությունը, մեղմել սոցիալական լարվածությունը՝ մարդկանց համար ապահովելով աշխատատեղեր ու եկամուտներ:

Ի տարբերություն փոքր ձեռնարկատիրության միջինն ունի խոշորացման միտում, քանի որ դիմակայում է մրցակցությանը, շուկայում գրավում է իր տեղը և հաճախ էլ ձգտում են մենաշնորհի: Սակայն դրանք ունենում են ցածր ճկունության աստիճան և սնանկանալիս դուրս են գալիս այդ շուկայից:

<sup>1</sup> Տնտեսագիտության տեսություն (ուսումնական ձեռնարկ): Գ.Կիրակոսյանի և Ի.Խլղաթյանի խմբ., Եր., «Տնտեսագետ», 2009, էջ 433

<sup>2</sup> Նույն տեղը, էջ 434

<sup>3</sup> ՀՀ քաղաքացիական օրենսգրք, ընդունված 1998թ. մայիսի 5-ին, 2003թ. սեպտեմբերի 1-ի դրությամբ կատարված փոփոխություններով և լրացումներով

Այնուհանդերձ, փոքր ձեռնարկատիրությունը նույնպես խոցելի է, քանի որ դրանց մոտ ցածր է ռիսկի աստիճանը, նրանք դժվարությամբ են կիրառում նոր տեխնիկա և առաջավոր տեխնոլոգիա, հեշտ չեն ձեռք բերում վարկեր, չեն կարողանում օգտվել լիզինգային ծառայություններից և անշարժ գույք ու աշխատողներ վարձակալելուց, աշխատանքներն իրականացնում են հիմնականում ընտանիքի անդամների միջոցով, գրեթե բացակայում է մասնագիտացման և արհեստավարժության խորացումը, նույն աշխատողը կատարում է մի քանի տեսակի գործողություն և այլն: Այս ամենի պատճառով նվազում է արտադրության ծավալներն ընդլայնելու հնարավորությունը, չի բարձրանում աշխատանքի արտադրողականությունը և արտադրության գործոնների օգտագործման արդյունավետությունը, չեն բարելավվում մնացած որակական և ֆինանսատնտեսական ցուցանիշները: Փոքր ձեռներեցության զարգացմանն առավել խոչընդոտում են անհատ ձեռներեցների և գյուղացիական տնտեսություն վարողների ցածր իրազեկությունը հարկային ու մյուս ինստիտուցիոնալ օրենքների, իրավական դաշտի, նորմատիվային ակտերի վիճակի և փոփոխության վերաբերյալ:

## **1.2. Ագրարային ոլորտի ձեռնարկատիրության առանձնահատկությունները և բնորոշ գծերը**

Ձեռնարկատիրությունը լինելով շուկայական տնտեսավարման հիմնական բաղադրիչներից մեկը, արտադրության առանցքային գործոնը, միատեսակ չէ դրսևորվում տարբեր երկրներում և նույն երկրի տնտեսության առանձին ոլորտներում ու ճյուղերում: Կախված երկրի զարգացման աստիճանից, տնտեսության կարգավորման պետության միջամտության չափից, տարածաշրջանային, ազգային, սոցիալ-տնտեսական առանձնահատկությունից և այլ չափանիշներից ձեռնարկատիրությունն իրականացվում է տարաբնույթ ձևերով, մեթոդներով ու տնտեսական գործիքներով: Ձեռնարկատիրական գործունեությունը միատեսակ չի կարող լինել նույն երկրի տնտեսության տարբեր ճյուղերում, քանի որ յուրաքանչյուր ոլորտ ունի իր առանձնա-

հատկությունները, բնորոշ գծերը, արտադրության գործընթացին արտադրության գործոնների (հող, կապիտալ, աշխատանք) մասնակցության չափերն արդյունքի ստեղծման ու արժեքի ձևավորման հարցում:

Գյուղատնտեսությունն այն ոլորտն է, որն ավելի շատ է կախված բնակլիմայական և մարդկային գործոնների ազդեցությունից, ինչի համար էլ այս ոլորտում արտադրության արդյունքների մակարդակների տատանումները շատ նշանակալից են լինում, քան ազգային տնտեսության մյուս ճյուղերում: Համաաշխարհային փորձը վկայում է, որ գյուղատնտեսության մեջ առաջավոր մեթոդների և տեխնոլոգիաների օգտագործումը բերում է տնտեսվարող սուբյեկտների քանակի նվազեցմանը, մեկ տնտեսության հաշվով հողատարածքների ընդլայնմանը, աշխատողների թվաքանակի կրճատմանը և հետևաբար գյուղական բնակավայրերում գործազրկության մակարդակի բարձրացմանը:

Առայժմ Հայաստանի Հանրապետությունում նման օրինաչափությունները չունեն ցայտուն դրսևորումներ, կապված գյուղատնտեսության ենթակառուցվածքների թերզարգացման, հողի շուկայի անկատարության, հողատարածքների կտրտվածության, փոքր չափերի և մի շարք լուծում պահանջող հարցերի հետ:

Այս ամենը խոչընդոտում է ագրարային ոլորտի հետագա զարգացմանը, ինչպես նաև ձեռնարկատիրական գործունեության արմատավորմանը: «Եթե բիզնեսի մյուս ոլորտներում գործարարը տարբեր պատճառներով տանուլ է տալիս, ապա վատագույն դեպքում սնանկանում է ու հեռանում բիզնեսից: Գյուղատնտեսության մեջ այդ երևույթը, բացի տնտեսական հետևանքից, նաև սոցիալ-ժողովրդական լուրջ հիմնախնդիրներ է ստեղծում: Այս ոլորտում ցածր եկամտաբերությանը և տարբեր ռիսկերի ազդեցությամբ պայմանավորված վնասները գյուղացուն ուղղակիորեն հարկադրում են հեռանալ գյուղից: Ուստի, բնավ պատահական չէ, որ վերջին երեք տասնամյակների ընթացքում շատ երկրներում ընդունվում է գյուղատնտեսության բազմաֆունկցիոնալության սկզբունքը և պետության ագրարային քաղաքականությունը համապատասխանեցվում այդ սկզբունքի պահանջներին: Այսինքն, գյուղատնտեսությունը դիտարկվում է ոչ թե որպես սովորական նյութական արտադրություն, այլ առանձնահատուկ ոլորտ, որի գործառույթը չի սահմանափակվում միայն գյուղա-

տնտեսական արտադրանքի արտադրությամբ: Այդ կարևոր առաքելության հետ միասին, գյուղատնտեսության կայուն զարգացումն ապահովում է գյուղական տարածքների զարգացում, գյուղական լանդշաֆտների և ռեկրացիոն ռեսուրսների, գյուղի՝ որպես ազգային դիմագծի, կենցաղի, ավանդույթների ու ծեսերի սկզբնական կրողի պահպանությունն ու զարգացումը: Գյուղատնտեսության կարևորության այսպիսի ընկալումով Հայաստանում հետևողական աշխատանքներ են կատարվում ագրարային բարեփոխումների խորացման և գյուղական համայնքների զարգացման ուղղությամբ»:<sup>1</sup> Գյուղատնտեսության և դրա բազայի վրա ագրովերամշակման զարգացման գործում էական դերակատարություն կարող է ունենալ ոլորտում ձեռնարկատիրական գործունեության համակողմանի ընդլայնումը և խորացումը:

Սակայն պետք է ընդունել այն փաստը, որ ձեռնարկատիրությունը, որպես արտադրության կազմակերպման եղանակ, այստեղ հանդիպում է մեծ խոչընդոտների՝ կապված գյուղատնտեսական արտադրության առանձնահատկությունների և բնորոշ գծերի հետ, որոնք պետք է հաշվի առնի յուրաքանչյուր տնտեսական արտադրող, առավել ևս՝ ձեռներեցը:

Գյուղատնտեսության առանձնահատկություններն են.

1. Գյուղատնտեսական արտադրության հիմնական գործոնը հանդիսանում է հողը, որը, լինելով բնության բարիք, կրում է սահմանափակ բնույթ, ինչի հետևանքով շուկայում գյուղատնտեսական մթերքների առաջարկի առանձնականությունը թույլ է: Հողը, սահմանափակությունից բացի, նաև անփոխարինելի ռեսուրս է, որի քանակությունը հնարավոր չէ փոխել, ինչի համար էլ հողի առաջարկը հասարակության մասշտաբով բացարձակապես ոչ առաձգական է: Ի տարբերություն մյուս ռեսուրսների, եթե հողի նկատմամբ պահանջարկը մեծանում է, ապա հնարավոր չէ մեծացնել դրա առաջարկը: Օրինակ, եթե կապիտալի նկատմամբ պահանջարկը մեծանում է, ապա ռեսուրսների այլընտրանքային օգտագործման ուղղությունների փոփոխության և լրացուցիչ միջոցների ներգրավման ճանապարհով ապահովվում է դրանց անհրաժեշտ արտադրությունը: Ինչ վերաբերում է հողային ռեսուրսներին, ապա եթե դրանց նկատմամբ պահանջարկը մեծանում է, ապա միևնույն է, առաջարկը չի փոխվում:

<sup>1</sup> Ավետիսյան Ս., Հայաստանի գյուղատնտեսությունը և ագրովերամշակումը, Եր.: «Լիմոն», 2010, էջ 27

Բացի այդ, հողը հնարավոր չէ տեղափոխել, ինչը սահմանափակում է դրա օգտագործման այլընտրանքը:<sup>1</sup>

Չողի հիմնական հատկությունը պայմանավորված է նրա բերրիությամբ: Բերրիությունը դա սննդարար նյութերի կուտակման և բույսերին փոխանցելու հողի հատկությունն է:<sup>2</sup>

Չողի բնական բերրիության տարբեր աստիճանների պատճառով ձևավորվում է ռենտային հարաբերություններ հողի սեփականատիրոջ, հողի վարձակալողի, վարձու աշխատողների և պետական ու տեղական իշխանության մարմինների միջև արտադրությունից ստացված արդյունքի բաշխման հարցում: Դա ինքնըստինքյան կարևոր նշանակություն է ստանում ձեռնարկատիրական գործունեության իրականացման ժամանակ: Տվյալ հարաբերությունների համակարգում առանցքային օղակը համարվում է վարձակալողը, եթե ինքը չի հանդիսանում հողասեփականատեր, իսկ եթե հողի սեփականատերը և վարձակալողը միավորվում են մեկ անձի մեջ, ապա այդ դեպքում սեփականատեր-ձեռներեցն է կարգավորում նշված հարաբերությունները: Ավելացնենք, որ հողի բնական բերրիության և իրացման շուկաների հեռավորությունների տարբերությունների հիմքի վրա ձևավորված ռենտան տնտեսագիտության տեսությունը կոչում է դիֆերենցիալ (տարբերակված) ռենտա 1-ին:

Չողի սահմանափակությունը պահանջում է, գյուղատնտեսական մթերքների հանդեպ կարիքն ապահովելու համար, մշակել նաև միջին և ցածր բնական բերրիություն ունեցող հողերը, որտեղ անհրաժեշտ է կիրառել արտադրության ինտենսիվացում՝ լրացուցիչ կապիտալ ներդրումների, աշխատանքի կիրառման, ոռոգման և այլ ճանապարհներով: Այս դեպքում ձեռներեցից պահանջվում է ավելի մեծ հմտություն, գիտելիքներ, ձիրք, որպեսզի փոխհատուցի բնական բերրիության տարբերությունը, ունենա նորմալ շահույթ (եկամուտ) և վերարտադրության իրականացման հնարավորություն: Նման ճանապարհով ստացված լրացուցիչ եկամուտը կոչվում է դիֆերենցիալ ռենտա 2-րդ և ամբողջությամբ պատկանում է հողի վարձակալողին (ձեռներեցին)՝ որպես լրացուցիչ կապիտալ ներդրողի:

<sup>1</sup> Աղաջանյան Յ., Տնտեսագիտության տեսություն: Ուս. ձեռնարկ,- մաս 1: Եր., Չեղինակային հրատ., 2009, էջ 385

<sup>2</sup> Серова Е., Аграрная экономика, М., 1999, էջ 188

Վարձակալը, օգտագործելով հողը, ստեղծում է բարիք, որի իրացումից ստանում է շահույթ: Հողի օգտագործման դիմաց տրվող ռենտայի չափը սովորաբար որոշվում է դրա, որպես արտադրության գործոնի, սահմանային արտադրողականությանը: Հողասեփականատիրոջ համար ռենտան եկամուտ է, իսկ վարձակալողի (հողօգտագործողի) համար՝ ծախս է: Հողի վարձակալողը ձեռներեցն է, որն իրականացնելով արտադրություն, ստանում է գյուղատնտեսական արտադրանք: Դրա իրացումից ստացված հասույթից հանելով ընդհանուր ծախսերը, ստացվում է տնտեսական շահույթը: Ձեռներեցի կողմից վճարած ռենտան նույնպես մտնում է ընդհանուր ծախսերի մեջ: Այս պարագայում գոյանում է նաև տնտեսական ռենտա, որը վճարվում է հողի և մյուս բնական ռեսուրսների (երբ դրանց քանակությունը խիստ սահմանափակ է) օգտագործման դիմաց:<sup>1</sup>

2. Ագրարային ոլորտում գործում են մրցակցային բազմաթիվ սուբյեկտներ՝ անհատական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսություններ, ագարակային (ֆերմերային) տնտեսություններ, կոոպերատիվներ, նույնիսկ պետական ձեռնարկություններ, որի շնորհիվ ոլորտը վեր է ածվում ազատ մրցակցային շուկաների: Գյուղատնտեսական կատարյալ մրցակցային շուկաներում վաճառողները և գնորդները շուկա չեն կարող մտնել գին ձևավորելու ակնկալիքով, այլ նրանք հանդես են գալիս որպես գին վերցնողներ:

3. Ագրարային ոլորտում ձեռնարկատիրության իրականացման առանձնահատկությունն արտահայտվում է նաև արտադրության կազմակերպման մոտեցումներով: Այստեղ խնդիրն այն է, որ ձեռներեցը ոչ միայն պետք է ուսումնասիրի շուկան, այսինքն լուծի ո՞ւմ համար արտադրի հարցը, այլ նաև տիրապետի գյուղատնտեսական արտադրության նրբություններին, պահանջներին, հասկանա տեխնոլոգիան, արտադրանքի պահպանումը, պահեստավորումը, փաթեթավորումը և իրացման տեխնիկան:

Բնակլիմայական առանձնահատկություններով են պայմանավորված նաև գյուղատնտեսության սեզոնայնությունը, ինչը բերում է աշխատանքային ռեսուրսների և գյուղատնտեսական տեխնիկայի ոչ հավասարաչափ օգտագործմանը ամբողջ տար-

<sup>1</sup> Макконелл К., Брюс С., Экономика, Т. 2, М., 1992, էջ 176

վա ընթացքում: Հետևաբար յուրաքանչյուր ձեռներեց կծգտի կրճատել այդ գործոնների (աշխատանք և կապիտալ) պարապուրդի ժամկետը, առավել արդյունավետ օգտագործելով բարձրացնի դրանց արդյունավետության աստիճանը: Առավել հմուտ գյուղատնտես-ձեռներեցները այդ բացը լրացնում են սեզոնայնության կրճատման միջոցով՝ կազմակերպելով ջերմոցային տնտեսություններ, գյուղմթերքների վերամշակման արտադրություններ և այլն:

Գյուղատնտեսական արտադրության սեզոնայնությունն առաջացնում է մի շարք հիմնախնդիրներ, որոնք առնչվում են գյուղական բնակավայրերում աշխատուժի վերարտադրության, աշխատողների զբաղվածության, նրանց աշխատանքի կիրառման ոլորտներին, աշխատանքի վարձատրության և գյուղական բնակիչների եկամուտների անհրաժեշտ մակարդակի ապահովման հետ: Սովորաբար նման հարցերը լուծվում են մի շարք ուղղություններով: Սեզոնայնությունը բացասաբար է ազդում նաև գյուղատնտեսության արտադրության միջոցների և հատկապես գյուղտեխնիկայի ու սարքավորումների ֆոնդահատույցի ցուցանիշների վրա: Այդ պատճառով էլ այստեղ բարձր է լինում արտադրության հիմնական միջոցների և կապիտալի ամորտիզացիոն նորման, որը բերում է արտադրանքի ինքնարժեքի մեծացմանը, հետևաբար նաև նվազեցնելով գյուղատնտեսությունից ստացվող եկամտի չափը և շահութաբերության աստիճանը:

4. Գյուղատնտեսական արտադրության կարևոր առանձնահատկություններից է նաև այն, որ նրա մի շարք ճյուղերում, մասնավորապես բուսաբուծության առանձին ենթաճյուղերում (պտղի, խաղողի, բանջարանաբոստանային մշակաբույսերի և այլն), զգալի ժամկետային խզում գոյություն ունի աշխատանքի ծախսումների և արտադրանքի ստացման ժամանակի միջև՝ աշխատանքները կատարվում են գրեթե ամբողջ տարվա ընթացքում, իսկ արդյունքը ստացվում է պարբերաբար, որոշակի պարբերաշրջանների ավարտից հետո կամ էլ տարեվերջին: Գյուղատնտեսության մեջ ավելի մեծ չափով, քան նյութական արտադրության մյուս ճյուղերում վերարտադրային ֆոնդերն ապահովվում են ի հաշիվ սեփական արտադրանքի հաշվին (սերմեր, մատղաշ, կերեր և այլն): Այս երևույթն անհրաժեշտ է հաշվի առնել արտադրանքի բաշխման ժամանակ՝ առաջին հերթին հատկացնել վերարտադրությունը պայմանավորող ֆոն-

դերի ձևավորմանը, որպեսզի արտադրական հաջորդ պարբերաշրջանի համար ստեղծվեն անհրաժեշտ նյութական պաշարներ:

5. Ձեռնարկատիրական գործունեության իրականացման գործում բացառիկ նշանակություն ունի ձեռներեցի կողմից իրականացված ներդրումների արդյունավետության և դրանց ետզնման (տնտեսական լազի\*) հարցը: Ձեռներեցը միշտ էլ ձգտում է իր ֆինանսական միջոցները կիրառել այն բնագավառում, որտեղ դրանց ետզնումը կկատարվի ավելի արագ: Իսկ այդ հարցում գյուղատնտեսությունը բոլորովին մխիթարական չէ, քանի որ տնտեսական պարբերաշրջաններն այստեղ բավականին մեծ են, ինչը չի խրախուսում ինվեստիցիաների և կապիտալ ներդրումների իրականացմանը:

Ինվեստիցիաները տնտեսության զարգացման խթանման հիմնական լծակներից են, որի միջոցով ապահովվում է վերարտադրական պարբերաշրջանը՝ նպատակ ունենալով խրախուսել այն արտադրությունները, որոնք անհրաժեշտ ռեսուրսների և իրացման շուկաների առումներով հեռանկարային են, խոստանում են բարձր եկամտաբերություն, ցածր ռիսկայնության պայմաններում:<sup>2</sup> Գյուղատնտեսության ոլորտը, հատկապես, երբ այն գտնվում է անցման շրջանում, միշտ էլ կարիք ունի ինվեստիցիաների, ինչպես տեղական, այնպես էլ օտարերկրյա ներդրողների կողմից, քանզի դրանց բացակայության պայմաններում հնարավոր չէ ոլորտում իրականացնել արագ բարեփոխումներ և ակնկալել մեծ արդյունքներ:

Անցումային շրջանի տնտեսական վերափոխումների արդյունավետությունը խիստ կերպով կախված է ներդրումների ծավալներից, ինչի համար անհրաժեշտ է մշակել և գյուղատնտեսության մեջ կիրառել ինվեստիցիաների ներգրավման ու դրանց կանոնակարգման ամբողջական ծրագիր:

Ինվեստիցիոն գործունեության ռազմավարության իրականացման գործում էական տեղ են զբաղեցնում միջոցների ներգրավման հնարավորությունների գնահատումը և կանխատեսումը ինչպես ամբողջ հանրապետության, այնպես էլ առանձին մարզերի կտրվածքով: Դրանք պետք է համաձայնացված լինեն հանրապետական

\* Տնտեսական լազը կապիտալ ներդրումների ետզնման ժամկետն է

<sup>2</sup> Անանյան Ա., Ներդրումային գործընթացների ակտիվացման հիմնական մոտեցումները: ԿՐԶ ժողովածու 5, Եր., 2005, էջ 46; Ղարիբյան Ա., «Ինվեստիցիոն» կատեգորիայի մի քանի առանձնահատկությունները միասին, «Տեղեկատվական տեխնոլոգիաներ և կառավարում», թիվ 4-1, 2004, էջ 154-159



ինվեստիցիոն քաղաքականության հետ: Առանձին մարզերում դրանց ներգրավումը պետք է գնահատվի վերլուծության ենթարկելով միջմարզային զարգացման անհամաչափության պատճառները և մարզերի վարկանիշների դասակարգումը՝ հաշվի առնելով յուրաքանչյուր տարածաշրջանի տեղն ու նշանակությունը գյուղատնտեսության ոլորտում:

Գյուղատնտեսության մեջ տնտեսական միջոցների շրջապտույտն ունի ավելի երկար տևողություն, որը պայմանավորված է բուն արտադրության գործընթացի և աշխատանքային գործունեության ժամկետների զգալի տարբերություններով:

Այստեղ արտադրության արդյունքներն էականորեն տարբերվում են տարիների կտրվածքով՝ պայմանավորված բնակլիմայական, եղանակային և մի շարք այլ գործոնների առկայությամբ: Դրա համար վերարտադրության ռիսկիկության ապահովման համար անչափ կարևորվում է մշտական պահուստային ֆոնդերի ստեղծումը, ապահովագրական պաշարների գոյացումը՝ եղանակային չնախատեսված դեպքերի համար: Դա հատկապես խիստ անհրաժեշտ է անասնապահության ճյուղում:

Գյուղատնտեսական ռիսկերի ապահովագրությունը գույքային ապահովագրության տեսակներից մեկն է և ներառում է.

- գյուղատնտեսական մշակաբույսերի, բերքի և բազմամյա տնկիների ապահովագրություն,
- գյուղատնտեսական կենդանիների ապահովագրություն,
- գյուղատնտեսական կազմակերպությունների և ֆերմերային տնտեսությունների գույքի (ունեցվածքի) ապահովագրություն,
- գյուղատնտեսության հետ կապված այլ ռիսկերի ապահովագրություն:<sup>1</sup>

Պետք է նշել, որ գույքի ապահովագրությունը, լինելով արտադրության արդյունքների ստացման երաշխավորության կարևոր գործոն, ձեռնարկատիրական գործունեության տեսանկյունից ունի երկակի նշանակություն: Մի կողմից դա հուսադրում է ձեռներեցին արտադրությունից չնախատեսված կորստի փոխհատուցում, բայց մյուս կողմից բերում է արտադրական ծախքերի արհեստական մեծացմանը՝ կապված ապահովագրական ֆոնդերի ձևավորման համար մասհանումների իրականացման

<sup>1</sup> Ապահովագրական գործ (ուս. ձեռնարկ) Ա.Շուղարյանի և Կ.Աբգարյանի խմբ., Եր., «Տնտեսագետ», 2007, էջ 210

հետ: Դրանք պետք է հաշվի առնվեն յուրաքանչյուր ձեռներեցի կողմից տնտեսական գործունեություն իրականացնելիս:

Գյուղատնտեսական արտադրության առանձնահատկություններից է նաև այն, որ ոլորտում գործող տնտեսությունների մասշտաբները շատ փոքր են և մեր հանրապետությունում այն ձևավորված է հիմնական մեկ ընտանիքի, նույնիսկ մեկ ծխական ընտանիքի շրջանակներում: Դա դժվարեցնում է գյուղատնտեսական արտադրության մեքենայացմանը, ոռոգման իրականացմանը, հիվանդությունների դեմ միջոցառումների կատարմանը և ընդհանրապես, ինտենսիվ արտադրության կազմակերպմանը, քանի որ փոքր հողակտորների, նրանց ցրվածության և ձեռքի աշխատանքի պրիմիտիվ գործիքների միջոցով գրեթե անհնարին է արդյունավետ ապրանքային արտադրության կազմակերպումը: Ստեղծված իրավիճակի հիմնական պատճառներից մեկը ժամանակին թույլ տրված սխալ ապապետականացումը և մասնավորեցումն է: Հայտնի է, որ շուկայական տնտեսավարմանն անցումը պահանջում է այնպիսի նախադրյալներ (ռացիոնալ ապապետականացում, սեփականաշնորհում, տնտեսական ազատություն, պետական միջամտության սահմանափակում և այլն), որոնք հնարավորություն կտան սահուն կերպով պլանային վարչատնտեսական համակարգից տեղափոխվել շուկայական հարաբերություններին: Համաշխարհային փորձը վկայում է, որ պետական միջոցների մասնավորեցումը, որի գործընթացը սկսվեց XX դարի 70-90-ական թվականներին, համընդհանուր տարածում ստացավ Եվրոպայում, որովհետև պետական սեփականությունը չբերեց սպասվելիք արդյունքներ:<sup>1</sup> Սեփականաշնորհումը չունեւ միասնական մոտեցումներ և կիրառման մեթոդներ: Օրինակ, Գերմանիայում գործում էր առք ու վաճառքի սկզբունքը:

Ռումինիայում պետական միջոցների 30%-ը բաշխվեց անվճար, մնացածը՝ վճարման սկզբունքով, Լիտվայում իրականացվեց աճուրդով՝ բաժնետոմսերի բաց բաժանորդագրումով: Ռուսաստանի Դաշնությունում իրականացվեց վաուչերների միջոցով:

Ընդհանուր առմամբ, միջազգային պրակտիկայում սեփականաշնորհումն իրականացվում է երեք տարբերակով.

<sup>1</sup> Борисов Е.Ф., Экономическая теория, Юрист, 1997, էջ 97

- պետական սեփականությունը վերջին հաշվով դառնում է մասնավոր սեփականություն,
- առանձին անձինք ձեռք են բերում պետական բաժնետոմսեր և դառնում բաժնետիրական ընկերության անդամ,
- պետական բաժնետոմսերը ձեռք են բերում մասնավոր կորպորացիաները:

Հայաստանի Հանրապետությունում պետական միջոցների սեփականաշնորհումը սկսեց դեռևս Խորհրդային Միության փլուզումից գրեթե մեկ տարի առաջ՝ 1990թ. հոկտեմբերին, երբ ընդունվեց «Գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների մասին» ՀՀ օրենքը և ՀՀ հողային օրենսգիրքը (1991թ. հունվար):<sup>1</sup> ՀՀ-ն անկախության հռչակումից հետո ձեռնամուխ եղավ հողի համատարած սեփականաշնորհման և գյուղատնտեսության ոլորտի ազատականացմանը՝ նախկին կոլտնտեսությունների և խորհտնտեսությունների համատարած վերացման հիմքի վրա: Հողի սեփականաշնորհումն իրականացվեց 1991-1992 թվականներին, իսկ գյուղատնտեսական մթերք իրացնող կազմակերպությունների սեփականաշնորհումը հիմնականում կատարվեց 1996-2000 թվականներին, ինչի հետևանքով ագրոպարենային համալիրի օղակները գործեցին անհամաչափ: Ավելացնենք, որ սեփականաշնորհման իրավական հարցերը կարգավորվեցին միայն 1997 թվականի դեկտեմբերի 17-ին ընդունված «Պետական ունեցվածքի սեփականաշնորհման մասին» ՀՀ օրենքով միայն:<sup>2</sup>

ՀՀ-ում հողային բարեփոխումներն ընդգրկում էին հետևյալ ուղղությունները.<sup>3</sup>

- հողի սեփականության պետական մենաշնորհի վերացում և ամբողջ համակարգի վերափոխում,
- հողասեփականության հատկացում հանրապետության քաղաքացիներին և կոլեկտիվներին,
- պետության սեփականության իրավունքը պահպանել միայն այն հողերի նկատմամբ, որոնց օգտագործումն ունի համապետական հատուկ նշանակություն,

<sup>1</sup> Տես Հայաստանի գործող օրենքների ժողովածու, 1990-1995, էջ 80-106

<sup>2</sup> Տես «Պետական ունեցվածքի սեփականաշնորհման մասին» ՀՀ օրենք, ՀՀ գործող օրենքների ժողովածու (1995-1999), գիրք Բ (1997-1999), Եր., 1999

<sup>3</sup> Григорян В., Администрация земли в Республике Армения, www.iet.ru

- գյուղական բնակչության զբաղվածության ապահովում և աշխատանքային ռեսուրսների արդյունավետ օգտագործում,
- ագրարային ոլորտի կառավարման մեխանիզմների կատարելագործում,
- ագրարային շուկայի, այդ թվում հողի շուկայի ձևավորում ու զարգացում և այլն:

Շուկայական հարաբերություններին անցման նպատակով և ձեռներեցության հիմքեր ստեղծելու համար ՀՀ կառավարությունը 1990թ. հոկտեմբերին որոշում ընդունեց՝ ստեղծել «ՀՀ կառավարության տնտեսական բարեփոխումների և սեփականաշնորհման գծով պետական հանձնաժողով»<sup>1</sup>, որը պետք է մշակեր բարեփոխումների գիտական հիմունքներ և սկզբունքներ՝ բազմակացութաձև տնտեսական համակարգի անցնելուն, ձեռնարկատիրական գործունեության և բազմասեփականության ձևերի կիրառմանը, մենաշնորհ երևույթների վերացմանը և այլն:

1991 թվականից սկսած հապճեպորեն իրականացվեց հողի սեփականաշնորհումը՝ կիրառելով հետևյալ սկզբունքները՝

ա) հողը բաժանվեց գյուղի մշտական բնակիչներին՝ ելնելով ընտանեկան ծխերի առկա քանակից և տվյալ գյուղին պատկանող հողային ռեսուրսների ծավալից: Արդյունքում միջին հաշվով յուրաքանչյուր ընտանիք ստացավ 1.5 հա գյուղատնտեսական հողատարածք, այդ թվում՝ 1.1 հա վարելահող,

բ) ելնելով յուրաքանչյուր ընտանիքում ընդգրկված ծխերի քանակից՝ հողերը բաժանվեց վիճակահանությամբ,

գ) հողաբաշխումը կատարվեց վճարովի սկզբունքով, փոխհատուցումը սահմանվեց երկու տարում՝ կադաստրային զուտ եկամտի 70%-ի չափով,

դ) միջին հաշվով գյուղատնտեսական նշանակության հողերի 20 տոկոսը չսեփականաշնորհվեց՝ մնաց որպես պահուստային հողային ֆոնդ գյուղի հետագա զարգացման օգտագործման նպատակով: Այդ տարածքները կարող են տրվել վարձակալությամբ կամ այլ հանրային կարիքների համար՝ կիրառելով աճուրդային վաճառք,

<sup>1</sup> Բագրատյան Հ., Հայաստանում առկա քաղաքական ու սոցիալ-տնտեսական իրավիճակը և դրանից դուրս գալու ելքերի մասին, Եր., 2000, էջ 22-23

ե) սեփականաշնորհված հողատարածքի ազատ տնօրինում սեփականատիրոջ կողմից, այդ թվում՝ օտարում, վաճառք, ժառանգելու իրավունք, վարձակալության տրամադրում, որոնք նախկինում արգելված էին,

զ) ոչ գյուղատնտեսական նպատակներով հողը երեք տարվա ընթացքում չօգտագործելու և հարկ չվճարելու դեպքում տեղական իշխանության մարմիններին իրավունք վերապահել ետ վերցնել հողը:<sup>1</sup>

Հայաստանի Հանրապետությունում հողի և գյուղատնտեսության մյուս արտադրամիջոցների սեփականաշնորհման, մասնավոր սեփականության ձևավորման շնորհիվ բարձրացավ գյուղացիական արտադրողների նյութական շահագրգռվածությունը և անձնական պատասխանատվությունը: Բայց արտադրական ենթակառուցվածքների մասնատման և փոշիացման պարագայում, պետության «ետ քաշվելը» այդ ոլորտի հիմնախնդիրներից, գյուղացիական տնտեսություններին սպասարկող կազմակերպությունների (մթերող, վերամշակող, իրացնող) կարգավորված չլինելու պատճառով կարճ ժամանակամիջոցում ոլորտում գրանցվեց զգալի տնտեսական անկում:

Հողի և արտադրության մյուս միջոցների սեփականաշնորհման ընթացքում թույլ էր տրվել մի շարք սխալներ և բացթողումներ, որոնցից կարելի է առանձնացնել.

1) Սեփականաշնորհումը կատարվեց ոչ թե գյուղացիների նախաձեռնությամբ, այլ երկրի իշխանության որոշումներով, առանց հաշվի առնելու գյուղատնտեսական գոտիների առանձնահատկությունները, գյուղատնտեսական տեխնիկայի օգտագործման և մյուս խնդիրների համակողմանի ուսումնասիրման: Սեփականաշնորհման հանդեպ առանձին ղեկավարների, տեղական կառավարման մարմինների անպատասխանատվության, ինչպես նաև օրենքների կիրառման նկատմամբ վերահսկողության բացակայության հետևանքով մշակությունից դուրս են մնացել 46052 հեկտար հողատեսքեր և ամբողջովին չեն օգտագործվել պետական պահուստային հողերը:<sup>2</sup> 1998թ. անմշակ է մնացել սահմանամերձ գոտում գտնվող 40-50 հազար հեկտար հողատարածություն:<sup>3</sup>

<sup>1</sup> «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքը, 27.04.1994. Հայաստանի Հանրապետության գործող օրենքների ժողովածու (1990-1995թթ.)

<sup>2</sup> Ոսկանյան Ա., «Հայաստանի Հանրապետություն», 14 հունիսի, 1995

<sup>3</sup> «Առավոտ», 5 մարտի 1998

- 2) Սեփականաշնորհման արդյունքում կոլտնտեսային ու պետական գույքի և ունեցվածքի մի զգալի մասը ցածր գներով հանձնվեց նախկինում այդ տնտեսությունների հետ կապ չունեցող մարդկանց: Օրինակ, Վարդենիսի պանրի գործարանը սեփականաշնորհվեց 400 ԱՄՆ դոլարով:<sup>1</sup>
- 3) Սեփականաշնորհման հետևանքով մանրատվեցին հողակտորները, ստեղծվեցին փոքր գյուղացիական տնտեսություններ, որոնք, տնտեսապես թույլ լինելու պատճառով, ոչ միայն չեն կարող նոր հողեր գյուղատնտեսության մեջ ընդգրկել, ներդնել առաջավոր տեխնոլոգիաներ, այլև կիրառել սովորական տեխնիկա: Սեփականաշնորհման ժամանակ լավագույն հողերը հավասար ու արդարացի բաշխման նպատակով դրանք մասնատվեցին և կազմավորվեցին փոքր հողակտորներ: Բավական է նշել, որ առկա գյուղացիական տնտեսությունների միայն 4.7 տոկոսն ունեն մեկ ամբողջական հողակտորով հողամաս, 78 տոկոսն ունեն 2-4, իսկ 17.3 տոկոսը՝ 5-7 միմյանցից տարածականորեն տարանջատված հողակտորներ:<sup>2</sup> Փոքր հողակտորներին զուգընթաց, դրանց միջև առաջացան միջդաշտային լրացուցիչ առուներ ու ճանապարհներ, որոնք 5-6 տոկոսով կրճատեցին օգտագործելի հողատարածությունները: Հանրապետության մասշտաբով դա զգալի տարածություն է, միայն բաշխված վարելահողերի կտրվածքով 15.3-18.4 հազար հեկտար: 1998 թվականի տվյալներով, գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունները հանրապետությունում կազմել են 323.7 հազար հեկտար կամ օբյեկտիվ ու սուբյեկտիվ պատճառներով չեն օգտագործվում առկա վարելահողերի 34.5 տոկոսը կամ 170.6 հազար հեկտար:<sup>3</sup>
- 4) Առևտրային բանկերի զգալի մասը գյուղացիական տնտեսություններին վարկեր չէին տրամադրում, որը բարդացնում էր տեխնիկայի, շրջանառու միջոցների ձեռք բերման գործընթացը, ինչի հետևանքով գյուղատնտեսական ոլորտն աստիճանաբար իր առաջատար տեղը զիջում էր ազգային տնտեսության համակարգում: Այդ թերությունների շարքը կարելի է շարունակել:

<sup>1</sup> Աղքատությունը և ժողովրդավարությունը Հայաստանում, Եր., 2000, էջ 12

<sup>2</sup> Ավետիսյան Ս., «Հողի շուկայի ձևավորման և գյուղացիական տնտեսությունների օպտիմալացման սոցիալ-տնտեսական գործոնները», «Ագրոգիտություն», Եր., 1998, էջ 638

<sup>3</sup> Երոյան Մ.Պ., Հողային ռեսուրսների և դրանց օգտագործման արդյունավետության բարձրացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում: Եր., ՀՀ գյուղ. ակադեմիա, 2001, էջ 60

Այդուհանդերձ, պետք է նշել, որ հողի և արտադրության մյուս միջոցների սեփականաշնորհումից հետո կոլտնտեսությունների և խորհրդային տնտեսությունների համատարած լուծարումն իրականացվեց կարճ ժամկետում, առանց նպատակային հետազոտություն կատարելու, անկազմակերպ ու առանց հավի առնելու միջազգային փորձը:

Այսպիսով, վերլուծելով ագրարային ոլորտում ձեռնարկատիրական գործունեության առանձնահատկությունները, բացահայտելով դրա տարբերությունները նյութական արտադրության մյուս ճյուղերից, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում անկախացումից հետո իրականացված բարեփոխումների ընթացքը, հանգում ենք այն եզրակացության, որ ագրարային ոլորտում ձեռնարկատիրության արմատավորումը պահանջում է մեծ ջանքեր, նվիրվածություն, շուկայական հարաբերությունների պահանջներին տիրապետման ունակություն և այլն: Դրա համար անհրաժեշտ է ուսումնասիրել ձեռնարկատիրական գործունեության միջազգային փորձը, որպեսզի մեր հանրապետությունում այդ գործընթացն իրականացվի ավելի քիչ կորուստներով և կարճ ժամկետում:

### **1.3. Ագրարային ոլորտի ձեռնարկատիրության զարգացման միջազգային փորձը**

Եթե ելնենք ձեռնարկատիրական գործունեության վերաբերյալ տնտեսագետների կողմից վերը բերված բազմաթիվ բնորոշումներից, ապա կարելի է կատարել եզրահանգում, որ ձեռնարկատիրությունն, առաջին հերթին, ընդգրկում է ագրարային ոլորտը և հատկապես գյուղատնտեսությունը, քանի որ գյուղացիական տնտեսություններից ոչ մեկն իր գործունեության բնույթով, վարման եղանակով և մյուս չափանիշներով բացարձակ իմաստով չի կրկնում ուրիշներին: Բացի այդ, պատմականորեն ձեռնարկատիրությունը, որպես տնտեսավարման համընդհանուր ձև, սկզբնապես դրսևորվել է գյուղատնտեսությունում, այնուհետև հասարակական արտադրության մյուս ոլորտներում: Եվ, վերջապես, ագրարային ոլորտի ձեռնարկատիրությունը միա-

տեսակ չէ հանդես գալիս տարբեր երկրներում՝ կախված դրանց բնակլիմայական պայմաններից, հողային ռեսուրսների չափերից ու կառուցվածքից, գյուղատնտեսության վարման տնտեսական նշանակությունից, արտադրանքի իրացման բարդություններից և մի շարք այլ առանձնահատկություններից ու բնորոշ գծերից:

Հաշվի առնելով նշված փաստարկները, անհրաժեշտ ենք համարում ուսումնասիրել ձեռնարկատիրական գործունեության միջազգային փորձը, բացահայտել դրանում ձեռք բերված արդյունքները և բացթողումները, նպատակահարմար ենք գտնում վերլուծել տարբեր տարածաշրջանների և զարգացման տարբեր մակարդակների վրա գտնվող առանձին երկրներում այդ գործընթացը, որպեսզի հնարավոր չափով դրանք կիրառել Հայաստանի Հանրապետության ագրարային ոլորտում ձեռնարկատիրության կազմակերպման բնագավառում:

Սկսենք Չինաստանից: Չինաստանում սոցիալիստական կարգերի հաստատումից հետո (1949թ.) երկրում ազգայնացվեց հողը, գյուղատնտեսությունը տեղափոխվեց վարչահրամայական տնտեսական համակարգի շրջանակներ, որը չտվեց սպասվելիք արդյունք, երկրին սպառնում էր պարենային անվտանգության խաթարում: Դա ստիպեց կիրառել լուրջ մոտեցումներ ոլորտի վերափոխմանը:<sup>1</sup>

1978-79 թվականներին Չինաստանի առանձին նահանգներում սկսեցին «ժողովրդական կոմունաներ»-ից անցում կատարել ընտանեկան կապալի, որը տարածվեց երեք տարվա ընթացքում: Դա արձանագրեց հաջողություններ ոլորտում: Արդեն 1984 թվականին 1978-ի հանդեպ գյուղատնտեսական մթերքների արտադրության ծավալներն ավելացան 1.6 անգամ, հացահատիկի արտադրությունը 300 մլն տոննայից հասցվեց տարեկան 400 մլն տոննայի: 1980-2000 թվականներին Չինաստանի համախառն ներքին արդյունքն (ՀՆԱ) աճեց 9.8 անգամ: Այդ այն դեպքում, երբ Չինաստանի գյուղատնտեսության մեջ աշխատանքի արտադրողականությունը կազմում էր ԱՄՆ-ի աշխատանքի արտադրողականության չորս տոկոսը միայն:<sup>2</sup> Այդ բարեփոխումների շնորհիվ գյուղացին սկսեց իրեն զգալ որպես ազատ տնտեսության աշխատող, իր գործի տերը, որն էլ խթան հանդիսացավ տնտեսության զարգացման համար:

<sup>1</sup> Հայկական Սովետական հանրագիտարան. հատ. 9, Եր., 1983, էջ 28-29

<sup>2</sup> Экономическое развитие Китая – “Экономическая история мира”, том 4, էջ 178



Գյուղատնտեսական մթերքների աճը գյուղացուն հնարավորություն ընձեռնեց շուկա հանելու իր արտադրանքի մի մասը, որով սկիզբ առավ բարեփոխումների երկրորդ փուլը: Կառավարությունը շահագրգռելով գյուղացիներին հողի և արտադրամիջոցների արդյունավետ օգտագործման համար, խթանելով կապիտալ ներդրումները, երկարացրեց վարձակալության պայմանագրերի ժամկետները դաշտավարությունում մինչև 15, իսկ այգեգործությունում՝ 25-50 տարի: Սեփականության իրավունք մտցվեց պտղատու այգիների նկատմամբ, թույլատրվեց կապալային պայմանագրերի ժառանգման իրավունք:

Զինաստանում իրականացված բարեփոխումները հանգեցրին ևս մեկ բացասական հետևանքի՝ գյուղատնտեսական համալիրում տեղի ունեցավ կառուցվածքային անցանկանալի տեղաշարժեր, որի հետևանքով բուսաբուծության ճյուղի բաժինը կազմեց 47 տոկոս, անասնաբուծությանը՝ 17.4, օժանդակ տնտեսություններինը՝ 29.8, ձկնատնտեսությանը՝ 3.1 և անտառատնտեսությանը՝ 2.5 տոկոս:<sup>1</sup>

Զինաստանի փորձը ցույց է տալիս, որ վարձակալական ձեռնարկությունը կայուն արդյունք կարող է տալ միայն այն դեպքում, երբ տնտեսական պայմանները շահագրգռում են գյուղացուն աշխատել արդյունավետ, իրականացնել երկարաժամկետ կապիտալ ներդրումներ, վստահ լինել հետագա ժամկետների հանդեպ:

Զինաստանում ձեռներեցության զարգացմանը որոշ ժամանակահատվածում խոչընդոտում էին մի շարք տեսակի գյուղատնտեսական մթերքների ցածր պետական գնման գները: Օրինակ 1985-1988թթ. ընթացքում քիմիական պարարտանյութերի 14 տոկոսով գների բարձրացման պայմաններում հացահատիկի գնման գները ավելացավ ընդամենը 3 տոկոսով: Դա բերեց գյուղմթերքների ինքնարժեքի բարձրացմանը: Գյուղմթերքների գնման գները զգալիորեն ցածր էին շուկայական գներից: Այս պարագայում պետությունը ձեռնամուխ եղավ մակրոտնտեսական համալիր կարգավորմանը: Պետությունը խստորեն վերահսկում էր, որպեսզի պայմանագրով նախատեսված վարկերը, նյութական ռեսուրսները (պարարտանյութ, դիզելային վառելիք) տրվեն մթերք վաճառող գյուղացուն: Գյուղմթերքների գնումները, հիմնականում

---

<sup>1</sup> Ломакин В.К. Мировая экономика: Учебник для вузов.- М.: “Финансы”, ЮНИТИ, 1998, էջ 632

տեխնիկական մշակաբույսերի գծով, կենտրոնացված են իրացնող-մատակարարող կոոպերատիվների ձեռքում՝ գործելով պետության հանձնարարությամբ:<sup>1</sup>

Ամբողջ աշխարհում ընդունված է ԱՄՆ-ին համարել «տնտեսական բարոմետր» մնացած երկրների համար, քանի որ ԱՄՆ-ը ունենալով աշխարհի բնակչության 5 տոկոսից պակաս բնակչություն, թողարկում է համաշխարհային ՀՆԱ-ի ավելի քան 25 տոկոսը: Դրան նպաստել են և շարունակում են նպաստել բազմաթիվ գործոններ՝ լայնածավալ հողատարածքները, հարուստ բնական ռեսուրսները, իր տարածքում պատերազմական գործողությունների բացակայությունը և, իհարկե, շուկայական տնտեսության ամերիկյան մոդելի կիրառությունը, որում առանձնահատուկ տեղ ունի «ձեռնարկատիրական ակտիվության անսահման խրախուսումը՝ ընդգրկելով հասարակության ակտիվ մասը, որտեղ հատկապես խրախուսվում է փոքր ձեռնարկատիրությունը»:<sup>2</sup>

Իսկ մինչ այդ, 1861-1865 թվականների քաղաքացիական պատերազմից հետո ԱՄՆ-ում ընդունվեց օրենք «Հողաբաժինների մասին», համաձայն որի յուրաքանչյուր 21 տարին լրացած քաղաքացի կարող էր հասարակական ֆոնդի հողերից ստանալ մինչև 160 ակր (65 հա) հողակտոր և 5 տարի նպատակային օգտագործելուց հետո այդ անձը դառնում էր տվյալ հողի սեփականատեր: Համաձայն այդ օրենքի ԱՄՆ-ում բաժանվեց 2 մլն հողաբաժին՝ 115 մլն հա մակերեսով:

Այդ օրենքի կիրառմամբ այստեղ ամբողջովին ձևավորվեց տնտեսավարման ֆերմերային ձևը՝ նպաստելով գյուղատնտեսության մեջ կապիտալիստական արտադրական հարաբերությունների արմատավորմանը, որն էլ իր հերթին ապահովեց արտադրողական ուժերի առավել արագ զարգացմանը:<sup>3</sup>

Հայտնի է, որ ձեռնարկատիրությունը կարող է անարգել զարգանալ միայն ազատ մրցակցային շուկայական տնտեսության պայմաններում, երբ տնտեսավարողներն ազատ են լինում իրենց որոշումների մեջ ռեսուրսների և իրացման շուկաների ընտրության հարցում, հակառակ դեպքում մենաշնորհը խիստ կերպով կխոչընդոտի

<sup>1</sup> Տնտեսագիտության տեսություն (Ուսումնական ձեռնարկ Գ.Կիրակոսյանի խմբ. «Տնտեսագետ»), 2000, էջ 80

<sup>2</sup> Տնտեսագիտության տեսություն (Ուսումնական ձեռնարկ Գ.Կիրակոսյանի խմբ. «Տնտեսագետ»), 2000, էջ 77

<sup>3</sup> Попов Н.А., Организация сельскохозяйственного производства, “Колос”, 2000

տնտեսության և ձեռներեցության զարգացման գործում: Հենց դա ի նկատի ունենալով ԱՄՆ-ում դեռևս 1890 թվականին ընդունվեց Շերմանի հակամենաշնորհային օրենքը, որն ուղղված էր գոյություն ունեցող մոնոպոլիստների դեմ: 1914 թվականին ընդունվեց Քլեյթոնի օրենքը, որն ուներ նաև կանխարգելման նպատակ ունեցող դրույթներ:

ԱՄՆ-ում ձեռնարկատիրական գործունեության զարգացման գործում կարևոր նշանակություն է տրվում գյուղատնտեսության վարկավորման հարցերին, ակտիվ է գործում գյուղատնտեսության վարկավորման բանկային համակարգը: Գոյություն ունեն շուրջ 800 գյուղատնտեսության վարկավորմամբ զբաղվող բանկեր, որոնց 26 տոկոսը կոոպերատիվ կամ առևտրային բանկեր են, իսկ մնացածը՝ պետական բանկեր են: ԱՄՆ-ում գյուղացիական տնտեսությունները վարկերի միջոցով ֆինանսավորվում են իրենց ծախսերի շուրջ 35-70 տոկոսը:<sup>1</sup> Այստեղ անշարժ գույքի գնման համար հատկացվում է վարկ՝ գործարքի մինչև 70%-ի չափով, մեքենաների և սարքավորումների գնման դեպքում՝ 40-70, անասունի գնման՝ 50, տարբեր շրջանառու միջոցների դեպքում՝ ընդհուպ մինչև 100 տոկոս:<sup>2</sup>

Հայաստանի համար ուսանելի փորձ կարող է ծառայել հատկապես ճապոնիան, որն իր հողային ռեսուրսների և լանդշաֆտի ցուցանիշներով շատ նման է մեր հանրապետությանը: ճապոնիայում երկրորդ Համաշխարհային պատերազմից հետո իրականացվեցին հողային բարեփոխումներ՝ խոշոր հողատեփականատերերի հողերը բաժանվեցին վարձակալության սկզբունքով, որոնց միջին չափը կազմում է 0.33 հեկտար: Նման իրավիճակում գյուղացիական տնտեսությունների եկամուտները ցածր են և դրանց շուրջ 12 տոկոսը կրում է բնամթերային բնույթ: ճապոնիայում բերքատվությունը և մթերատվությունը զգալիորեն զիջում է եվրոպական և մյուս զարգացած երկրների ցուցանիշներին: ճապոնիայում գյուղմթերքների ինքնարժեքները միջին հաշվով 15-20 տոկոսով բարձր է միջազգային միջին մակարդակից: Ագրոպարենային հատվածում ձեռնարկատիրական գործունեության զարգացման գործում ճապոնիայում կիրառվում է գնային ճկուն քաղաքականություն: Այստեղ գնման գները կարգավորում են երեք մեթոդներով: Պետությունը սահմանում է բրնձի, ցորենի և

<sup>1</sup> Серова Е.Я.- “Аграрная экономика”.- М., 1999, էջ 34

<sup>2</sup> Ավետիսյան Ս.Ս., «ԱՄՆ-ի հակամենաշնորհային օրենքը, Շերմանի օրենքը»

գարու գնման հաստատուն գներ: Շաքարի ճակնդեղի, տավարի, խոզի մսի և կաթի փոշու համար գործում են նվազագույն երաշխավորված գներ: Որոշ մթերքների վերամշակման նպատակով սահմանվում են անփոփոխ գներ, որից ելնելով էլ որոշվում է արտադրողներին կատարվող վճարումների չափը: Արտադրության և գների հավասարակշռման նպատակով պետությունը իրականացնում է միջոցառումներ՝ վերահսկողություն արտադրության նկատմամբ, իրացման լիմիտավորում, պետական մթերում ու վաճառք, պետական գնագոյացում և այլն:

Այս տեսակետից ՀՀ-ում գնային քաղաքականության մշակման ժամանակ, գների պետական և շուկայական կարգավորում իրականացնելիս կարևոր է կողմնորոշվել համաշխարհային փորձի առաջատար օրինակների վրա: Դրանք ցույց են տալիս, որ նույնիսկ զարգացած շուկայական տնտեսության երկրներում պետության վերահսկողության տակ է գտնվում սննդամթերքի գների մեծ մասը: Ճապոնիան, ունենալով հողային խիստ սահմանափակ ռեսուրսներ, կիրառելով ագրարային ոլորտում պետական ճիշտ քաղաքականություն և ձեռնարկատիրական ակտիվ գործունեություն, ապահովում է երկրի պահանջարկը բրնձի գծով 100, բանջարեղենի՝ 92, մսի՝ 72 տոկոսով: Սակայն մյուս կողմից գյուղատնտեսության պետական հովանավորչության բարձր մակարդակը թույլ չի տալիս ագրարային (գյուղացիական) տնտեսությունների խոշորացմանը, արտադրության ինտենսիվացմանը, բերքատվության բարձրացմանը և արտադրանքի ինքնարժեքի նվազեցմանը: Ճապոնիայում սկսած 1995 թվականից կիրառվում է տնտեսական քաղաքականություն, ուղղված պետական հովանավորչությանը, ծախսերի կրճատմանը և տնտեսությունների խոշորացմանը:<sup>1</sup>

Վերջին երկու տասնամյակներում աշխարհի զարգացած երկրներում ագրարային ոլորտի հետագա ազատականացմանը և պետական հովանավորչության նվազեցմանն ուղղված քաղաքականություն է վարվում: Դեռևս 1992 թվականին Եվրոմիության երկրներում եկան այն եզրակացության, որ անհրաժեշտ է իրականացնել ագրարային քաղաքականության սկզբունքային բարեփոխումներ: 1992 թվականի բարեփոխումների և «Ազենդա-2000» բարեփոխումների արդյունքում նշանակալից տեղ է

<sup>1</sup> Нагибина И., Перспективность смешанной формы собственности, журнал “Экономика и управление АПК”, N 11, М., 1999, էջ 63-65

հատկացվում գյուղատնտեսության առանձին մթերքների հանդեպ գների պաշտպանությանը, իսկ որոշ մթերքների հանդեպ հանվեց պետական աջակցությունը՝ քաղաքականությունն ուղղորդվում է դեպի ձեռներեցության ակտիվացմանը:

Անգլիան Եվրոմիության երկրների մեջ առանձնանում է նրանով, որ հանդիսանում է ոչ միայն կապիտալիստական արդյունաբերության զարգացման դասական երկիր, որտեղ իրականացվեց անցում մանուֆակտուրային արտադրությունից խոշոր մեքենայական արտադրությանը, այլ նաև՝ երկրագործական կապիտալիզմի դասական երկիր է:

Պաշտոնական տվյալներով, 1953թ. Մեծ Բրիտանիայում ֆերմերային տնտեսությունների թիվը կազմում էր 454 հազար միավոր, իսկ 80-ական թվականներին՝ 230 հազար, որտեղ խոշոր տնտեսությունների (100 հեկտարից ավելին) տեսակարար կշիռը 13 տոկոս է:

Փոքր ագարակատերերի գյուղատնտեսական մթերքների արտադրությունը կազմում է 10 տոկոսից էլ պակաս: 1980-ական թվականներից սկսած անգլիական կառավարությունը միջոցներ է ձեռնարկում ուղղված հողօգտագործման արդյունավետության բարձրացմանը, իրականացվում է գյուցիական ձեռնարկությունների խոշորացման քաղաքականություն՝ փոքր տնտեսությունների ձուլման և լուծարման միջոցով:<sup>1</sup>

Անգլիայում համեմատաբար մեծ տարածում է ստացել ձեռնարկատիրության վարձակալական ձևը, որին նպաստել է վարձակալի և վարձատուի տնտեսական հարաբերությունները կարգավորող օրենսդրությունը, ինչն անցել է զարգացման երկար ուղի: Այստեղ վարձակալական հարաբերությունները կարգավորող ակտ է ծառայել դեռևս 1536թ. ընդունված հողի օգտագործման մասին օրենքը:

Ներկայիս անգլիական օրենսդրությունը խթանում է վարձակալներին կատարել կապիտալ ներդրումներ և գյուղատնտեսական ոլորտի կադրերի ու մասնագետների պատրաստմանը: Սովորաբար ագարակատերեր են դառնում այն անձինք, ովքեր մեծացել են նման ընտանիքներում և ծնողներից փոխանցվել է գյուղատնտեսության վարման փորձը: Երիտասարդները մասնագիտական կողմնորոշում են ստանում

---

<sup>1</sup> Նույն տեղը

դպրոցում, իսկ այնուհետև գյուղատնտեսական քոլեջներում: Մասնագիտական խորացումը իրականացվում է հատուկ տնտեսություններում և ձեռնարկություններում:<sup>1</sup>

Արևմտյան Եվրոպայում Ֆրանսիան գյուղատնտեսական մթերքներ արտադրող և արտահանող ամենախոշոր երկիրն է: Այստեղ գերիշխում է մանր հողասեփականության ձևը: Նույնիսկ Ֆրանսիայի գյուղատնտեսությունն անցում կատարելով արտադրության ինտենսիվացմանը, պահպանում է ագրարային կառուցվածքի բնութագրական գծերը: Գյուղացիական տնտեսությունների 50%-ից ավելին գործում են սեփական հողի վրա: Սակայն դրա հետ միասին, այստեղ զարգացում է ապրում արդյունաբերական, բանկային, առևտրային կապիտալի թափանցումը գյուղատնտեսության ոլորտ: Գյուղատնտեսության մեջ ընդգրկված է տնտեսապես ակտիվ բնակչության 6.4%-ը (Եվրամիության միջինը կազմում է 7 տոկոս):

Ֆրանսիայի գյուղատնտեսությանը բնորոշ է գյուղացիական տնտեսությունների միավորումը կոոպերատիվների մեջ, որոնք հանդիսանում են ձեռնարկատիրական գործունեության կազմակերպման հիմնական ձևը: Այստեղ գործում են շուրջ 4 հազար կոոպերատիվներ՝ ընդգրկելով գյուղացիների 80%-ը: Երկրի 600 կոոպերատիվներ արտադրում են հատիկային մշակաբույսերի 70%-ը, 2500 կոոպերատիվներ արտադրում են կաթի 50%-ից ավելին, կաթնամթերքի 43 տոկոսը, մսի, գինու, ծխախոտի, շաքարի ճակնդեղի հիմնական մասը: Ֆրանսիայում լայն տարածում է ստացել նաև գյուղատնտեսական տեխնիկայի համատեղ օգտագործման կոոպերատիվները:<sup>2</sup>

Ֆրանսիայում վարձակալական հարաբերությունները, որպես ձեռնարկատիրական գործունեության ձև, ունեն երկարամյա պատմություն և կարգավորվում են քաղաքացիական օրենսգրքով: Վարձավճարի չափը սահմանվում է շուկայական պահանջարկից՝ միաժամանակ կիրառելով վարչական կարգավորման մեթոդներ: Գործող օրենսդրության համաձայն վարձավճարի չափը չպետք է գերազանցի ստացվող գյուղմթերքի արժեքի 1/3-ին:

Ագրարային ոլորտի տնտեսական հարաբերություններով և ձեռնարկատիրական գործունեության իրականացման մեթոդներով Եվրոպայում առանձնահատուկ

<sup>1</sup> Николаев В., “Становление информационно-консультационной службы”, журн. “Экономика и управление АПК”, N 8, М., 2001, էջ 45-48

<sup>2</sup> Нагибина И., Перспективность смешанной формы собственности. Журн. “Экономика и управление АПК”, N 11, М., 1999, էջ 63-65

տեղ է գրավում Շվեդիան, որտեղ գերիշխում է մասնագիտացված խոշոր և միջին մասնավոր հողօգտագործողների սեփականությունը: Այստեղ գործում է շուրջ 100 հազար գյուղացիական տնտեսություն՝ 27 հեկտար միջին հողատարածությամբ: Տնտեսությունների միայն 3 տոկոսն ունի 100 հեկտարից ավել հողատարածք: Ագարակատերերի 80%-ը տնտեսություն են վարում սեփական հողատարածքների վրա՝ հիմնականում միավորվելով կոոպերացիայի մեջ: Կոոպերացիայի միջոցով իրացվում է գյուղատնտեսական արտադրանքի 80%-ից ավելին և մատակարարվում արտադրության միջոցների 50-60 տոկոսը: Կոոպերացիայի սկզբունքով ագարակատերերի միավորումը հնարավորություն է տալիս նրանց մրցակցելու խոշոր կապիտալով գյուղացիական տնտեսությունների հետ:

Շվեդական ագարակատերերի ձեռնարկատիրական գործունեության փորձը կայանում է հետևյալում.

- ա) գյուղատնտեսական կոոպերացիան հիմնված է ընտանեկան տնտեսության վարման վրա,
- բ) կոոպերատիվները բացի գյուղմթերքների արտադրությունից զբաղվում են նաև մատակարարման-իրացման հարցերով, տոհմային գործով, վարկավորման խնդիրներով և այլն,
- գ) կոոպերատիվի կառավարմանը մասնակցում են բոլոր ագարակատերերը, յուրաքանչյուրն անկախ տնտեսության չափից ունի միայն մեկ ձայն,
- դ) Շվեդիայում գյուղատնտեսական հողատարածք կարող է ունենալ միայն այն անձը, ով ունի փաստաթուղթ գյուղատնտեսական ուսումնական հաստատություն ավարտելու մասին, տիրապետում է ագրոտեխնիկայի հիմունքներին, ագրոտնտեսագիտությանը, գյուղատնտեսական մեխանիզացիային, վարում է ավտոմեքենա և գյուղմեքենաներ, կարող է աշխատացնել անասնապահական ֆերմաների մեխանիզմները,
- ե) ագարակատերերի գործունեությանը սատարում է պետությունը հարկային արտոնյալ քաղաքականության միջոցով, նույնիսկ ազատելով հարկերից, եթե տնտեսավարողն իր եկամուտն ուղղում է հիմնական ֆոնդերի ավելացմանը:<sup>1</sup>

<sup>1</sup> Тарасов Н., Володин В. “Объединение сельскохозяйственных кооперативов (кооперация или интеграция)”, журн. “Экономика и управление АПК”, N 4, М., 2001, էջ 57-64

Շվեդիայում լայն տարածում է ստացել նաև վարձակալական ձեռնարկատիրության ձևը: Երկրի ագարակատերերի շուրջ 20 տոկոսը տնտեսություն են վարում վարձակալած հողերի վրա: Ամենատարածվածը պետական հողերի վարձակալությունն է, պետության կողմից տվյալ հողի վրա գյուղատնտեսական նշանակության կառույցների և բնակելի տների հետ միասին: Նման դեպքում վարձակալողը հանդիսանում է մեկ ընտանիք, որն էլ վարում է տնտեսությունը, փոխանցելով դրանք իր սերունդներին ժառանգաբար:<sup>1</sup>

Տարածված վարձակալական ձև է նաև գործող տնտեսությունների վարձակալությունը, որում առավելապես հետաքրքրություն է ներկայացնում պետական հողերի վարձակալության հանձնման համակարգը: Վարձակալողը պետք է ներկայացնի բանկից իր ֆինանսական վիճակի, հողի և կառույցների արդյունավետ օգտագործման, բիզնես-ծրագրերի հիմնավորվածության մասին համապատասխան փաստաթղթեր:

Շվեդիայում վարձակալության ժամկետները չեն սահմանվում օրենքով, սակայն գործնականում այն կազմում է 5-10 տարի, որը վարձատուների կարծիքով օպտիմալ է, քանի որ յուրաքանչյուր 5-10 տարվա ընթացքում տեղի է ունենում էական փոփոխություններ ագրոտեխնիկայի, տեխնոլոգիաների ոլորտում, ինչը ձգտում է հաշվի առնել վարձատուն պայմանագրի մեջ: Վարձակալի և վարձատուի միջև առաջացած տարաձայնությունները կարգավորվում են հատուկ հանձնաժողովների կողմից, իսկ համաձայնության չգալու դեպքում հարցը քննում է շվեդական ագարակատերերի ազգային միությունը:<sup>2</sup>

Հայաստանի Հանրապետության համար առավել արդիական է ուսումնասիրել ետսոցիալիստական և զարգացող երկրների ձեռնարկատիրական գործունեության կիրառման ու զարգացման փորձը: ԱՊՀ երկրներում ագրարային բարեփոխումներն իրականացվեցին շատ արագ, առանց ուսումնասիրելու այդ գործընթացի համաշխարհային փորձը: Այսպես, Ռուսաստանում, Բելառուսում, Ուկրաինայում և Ղազախստանում հողը բաժանվեց պայմանականորեն՝ տրվում էր նրանց, ովքեր ցանկանում էին վարել սեփական գյուղատնտեսական արտադրություն: Հայաստանում և

<sup>1</sup> Сельское хозяйство Швеции, журн. ЭКО, N 2, 1990, էջ 191-195

<sup>2</sup> Николаев В., Становление информационно-консультационной службы, журн. “Экономика и управление АПК”, N 8, М., 1999, էջ 46-48



Վրաստանում իրականացվեցին հողային բարեփոխումներ առավել արմատական ձևով՝ հողատարածքների գերակշռող մասը բաժանեցին գյուղացիական ընտանիքներին: ԱՊՀ մյուս երկրներում հողը մնում է որպես պետական սեփականություն, միայն տնամերձների նկատմամբ է թույլատրվում մասնավոր սեփականությունը: Ղրղզստանում չնայած չի ընդունվել հողի նկատմամբ մասնավոր սեփականության օրենք, այնուհանդերձ թույլատրվում է հողի օգտագործման իրավունքի վաճառքը՝ նպատակ ունենալով ստեղծել հողի օգտագործման շուկա<sup>1</sup>, որը համարվում է ձեռնարկատիրության զարգացման նախադրյալներից մեկը:

Բարեփոխման արդյունքում, Ռուսաստանում գյուղատնտեսական հողերի շուրջ 80 տոկոսը անցավ անհատական կամ կոլեկտիվ մասնավոր սեփականության ձևին, որը քայքայեց պետական գյուղատնտեսության հիմնական սկզբունքները՝ հողի նկատմամբ պետական մենաշնորհը: ՌԴ-ում վերափոխումների առաջին երկու տարվա ընթացքում ագարակային տնտեսությունների քանակը 50 հազարից հասցվեց 270 հազարի, ընդգրկելով շուրջ մեկ մլն գյուղացիների: Դա իր հերթին նպաստեց ագրարային ոլորտում կենտրոնացված պլանավորումից անցնելու շուկայական հարաբերություններին: Ռուսաստանի Դաշնությունում ագրարային բարեփոխումների անցման շրջանում մեծ տեղ է հատկացվում գյուղատնտեսական ենթակառուցվածքների զարգացմանը, որն առանձնապես կարևորվում է մասնավոր ագարակային տնտեսությունների համար և ձեռնարկատիրական գործունեության հետագա ընդլայնմանը:<sup>2</sup>

Ուկրաինայում ագարակային տնտեսությունների միջին չափը կազմում է 22 հեկտար, սակայն ըստ տարածաշրջանների այն տատանվում է 4-ից (արևմտյան) մինչև 40 հեկտար՝ արևելյան մարզերում:

Բելառուսում ստեղծվել են ընդամենը 3000 ագարակային տնտեսություններ, միջինը 20 հեկտար հողատարածքով, որոնց տեսակարար կշիռը գյուղատնտեսության համախառն արտադրանքի մեջ կազմում է ընդամենը մեկ տոկոս: Ղազախստանում մասնավոր տնտեսությունները զբաղեցնում են գյուղատնտեսական նշանակության հողերի ընդամենը 17 տոկոսը՝ միջին չափը կազմում է 460 հեկտար: Լիտվայում

<sup>1</sup> Хонькин В., Земельная собственность и предпринимательский менеджмент, “Международный сельскохозяйственный журнал” N 4, М., 2001, էջ 40-43

<sup>2</sup> Савченко Е. Экономическое регулирование агропромышленного производства, (Вопросы теории и практики), журн. Достижения науки и техники АПК, N 6, М., 2001, էջ 1-10

3 հեկտարից ավել հող ունեցող տնտեսությունները զբաղեցնում են գյուղատնտեսական հողատարածքների 1/3-ը, որոնց միջին չափը կազմում է 8 հեկտար: Հողերի 25 տոկոսը գտնվում է օժանդակ տնտեսության օգտագործման տակ: Էստոնիայում հողատարածքների 40 տոկոսը զբաղեցնում են ագարակային և օժանդակ տնտեսությունները, միջինը 22 հա տարածքով: Լատվիայում գոյություն ունեն 2300 կորպորատիվ տնտեսություններ, որոնք հողը վարձակալում են պետությունից կամ մասնավոր սեփականատերերից: Այստեղ իրավաբանական անձինք զրկված են հողի նկատմամբ սեփականության իրավունքից:<sup>1</sup>

Այսպիսով, ուսումնասիրելով ձեռնարկատիրական գործունեության և տնտեսավարման ձևերի միջազգային փորձը, կարելի է եզրակացնել, որ դրանք տարբեր երկրներում իրականացվում են տարբեր եղանակներով ու մեթոդներով, ունենալով նաև առանձին հատկանիշներով նմանություններ: Աշխարհի տնտեսապես զարգացած երկրներում ձեռնարկատիրության հիմնական ձևերն են մասնավոր սեփականության իրավունքով ագարակային տնտեսությունները և կոոպերատիվները, որոնք թողարկում են գյուղատնտեսական մթերքների համաշխարհային արտադրանքի շուրջ 80 տոկոսը: Զարգացող երկրներում գերակշռում է խոշոր հողասեփականությունը, որտեղ հողի վարձակալության միջոցով իրականացվում է ձեռնարկատիրական գործունեություն:

Չինաստանում տարածված է ընտանեկան կապալը, որը նույնպես ձեռներեցության արդյունավետ ձև է: Որպես համընդհանուր սկզբունք, գրեթե բոլոր երկրներում պետությունն անմիջապես չի զբաղվում գյուղատնտեսական արտադրությամբ, հողը և արտադրության մյուս միջոցները տրամադրում են վարձակալության ագարակատերերին: Գյուղացիական տնտեսությունների և կոոպերատիվների չափերը կախված են մի շարք գործոններից (հողային ռեսուրսների պաշարներ, ռելիեֆ, ձևավորված ավանդույթներ, տնտեսական համակարգ և այլն), որոնք տատանվում են 1.2 հա (Ճապոնիայում) մինչև 4000 հա (Ավստրալիայում): Բոլոր երկրներում տեղի է ունենում գյուղացիական տնտեսությունների չափերի մեծացման միտում, որը պայմանավորված է խոշոր հողատարածքների վրա նոր տեխնիկայի և առաջավոր տեխնոլոգիա-

<sup>1</sup> Уткин Э.А., Кочеткова А.И., “Как развернуть собственное дело”. М., 1998

ների ներդրմամբ, կապիտալի օգտագործման արդյունավետության մակարդակի բարձրացմամբ, արտադրանքի ինքնարժեքի նվազմամբ, ինչն իր հերթին առաջ է քաշում ձեռնարկատիրական գործունեության իրականացման զարգացման անհրաժեշտություն:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ մանր ագարակային տնտեսություններում արտադրվող արտադրանքի ինքնարժեքները 15-20 տոկոսով բարձր են համաշխարհային միջին ցուցանիշից, որը բխում է ինքնարժեքի մեջ հաստատուն ծախսերի տեսակարար կշռի բարձրացումից:

Ուսումնասիրված երկրների մեծ մասում գոյություն ունի ձեռնարկատիրական գործունեության կարգավորման հարուստ փորձ, որի կիրառումը նույնպես արդյունավետ կարող է լինել մեր հանրապետության համար: Այստեղ կարևոր է ճիշտ հետազոտել և համադրել բազային տվյալները՝ գյուղատնտեսության զարգացման արդի վիճակը, առանձնահատկությունները, բնորոշ գծերը ու համանման բնութագրիչները, որոնք մոտ են Հայաստանի Հանրապետության ցուցանիշներին կամ էլ կարող են ծառայել որպես չափանիշ դրված նպատակին հասնելու համար:

Հայաստանի համար ուսանելի կլինի Արևելյան Եվրոպայի ետսոցիալիստական ու ԱՊՀ երկրների փորձը: Բացի Հայաստանից և Վրաստանից այդ երկրներում բարեփոխումներն իրականացվեցին առավել խելամիտ և սահուն ձևով, նախկին սոցիալիստական ձեռնարկություններն ու կազմակերպությունները (տնտեսությունները), ոչ հիվանդագին մոտեցումներով, վերածվեցին բաժնետիրական ընկերությունների, ինչը հնարավորություն տվեց չփոշիացնելով արտադրության միջոցները և հողը, պահպանելով նախկին մակարդակը, կիրառելով ձեռնարկատիրությանը բնորոշ նոր մեթոդներ բարելավել դրանց տեխնիկա-տնտեսական ցուցանիշները:

ՀՀ-ի համար գյուղատնտեսության հետագա բարեփոխումների և ձեռնարկատիրության իրականացման գործում հետաքրքրություն կարող է ներկայացնել Շվեդիայի փորձը, որից ուշադրության է հատկապես արժանի գյուղատնտեսության վարման ժառանգական փոխանցումը, ագարակատերի և մասնագետների ուսուցումը, տեղեկատվության համակարգը և այլն: Անգլիայի գյուղատնտեսության փորձը համոզում է խոշոր տնտեսությունների անհամեմատ բարձր արդյունավետությունը, իսկ

գյուղատնտեսության վարման ֆրանսիական փորձից Հայաստանի Հանրապետության համար կարելի է կիրառել գյուղտեխնիկայի օգտագործման կոոպերատիվների փորձը: Վերափոխումների և ձեռնարկատիրության իրականացման Չինաստանի փորձից կարելի է եզրակացնել, որ ազատ տնտեսական հարաբերությունները չեն կարող տալ ցանկալի արդյունքներ երկար ժամանակ առանց պետության միջամտության և արտադրական ենթակառուցվածքի զարգացման:<sup>1</sup> Մեր կարծիքով նշված երկրների փորձի խելացի կիրառությունը մեր հանրապետությունում կտա դրական արդյունքներ ինչպես առանձին անհատ տնտեսավարողների, կոլեկտիվների, այնպես էլ պետության համար՝ մակրոտնտեսական ցուցանիշների բարելավման հարցում:

---

<sup>1</sup> Грядов С.И., “Организационно-экономические основы, создание деятельности крестьянских (фермерских) хозяйств”, М., 1998

## ԳԼՈՒԽ 2.

### ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՅԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՈԼՈՐՏՈՒՄ

#### 2.1. Արարատի մարզի բնատնտեսական պայմանները

Արարատի մարզը գտնվում է հանրապետության հարավ-արևմտյան մասում, որը սահմանակից է հյուսիսից մայրաքաղաք Երևանին, հարավ-արևմուտքից՝ Վայոց Ձորի մարզին, իսկ հարավից պետական սահմանով՝ Թուրքիային: Մարզն ամբողջությամբ տեղաբաշխված է Արարատյան դաշտավայրում և զբաղեցնում է տարածքի շուրջ 40 տոկոսը: Մարզն ընդգրկում է Ազատ և Վեդի գետերի ջրավազանը, մարզի տարածքով են անցնում նաև Արաքս և Հրազդան գետերը: Արարատի մարզի լեռնային հատվածը զբաղեցնում են Գեղամա լեռնաշղթայի հարավ-արևմտյան լանջերը՝ մինչև գագաթային գոտին: Մարզի ծովի մակարդակից ամենաբարձր կետը Սպիտակասարի գագաթն է՝ 3555 մ բարձրությամբ:

Արարատի մարզն ունի չոր և խիստ ցամաքային կլիմա: Ձմռանը ցուրտ է (հունվարին օդի միջին ջերմաստիճանը տատանվում է 10-20 աստիճան զրոյից ցածր), իսկ ամռանը համեմատաբար շոգ է (հուլիս-օգոստոս ամիսներին օդի միջին ջերմաստիճանը կազմում է 28-33 աստիճան, առանձին տարիներին հասնելով մինչև 41° C):

Արարատի մարզի ընդհանուր տարածքը կազմում է 2090 քառ. կմ, զբաղեցնում է հանրապետության տարածքի 7.0 տոկոսը, բնակչությունը 2014 թվականի հունվարի 1-ի դրությամբ կազմել է 260.1 հազար մարդ, որից գյուղական բնակչությունը՝ 186.4 (71.5%), իսկ քաղաքայինը՝ 74.4 հազար մարդ (28.5%): Բնակչության խտությունը 1 քառ. կմ-ի վրա կազմում է 125 մարդ, իսկ մարզում գյուղատնտեսական արտադրությունը կազմակերպվում է 52500 գյուղացիական տնտեսությունների, 8 առևտրային կազմակերպությունների միջոցով: Մարզում գործում է գյուղմթերքների վաճառքի 4 շուկաներ:<sup>1</sup>

<sup>1</sup> ՀՀ Արարատի մարզի 2015-2018 թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիր, Արտաշատ, 2015, էջ 154

Արարատի մարզի ժողովրդագրական և սոցիալ-տնտեսական ոլորտի վերաբերյալ տվյալները 2014թ. հունվարի 1-ի դրությամբ բերվում են աղյուսակ 2.1-ում:

## Աղյուսակ 2.1

### Արարատի մարզի ժողովրդագրական և սոցիալ-տնտեսական ցուցանիշները 2014 թվականի հունվարի 1-ի դրությամբ<sup>1</sup>

Ցուցանիշների անվանումը		Չափի միավոր	
1.	Տարածքը	քառ. կմ	2090
2.	ՀՀ տարածքում մարզի տարածքի տես. կշիռը	%	7.0
3.	Քաղաքային համայնքներ	միավոր	4
4.	Գյուղական համայնքներ	//	93
5.	Գյուղեր	//	95
6.	Բնակչության թվաքանակը 2014թ. հունվարի 1-ի դրությամբ	հազ. մարդ	260.1
7.	Այդ թվում՝ քաղաքային	//	74.0
8.	գյուղական	//	186.1
9.	ՀՀ բնակչության ընդհանուր թվաքանակում մարզի բնակչության տեսակարար կշիռը	%	8.6
10.	Քաղաքային բնակչության տես. կշիռը	%	28.4
11.	Գյուղատնտեսական նշանակության հողեր	հա	156916
12.	Այդ թվում՝ վարելահողեր	//	25465

Արարատի մարզը հանրապետության կայուն զարգացող մարզերից մեկն է, որը զբաղեցնելով ընդհանուր տարածքի 7.0 տոկոսը, տալիս է Հայաստանի արդյունաբերական արտադրանքի շուրջ 10.0 և գյուղատնտեսական արտադրանքի 14.8 տոկոսը:

2014 թվականին մարզի տնտեսության հիմնական հատվածների տեսակարար կշիռները ՀՀ համապատասխան ճյուղերի ընդհանուր ծավալում կազմել են.

- արդյունաբերություն – 10.0%
- գյուղատնտեսություն – 14.2%
- շինարարություն – 3.5%

<sup>1</sup> Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը 2010-2014, Եր., 2015, էջ 249-255

- մանրածախ առևտուր – 2.0%

- ծառայություններ – 1.6%:

Տնտեսության հիմքը գյուղատնտեսությունն է: Այն հիմնականում մասնագիտացված է խաղողագործության, պտղաբուծության և բանջարաբուծության մեջ:

Արդյունաբերության առաջատար ուղղությունները սննդամթերքի, ներառյալ՝ խմիչքների, արտադրություններն են, որի մեջ առավել զարգացած են հետևյալ երեք ճյուղերը՝

ա) սննդամթերքի և ըմպելիքի արտադրություն (մրգերի, բանջարեղենի վերամշակում և պահածոյացում, թորած ալկոհոլային խմիչքների արտադրություն),

բ) ծխախոտի արտադրություն (ծխախոտի խմորում՝ ֆերմետացիա),

գ) ոչ մետաղական հանքային արտադրանքի արտադրություն (ցեմենտի, կրի, սաբոցեմենտային իրերի արտադրություն, քարի կտրում և վերամշակում):

Արարատի մարզի տնտեսության մեջ ծանրակշիռ տեղ ունեն գինու-կոնյակի 10-ից ավելի խոշոր գործարաններ, «Արարատ-ցեմենտ», «Ոսկու կորզման ֆաբրիկան», Արտաշատի, Արարատի պահածոների, «Մասիս-տոբակո», «Ինտերնեշնլ Մասիս-տոբակո» գործարանները: Մարզի բազմաճյուղ արդյունաբերության հիմնական ուղղությունը վերամշակող արդյունաբերությունն է:

Սակայն, մարզի ընդհանուր տնտեսական ցուցանիշների մեջ զգալիորեն ցածր է շինարարության տեսակարար կշիռը, որը կազմում է ամբողջ հանրապետության 3.5 տոկոսը, իսկ մանրածախ առևտրինը և ծառայությունների բաժինը՝ ընդամենը համապատասխանաբար 2.0 ու 1.5 տոկոս:

Չայտնի է, որ ցանկացած երկրի, տարածաշրջանի կամ բնակավայրի սոցիալ-տնտեսական ցուցանիշների համակարգում իր ուրույն տեղն ունի կրթությունը, մշակույթը, զբոսաշրջիկությունը և այլն, որոնց միջոցով էլ է գնահատվում տվյալ մարզի և տարածաշրջանի դերն ամբողջ երկրի համակարգում:

Արարատի մարզն ունի 4 քաղաքային՝ Արտաշատ, Արարատ, Վեդի և Մասիս, ինչպես նաև 93 գյուղական համայնք: 2010-2014 թվականների ընթացքում Արարատի մարզի գյուղական բնակչությունն ավելացել է 4655-ով, 27 գյուղական համայնքնե-

րում բնակչության թվաքանակը նվազել է, իսկ 66-ում աճել է: Ընդ որում, այստեղ չկա որոշակի օրինաչափություն բնակչության աճի կամ անկման շուրջ:

Արտաշատ քաղաք՝ 2015թ. հունվարի 1-ի դրությամբ ուներ 21.5 հազ. բնակիչ, վերջին 4 տարում բնակչության թիվը նվազել է 3.5 հազարով: Քաղաքի արդյունաբերության հիմնական ուղղությունը վերամշակող արդյունաբերությունն է, որում առանձնանում են հատկապես սննդամթերքի և ըմպելիքի արտադրությունը (մրգերի, բանջարեղենի վերամշակում և պահածոյացում, ալկոհոլային խմիչքների արտադրություն), ինչպես նաև ոչ մետաղական հանքային այլ արտադրանքների թողարկումը՝ կղմինդր, աղյուս, թծված կավից շինարարական արտադրատեսակներ, բնական քարերից երեսպատման սալիկներ:

Արարատ քաղաքը (20.4 հազար բնակիչ) գտնվում է Երևանից 47 կմ հեռավորության վրա, հիմնադրվել է 1936 թվականին: Արարատ քաղաքում զարգացած է ոչ մետաղային հանքային և շինանյութերի արտադրությունը՝ ցեմենտի, կրի ասբոցեմենտային իրերի արտադրությունը: Արարատի տարածաշրջանում զարգացած է նաև գյուղատնտեսական հումքի վերամշակման արտադրությունը:

Վեդի քաղաքը (11.6 հազար բնակիչ) գտնվում է Վեդի գետի աջ ափին, Երևանից 48 կմ հեռավորության վրա: Քաղաքի արդյունաբերության հիմնական ուղղությունը բնական քարերից երեսպատման սալիկների, էլեկտրական և հսկիչ սարքերի ու սարքավորումների, պլաստմասսաներից պատրաստվող շինարարական իրերի արտադրությունը: Վեդի քաղաքի տնտեսական կյանքում կարևոր տեղ ունի նաև գյուղատնտեսությունը, որի հիմնական ուղղությունը բուսաբուծությունն է, հատկապես դրա բազայի վրա գյուղմթերքների վերամշակման արտադրությունը:

Մասիս քաղաքը (20.5 հազար բնակիչ) գտնվում է Հրազդան գետի ձախ ափին, Երևանից 14 կմ հեռավորության վրա: Խոշոր երկաթուղային ապրանքային բազա է, որն ունի միջնարդային նշանակություն, սպասարկում է նաև մայրաքաղաքին: Մասիս քաղաքի արդյունաբերական հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որում գերակշիռ տեղ է զբաղեցնում մրգերի, բանջարեղենի վերամշակումը և պահածոյացումը, թղթի և ստվարաթղթի տարաների արտադրությունը, ծխախոտի խմորումը (Ֆերմետացիան):



Արարատ, Վեդի և Մասիս քաղաքների բնակչության թիվը 2010-2014թթ. նվազել են, համապատասխանաբար 0.4, 2 և 1.8 հազարով, ինչը մտահոգիչ է ժողովրդագրական առումով՝ բացասաբար է ազդում սոցիալ-տնտեսական վիճակի վրա:

## 2.2. Ագրարային քաղաքականության առանձնահատկությունները Արարատի մարզում

Ագրարային քաղաքականության տակ հասկացվում է նպատակների և միջոցառումների համակարգ՝ ուղղված տնտեսության ագրարային ոլորտի զարգացմանը: Այս դեպքում «ագրարային քաղաքականությունը ձևակերպվում է, որպես պետության նպատակաուղղված գործունեություն ագրարային ոլորտում ֆինանսա-տնտեսական և քաղաքական պայմանների ստեղծմանը»:<sup>1</sup>

Լայն իմաստով ագրարային քաղաքականությունն ընդգրկում է՝

- ագրարային ոլորտի զարգացման քաղաքականություն,
- պարենային քաղաքականությունը, որը վերաբերվում է բնակչության պարենամթերքով ապահովմանը,
- ագրոպարենային քաղաքականություն, կապված գյուղատնտեսության սպասարկման հիմնախնդիրների հետ, ընդգրկելով առևտուրը, վերամշակումը, գյուղատնտեսության համար արտադրության միջոցների արտադրության ոլորտը,
- արտաքին առևտրի ագրարային քաղաքականություն:


Ռուս ագրոտնտեսագետներ Վ.Միլոսերդովը և Կ.Միլոսերդովը ագրարային քաղաքականությունը բնորոշում են որպես «գաղափարների, նպատակների, միջոցների և մեթոդների ձևավորման համախումբ, քաղաքի և գյուղի, ինչպես նաև հենց գյուղի ներսում հարաբերությունների կարգավորում»<sup>2</sup>, իսկ Ի.Կալաշնիկովը և Վ.Նովիչկովան այն բնորոշում են որպես «պետության գործունեություն, որն ուղղված

<sup>1</sup> Новичков В.И., Калашников И.Б., Аграрная политика: Учеб. пособие – М: Издательско-книготорговый центр “Маркетинг”, 2001, էջ 10

<sup>2</sup> Милосердов В.В., Милосердов К.В., Аграрная политика России - XX век.- М.: ФГУП “ВО Минсельхоза России”, 2002, էջ 14

է ֆինանսա-տնտեսական գործընթացների վրա ներգործման ուղիով՝ ագրարային քաղաքականության մեջ առավել գործուն ձևերով և մեթոդներով»:<sup>1</sup>

Ագրարային քաղաքականության նպատակը, որպես երկրի տնտեսական քաղաքականության բաղադրիչ, ներկայացվում և լրացվում է փոխկապակցված ցուցանիշների միջոցով՝ տես գծապատկեր 1:<sup>2</sup>



**Գծապատկեր – 1. Տնտեսական քաղաքականության նպատակների բազմանկյունը**

ՀՀ կառավարությունը 2010թ. նոյեմբերին ընդունեց «ՀՀ գյուղի և գյուղատնտեսության 2010-2020թթ. կայուն զարգացման ռազմավարություն»<sup>3</sup>, որում սահմանված է նպատակների 17 խումբ, որոնք ներառում են հակաճգնաժամային մեխանիզմներ, գյուղատնտեսական արտադրության հզորացում, գյուղատնտեսական կոոպերատիվների զարգացում, պարենային անվտանգության ապահովում, հողօգտագործման արդյունավետության բարելավում, օրգանական գյուղատնտեսության զարգացում և ճյուղի այլ առաջնահերթ ուղղություններ:

<sup>1</sup> Калашников И.Б., Новичкова В.И., Аграрная политика. М., 2001, էջ 21

<sup>2</sup> Аграрная политика: под ред. А.П.Зинченко. М.: Колос, 2004, էջ 28

<sup>3</sup> ՀՀ կառավարության «ՀՀ գյուղի և գյուղատնտեսության 2010-2020 թթ. կայուն զարգացման ռազմավարություն», 2010, նոյեմբեր

Լ.Խոդովը նշում է, որ «շուկայական տնտեսության թույլ կողմերից է արտադրության, կապիտալ ներդրումների, եկամտի և զբաղվածության համաչափ տարածաշրջանային տեղաբաշխման ապահովման դժվարությունները: Արտադրության, կապիտալի և աշխատուժի համակենտրոնացման մշտական գործընթացը ոչ մեծ տարածքներում (տնտեսական ագլոմերացիայի զարգացումը) այլ տարածաշրջանների հաշվին, զգալի չափով բխում է շուկայական մեխանիզմի հատկանիշներից: Համեմատաբար թույլ զարգացած տարածաշրջաններում աշխատավարձի և ինվեստիցիաների պայմանները միշտ էլ վատ են լինում: Մրցունակ բանվորները և ծառայողները, ձեռներեցները և ակտիվ երիտասարդությունը ձգտում են դեպի քաղաքային ագլոմերացիաներ: Այդ տարածաշրջաններում գնողունակ պահանջարկը կրճատվում է, դրա հետ միասին նվազում է կապիտալ ներդրումների խթանը, անկախ ցածր աշխատավարձից և հողի ցածր գնից»:<sup>1</sup> Դա վերաբերվում է առաջին հերթին գյուղական բնակավայրերին և նրա հիմնական ոլորտին՝ գյուղատնտեսական արտադրությանը:

Շուկայական տնտեսության պայմաններում ագրարային քաղաքականությունը, որպես պետության սոցիալ-տնտեսական քաղաքականության բաղադրիչ, պետք է ուղղված լինի բնակչությանն ապահովելու սննդամթերքով, ինչպես նաև նպաստելու գյուղի սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանը:

Գյուղատնտեսական շուկան զգալի չափով տարբերվում է մյուս շուկաներից ինքնակարգավորման գործառույթով, քանի որ այն իրականացվում է նեղ շրջանակներում՝ պահանջարկի ու առաջարկի ցածր առաձգականության և գների բարձր առաձգականության պայմաններում: Այդ ամենը պահանջում է շուկայի կայունության պահպանման մեխանիզմների կիրառությունը՝ գների միջակայքի սահմանում, ապահովագրական պաշարների ստեղծում և պետական խիստ միջամտություն: Դա կապված է նաև արտաքին առևտրային քաղաքականության հետ, որը կոչված է նպաստելու շուկայի կայունացմանը, ինչը պահանջել և պահանջում է պետական մեծ ծախսեր և պետության կողմից կարգավորման կոշտ մոտեցումներ:<sup>2</sup>

<sup>1</sup> Ходов Л.Г., Основы государственной экономической политики: Учебник.- М.: БЕК, 1977.- էջ 32

<sup>2</sup> Назаренко В.И., Аграрная политика Европейского Союза/ Институт Европы РАН – м.: ООО “Маркет ДС Корпорейшн”, 2004, էջ 6-7

Եթե հաշվի առնենք, որ ագրարային ոլորտն իրենից ներկայացնում է մի ամբողջական համակարգ, ապա նրա զարգացման քաղաքականությունն ընդգրկում է ագրոպարենային համալիրը՝ բուն գյուղատնտեսական արտադրությունը, գյուղատնտեսական մթերքների վերամշակումը, պահպանումը, իրացումը և ենթակառուցվածքները, որոնք պետք է գործեն փոխկապակցված՝ ինտեգրվելով և լրացնելով միմյանց: Նշանակում է մարզի մասշտաբով անհրաժեշտ է ապահովել միկրոտնտեսական և մակրոտնտեսական հավասարակշռություն: Ընդ որում, չգերազնահատելով և չթերազնահատելով ոչ շուկային և ոչ էլ պետությանը, այդուհանդերձ դրանց միջև պետք է կատարել աշխատանքի որոշակի բաժանում՝ շուկային թողնելով միկրոտնտեսական հավասարակշռության ապահովումը՝ համապատասխան տնտեսական և ագրարային քաղաքականության գործիքների ու մեխանիզմների միջոցով, իսկ պետությանը՝ մակրոտնտեսական հավասարակշռությունը դրամավարկային և հարկաբյուջետային մեխանիզմների միջոցով:

Արարատի մարզում ագրարային քաղաքականության հիմնական նպատակն է մարզում գյուղատնտեսության համար անհրաժեշտ ենթակառուցվածքների ձևավորման և կատարելագործման միջոցով ավելացնել բուսաբուծական և անասնաբուծական մթերքների ծավալները, բարձրացնել արտադրության արդյունավետության աստիճանը, ինչի արդյունքում կավելանան գյուղացիական տնտեսությունների եկամուտները և գյուղական համայնքներում կկրճատվի աղքատությունը, կբարելավվի բնակչության սոցիալական վիճակը:

Քանի որ Արարատի մարզի ագրոպարենային համալիրի «արտադրություն-սպառում» շղթայի ամենաթույլ օղակը համարվում է գյուղմթերքների վերամշակումը, ապա ագրարային քաղաքականությունն առաջին հերթին պետք է նպատակաուղղված լինի հենց այդ հիմնախնդրի լուծմանը: Ագրարային ոլորտի զարգացմանը խթանելու, արտադրական կարողությունների վերագործարկման, աշխատատեղերի ավելացման նպատակով անհրաժեշտ է մարզում իրականացնել հետևյալ միջոցառումները.

- հստակ գնահատել գյուղատնտեսական մթերքների վերամշակման կարողությունների չափերը,

- արդիականացնել արտադրական տեխնոլոգիան, ներդնել ժամանակակից առաջավոր տեխնիկա և սարքավորումներ, որոնք կնպաստեն արտադրանքի ինքնարժեքի նվազեցմանը, որակի և մրցունակության բարձրացմանը,
- արտոնյալ վարկերի տրամադրման միջոցով նպաստել մարզի համայնքներում պտղի և բանջարեղենի վերամշակման փոքր արտադրությունների ստեղծմանը, ինչը հնարավորություն կտա կրճատել տրանսպորտային ծախսերը, մեծացնել մթերումների ծավալները, ընդլայնել անվանացանկը,
- սեզոնային տատանումները մեղմելու և վերամշակող ձեռնարկությունների կարողությունները լիարժեք օգտագործելու նպատակով աջակցել մարզի պահածոների արտադրության դիվերսիֆիկացիային ու անվանացանկի ընդլայնմանը, կազմակերպել մսի, ձկան, սնկի և այլ պահածոների արտադրատեսակների արտադրություն,
- առանձնահատուկ ուշադրություն դարձնել ձկնաբուծության զարգացմանը, ուսումնասիրել մարզում ձկան վերամշակման (պահածոյացում, չորացում, ապխտում, սառեցում) արտադրության կազմակերպմանը, ինչը թույլ կտա բարձրացնելու վերամշակվող ձկան արտադրության արդյունավետությունը,
- հաշվի առնելով այն փաստը, որ գնալով ավելանում է Արարատի մարզի խաղող արտադրող տնտեսությունների թիվը և արտադրության չափերը, անհրաժեշտ է մեծացնել խաղողի մթերման ծավալները, օժանդակել խաղողագործության ոլորտի զարգացմանը՝ շեշտը դնելով հատուկ տեխնիկական սորտերի ավելացման վրա: Դրա հետ միասին անհրաժեշտ է նպաստել գինեգործության օժանդակ արտադրությունների (տարաների, տակառների) զարգացմանը:

Ժամանակակից շուկայական տնտեսավարման պայմաններում, ագրարային արտադրության զարգացման գործում բարձրանում է խորհրդատվական ծառայությունների նշանակությունը:

Արարատի մարզի ագրարային ոլորտի խորհրդատվական ծառայությունների հիմնական նպատակն է բարձրացնել մարզում խորհրդատվական ծառայությունների մատչելիության աստիճանը՝ կիրառելով առավել նպատակային հասցեագրված

մոտեցումներ: Դրա ռազմավարությունը ենթադրում է մի շարք միջոցառումների իրականացում, որոնցից առավել կարևորներն են.

- մարզային խորհրդատեղեկա-տեղեկատվական ծառայության կողմից կազմակերպել դասընթացներ գյուղատնտեսական մթերքների արտադրության, դրանց վերամշակման ժամանակակից տեխնոլոգիաների կիրառման վերաբերյալ,
- անհատական գյուղացիական տնտեսությունների շրջանում տնտեսավարման առաջավոր ձևերի, մասնավորապես գյուղատնտեսական կոոպերատիվների արմատավորման նպատակով անցկացնել դասընթացներ,
- նոր կիրառվող թունաքիմիկատների, պարարտանյութերի, անասունների բուժման և պատվաստման կանոնների վերաբերյալ խորհրդատվություն տրամադրել ագարակատերերին,
- մշակել և գյուղացիական տնտեսությունների շրջանակներում տարածել տեղեկատվական թերթիկներ, բուկլետներ գյուղատնտեսության հետ առնչվող մասնագիտական աշխատանքների վերաբերյալ:

Ագրարային քաղաքականության իրականացման պայմաններում անհրաժեշտություն է զգացվում նաև կիրառել անհատական խորհրդատվություններ: Դրանցից կարելի է առանձնացնել հետևյալները, որոնց մասին նշվում է ՀՀ Արարատի մարզի 2011-2014 թվականների սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրում.<sup>1</sup>

- 1) Արտաշատի «Արտֆուդ» և Արարատի «Բորոդինո» պահածոների գործարանները անհրաժեշտ է, որ աշխատեն ամբողջ հզորությամբ: Պետք է վերագործարկվի Մասիսի պահածոների գործարանը, համայնքներում պտղի, բանջարեղենի մթերման և վերամշակման համար ստեղծվեն փոքր ձեռնարկություններ:
- 2) Մարզի որոշ տարածաշրջաններում անհրաժեշտ է վերագործարկել կաթի մթերման և վերամշակման, միս և մսամթերք վերամշակող, ծխախոտի ֆերմենտացիոն ու բուսայուղերի արտադրության փոքր արտադրամասեր, կաշվի, մորթեղենի վերամշակման, դեղաբույսերի արտադրության և փաթեթավորման արտադրամասեր:

<sup>1</sup> ՀՀ Արարատի մարզի 2011-2014թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիր, Արտաշատ, 2010, էջ 154

Ագրարային քաղաքականություն իրականացնողները գտնում են, որ այդ նպատակներին կարելի է հասնել՝ ընդլայնելով արտադրանքի իրացման հնարավորությունները, ակտիվորեն համագործակցելով առկա և պոտենցիալ գնորդների հետ: Առաջնահերթությունը պետք է տրվի փոքր և միջին ձեռնարկությունների (ՓՄՁ) ստեղծմանը և դրանց գործունեության ընդլայնմանը: Արարատի մարզում ՓՄՁ-ների գործունեության ակտիվացումը կնպաստի համապատասխան ենթաճյուղերի վերականգնմանը: Անհրաժեշտ է նաև բանջարաբուստանային մշակաբույսերի և պտղաբուծության զարգացման հետ համատեղ նախադրյալներ ստեղծել գյուղատնտեսական արտադրանքի վերամշակման, պահպանման և իրացման համար: Այս պարագայում առավել կարևորվում է մարզում և նրա տարածաշրջաններում սառնարանային տնտեսությունների ստեղծումը: Ընդհանուր առմամբ ՓՄՁ-ն պետության տնտեսական քաղաքականության նպատակների իրականացման առանցքն է, որն օգտագործելով յուրաքանչյուր տարածաշրջանի տնտեսական զարգացմանն առանձնահատկություններն ու ներուժը, խթանելով տնտեսվարող սուբյեկտների միջև միջհամայնքային և միջտարածաշրջանային համագործակցության կապերը, ձգտում է հաղթահարել տնտեսական զարգացման անհամամասնությունները և ապահովել կայուն, համաչափ զարգացում ամբողջ մարզում: ՀՀ Արարատի մարզի զարգացման ծրագրով ՓՄՁ աջակցության միջոցառումները նախատեսվում է իրականացնել «Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամի գործունեության շրջանակներում: Գյուղատնտեսական արտադրության առանձնահատկություններով պայմանավորված գյուղացիական տնտեսություններն անհրաժեշտություն են ունենում կապիտալ ներդրումների և շրջանառու միջոցների նորմատիվների լրացմանը: Դրա հիմնական ձևը վարկավորումն է, որն իրականացվում է առևտրային բանկերի միջոցով: Արարատի մարզի գյուղատնտեսության ոլորտում վարկավորումն իրականացնում է «Ակբա-կրեդիտ Ագրիկոլ» բանկը: Գյուղացիական տնտեսություններին վարկեր են տրվում կարճատև ժամկետով և զգալիորեն բարձր տոկոսադրույքներով, ինչի հետևանքով գյուղացիական տնտեսությունները տարերային աղետների պատճառով, կորցնելով բերքի մեծ մասը, հաճախ հայտնվում են ծանր կացության մեջ: «Ակբա-կրեդիտ Ագրիկոլ» բանկը վարկեր է տրամադրում

Արտաշատի, Արարատի և Մասիսի տարածաշրջանների բաժանմունքների միջոցով: Այսպես, 2012 թվականին գյուղատնտեսության ոլորտում ընդհանուր առմամբ վարկ է տրամադրվել շուրջ 11.000 սուբյեկտի՝ մոտ 8 մլրդ դրամի չափով: Ներկայումս ՀՀ կառավարության կողմից սուբսիդավորվում է գյուղատնտեսական վարկերի տոկոսադրույքի 4.6%-ը, որը ոչ միայն ֆինանսական սատարում է, այլ նաև գյուղացիներին որոշակի վստահություն է ներշնչում իրենց տնտեսական գործունեության մեջ:

Այսպիսով, հակիրճ ուսումնասիրելով ագրարային քաղաքականության հիմնական ուղղությունները ՀՀ Արարատի մարզում, կարելի է հանգել այն եզրակացության, որ դրա խելացի իրականացումը կբերի՝

- մարզի բնական ռեսուրսների նպատակային օգտագործմամբ բուսաբուծության արտադրանքի, հատկապես, տարբեր պտղատեսակների, խաղողի, բանջարեղենի արտադրության ծավալների ավելացմանը, ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացմանը, գյուղմթերքների ապրանքայնության մակարդակի մեծացմանը, պտղի և դրանց վերամշակումից ստացվող արտադրատեսակների արտահանման ծավալների ավելացմանը,
- մարզում տոհմային տնտեսությունների ձևավորմանը, արհեստական սերմնավորման աշխատանքների ընդլայնման ճանապարհով անասունների տոհմային հատկանիշների պահպանմանը և կատարելագործմանը, տոհմաբուծական ծառայությունների զարգացմանը,
- գյուղացիական կոոպերատիվների կազմավորման միջոցով գյուղտեխնիկայի համատեղ օգտագործմամբ մարզի գյուղտեխնիկայով ապահովվածության մակարդակի բարձրացմանը,
- անմշակ հողերի ցանքաշրջանառության մեջ ներգրավելու միջոցով հողային և աշխատանքային ռեսուրսների, ինտենսիվ-առաջավոր տեխնոլոգիաների օգտագործմանը, ինչպես նաև ոռոգելի ցանքատարածությունների ընդարձակմանը: Կբարելավվի ոռոգման համակարգը, կկառուցվի նոր և կվերանորոգվեն հին ջրագծերը, պոմպակայանները, ջրանցքները, կբարելավվի ոռոգման ներտնտեսային համակարգը և կվերանա ջրօգտագործման բնագավառում թերությունները, կկրճատվի ջրի կորուստները,



- կերային բազայի, բազմամյա արժեքավոր կերային մշակաբույսերի ծավալների ավելացմանը, խոտհարքների և արոտների արդյունավետ օգտագործմանը, ինչի հաշվին կբարձրանա անասնապահական մթերքների (կաթի, մսի) արտադրության ծավալները, անասնապահական մթերքների ապրանքայնության աստիճանը,
- անասնաբուժական ծառայությունների, զոոտեխնիկական անասնաբուժական պահանջների բարելավմանը, որի արդյունքում կբարձրանա գյուղատնտեսական կենդանիների մթերատվությունը, անասնապահական մթերքների ծավալների մեծացումը և ընդհանուր ապրանքայնության մակարդակի աճը,
- զարգացած համայնքային և շուկայական ենթակառուցվածքների, հակակարկտային ծառայությունների, ապահովագրական համակարգի ձևավորմանը, ներհամայնքային և միջհամայնքային (ներմարզային) բարեկարգ ճանապարհների, հուսալի գործող կապի և հաղորդակցության ապահովմանը,
- տեղեկատվական և խորհրդատվական համակարգի կատարելագործմանը, մակարդակի բարձրացմանը, ինչը հնարավորություն կտա նպատակային օգտագործել Արարատի մարզում գյուղատնտեսական մասնագետների գիտելիքները, փորձը, նյութատեխնիկական միջոցները և բոլոր առկա նյութական ու մարդկային ռեսուրսները:

Ագրարային քաղաքականությունն ինքնին կոչված է նպաստելու ոլորտի հետագա զարգացմանը, իսկ դրա համար անհրաժեշտ է վերլուծել նաև Արարատի մարզի գյուղատնտեսության վիճակը, բացահայտել նվաճումները, վերհանել չօգտագործված հնարավորությունները, ինչը թույլ կտա մշակելու մարզի կտրվածքով և ըստ առանձին տարածաշրջանների ու ճյուղերի հետագա զարգացման ռազմավարությունը և մարտավարությունը:

### **2.3. Գյուղատնտեսության տեղը Արարատի մարզի սոցիալ-տնտեսական զարգացման գործընթացում և առանձնահատկությունները**

Յուրաքանչյուր երկրի, նրա առանձին մարզերի և նույնիսկ տարածաշրջանների սոցիալ-տնտեսական մակարդակը բնորոշվում է առաջին հերթին նյութական արտադրության զարգացման աստիճանով, որում կարևոր տեղ է զբաղեցնում գյուղատնտեսությունը: ՀՀ Արարատի մարզը համարվում է գյուղատնտեսական տարածաշրջան: Բավական է նշել, որ մարզի բնակչության գերակշիռ մասը՝ 71.5% (186.1 հազար մարդ) կազմում է գյուղական ազգաբնակչությունը: 2014 թվականի դրությամբ մարզում ընդհանուր տնտեսությունների թիվը կազմել է 58228 միավոր, որից գյուղացիական տնտեսությունները՝ 42565 (43.1%), մնացածը բաժին է հասնում առևտրի, սպասարկման, շինարարության, արդյունաբերության և մյուս ոլորտներին: Մարզում գյուղատնտեսական մթերքների վերամշակող համեմատաբար խոշոր ձեռնարկությունները 20 է, որոնցից կարելի է առանձնացնել 17 գինու-կոնյակի արտադրության, երկու պահածոների (Արտաշատի «Արտֆուդ» և Արարատի «Բորոդինո») և ծխախոտի մշակության «Մասիս Տոբակո» գործարանները: Հայտնի է, որ գյուղատնտեսության վարման հիմնական նախապայմանը և արտադրության գործոնը հանդիսանում է հողը: ՀՀ Արարատի մարզի գյուղատնտեսական հողատեսքերի վերաբերյալ 2013 թվականի հունվարի 1-ի դրությամբ տվյալները բերվում են աղյուսակ 2.4-ում:

Աղյուսակի տվյալները վկայում են այն մասին, որ վերջին 16 տարվա ընթացքում մարզում ընդհանուր գյուղատնտեսական նշանակության հողատեսքերն ավելացել են շուրջ 67 տոկոսով՝ 93714 հա-ից հասնելով 156916 հա-ի: Դրա հետ միասին որոշակի տեղաշարժ է տեղի ունեցել գյուղատնտեսական հողատեսքերի կառուցվածքում: Նվազել է վարելահողերի բացարձակ մեծությունը, միաժամանակ ընդարձակվել է բազմամյա տնկարկների տարածքները (42.6%-ով), արոտավայրերը (59.4%):

ՀՀ Արարատի մարզի գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի չափը և կառուցվածքը 1997 և 2014թ. հունվարի 1-ի դրությամբ<sup>1</sup>

տարեթիվ	գյուղատնտեսական հողատեսքեր (հա)	այդ թվում				
		վարելահող (հա)	բազմաձյա տնկարկներ (հա)	խոտհարքներ (հա)	արոտավայրեր (հա)	վալ հողատեսքեր (հա)
1997թ.	93714	35466	8789	2874	46584	-
2014թ.	156916	25382	12419	2808	74276	42031
հողատեսքերի տես. կշիռը 2014թ. (%)	100	16.2	7.9	1.8	47.3	26.8

Միայն 2009 թվականին 2008-ի համեմատ մարզում վարելահողերը կրճատվել են 254.4 հեկտարով: Դա բացատրվում է նրանով, որ խաղողի և պտղատու այգիներն ավելի եկամտաբեր մշակաբույսեր են: Մարզի հողատարածքներից շուրջ 9300 հեկտար չի մշակվում գերխոնավ, ոռոգման ջրի բացակայության և մանր գյուղացիական տնտեսությունների ցածր վճարունակության պատճառով: Մարզում առկա է 8000 հեկտար գերխոնավ և աղակալած հողեր, որոնք չեն մշակվում բոլորովին կամ էլ մշակվում են մասամբ:

Մարզի վարչական սահմաններում համայնքների վարչական սահմաններից դուրս պետական սեփականություն հանդիսացող հողերից տրվում են վարձակալության շուրջ 19200 հա, որից գանձվում է միջին հաշվով տարեկան 12.6 մլն դրամ, 1 հա-ին՝ 656 դրամ:

Արարատի մարզի գյուղատնտեսության վերաբերյալ, համակողմանի կարծիք կազմելու համար, առաջին հերթին պետք է ցույց տրվի նրա տեղն ու դերը հան-

<sup>1</sup> Աղյուսակը կազմվել է ըստ «ՀՀ Արարատի մարզի 2011-2014թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի» և Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը 2010-2014, Եր., 2015, էջ 240

րապետության գյուղատնտեսության համակարգում, իսկ այնուհետև բացահայտվի արտադրության մասնագիտացման աստիճանը:

## Աղյուսակ 2.5

### Հայաստանի Հանրապետության և ՀՀ Արարատի մարզի գյուղատնտեսության համախառն արտադրանքը 2008-2014 թվականներին<sup>1</sup>

	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2014-ը 2008-ի նկատ- մամբ (%-ով)
Հայաստանի Հանրապետություն (մլրդ դրամ)	628.1	552.1	636.7	795.0	841.5	919.1	993.5	158.2
այդ թվում՝ բուսաբուծություն	405.9	346.9	392.7	765.1	516.0	572.8	605.7	149.2
անասնաբուծություն	222.2	205.4	244.0	329.9	325.5	346.3	387.8	174.5
ՀՀ Արարատի մարզ (մլրդ դրամ)	100.5	89.0	108.5	116.8	125.3	136.2	141.4	141.3
այդ թվում՝ բուսաբուծություն	82.2	74.5	91.2	94.3	102.9	128.1	113.3	137.8
անասնաբուծություն	18.3	14.5	17.3	33.5	22.4	24.2	28.1	153.5
Արարատի մարզի տես. կշիռը ՀՀ-ում ընդհանուրը (%)	15.9	16.1	17.0	14.7	14.9	14.8	14.2	-
որից՝ բուսաբուծություն (%)	20.2	21.5	23.2	20.3	19.9	23.8	18.7	-
անասնաբուծություն (%)	8.2	7.1	7.1	6.8	6.9	7.0	7.2	-

Աղյուսակ 2.5-ում բերված են Հայաստանի Հանրապետության և ՀՀ Արարատի մարզի գյուղատնտեսության համախառն արտադրանքի ցուցանիշներն ըստ բուսաբուծության և անասնաբուծության ոլորտների 2008-2014 թվականների համար: Բերված տվյալներից տեսնում ենք, որ վերջին վեց տարիների ընթացքում մարզում գյուղատնտեսության համախառն արտադրանքի աճը կազմել է շուրջ 41.3% (100.5 մլրդ դրամից հասցվելով 141.4 մլրդ-ի), այն դեպքում, երբ միջին հանրապետականի աճը կազմել է 58.2%:

<sup>1</sup> Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը 2006-2010, Եր., 2011, էջ 38 և ՀՀ մարզերը և Երևան քաղաքը 2010-2014, Եր., 2015, էջ 39

2014 թվականին մարզի գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալը կազմել է 141.4 մլրդ դրամ, որը կազմել է հանրապետության գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալի 14.2 տոկոսը, ինչը 3-րդն է ՀՀ-ում Գեղարքունիքի (18.0%) և Արմավիրի մարզից (17.8%) հետո:

Ինչպես ամեն մի երկրում, այնպես էլ ՀՀ-ում և նրա Արարատի մարզում գյուղատնտեսական արտադրության մասնագիտացումը թելադրվում է բնակլիմայական և հողային ռեսուրսների առկայության պայմաններով: Ընդհանուր առմամբ Արարատի մարզի բնակլիմայական պայմանները նպաստավոր են հացահատիկի, պտղի, բանջարեղենի, բոստանային մշակաբույսերի և իհարկե խաղողի արտադրության համար, որոնց ցանքատարածությունների, բերքատվության ու համախառն բերքի վերաբերյալ տվյալները Հայաստանի Հանրապետության և ՀՀ Արարատի մարզի 2008-2014 թվականների համար բերվում են աղյուսակ 2.6-ում:

2.6 աղյուսակում բերված տվյալների վերլուծությունից երևում է, որ մարզի մշակաբույսերի բերքատվության ցուցանիշները զգալիորեն բարձր են հանրապետության միջին ցուցանիշներից, իսկ հացահատիկի ցանքատարածությունների նվազման վրա ազդում է նրա արտադրանքի բարձր ինքնարժեքը և համեմատաբար ցածր շուկայական գինը:

Ուսումնասիրվող ժամանակահատվածում Արարատի մարզում անընդհատ ավելանում է բանջարեղենի արտադրությունը, որի ծավալը 2014 թվականին կազմել է 341.0 հազ. տոննա: Մարզի «Արտֆուդ» և «Բորոդինո» պահածոների գործարանները տարեկան միջին հաշվով մթերում են 26-27 հազար տոննա (ընդհանուր արտադրանքի մոտ 8-9 տոկոսը), մնացած բանջարեղենի իրացման հարցում գյուղացիական տնտեսությունները կրում են դժվարություններ, որն էլ չի նպաստում բանջարաբուծության զարգացմանը: 2008-2014 թվականներին մարզում ավելացել է նաև բոստանային մշակաբույսերի ցանքատարածությունները և համախառն բերքը, որի իրացման հարցում գյուղացիական տնտեսությունները նույնպես ունեն դժվարություններ: Մարզում՝ հիմնականում Արտաշատի և Արարատի տարածաշրջաններում աճեցվում են ծիրան – 3044 հեկտար և դեղձ – 2160 հեկտար: Հանրապետության պտղի և հատապտղի շուրջ 27-28 տոկոսը արտադրվում է Արարատի մարզում:

Աղյուսակ 2.6

ՀՀ և ՀՀ Արարատի մարզի բուսաբուծության ցուցանիշներն ըստ մշակաբույսերի արտադրության 2008-2014թթ.<sup>1</sup>

Մշակաբույսերը	Ցուցանիշները	Հայաստանի Հանրապետություն							ՀՀ Արարատի մարզ						
		2008	2009	2010	2011	2012	2013	2014	2008	2009	2010	2011	2012	2013	2014
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
Հացահատիկ և հատիկաընդեղեն	Ցանքատարածությունները (հա)	172838	171633	159307	157812	172206	178367	188695	5456	5120	4880	5073	5516	6041	6572
	Բերքատվությունը (գ/հա)	24.1	22.6	20.7	27.9	26.5	30.8	31.8	38.6	38.8	35.2	39.9	35.8	42.0	46.7
	Համախառն բերքը (հազ. տոննա)	415.4	374.9	326.4	440.7	456.1	548.8	590.6	21.2	19.9	17.2	20.2	19.7	23.2	30.7
Կարտոֆիլ	Ցանքատարածությունները (հա)	34298	31998	28362	28675	31243	30680	31552	1037	905	796	802	896	781	782
	Բերքատվությունը (գ/հա)	188.7	184.4	170.1	194.3	206.7	214.3	232.2	308.5	317.6	303.8	305.5	306.8	305.9	333.1
	Համախառն բերքը (հազ. տոննա)	648.6	593.6	482.0	557.3	647.2	660.5	733.2	32.8	28.9	24.3	24.5	27.5	24.2	26.0
Բանջարանոցային մշակաբույսեր	Ցանքատարածությունները (հա)	24219	23914	23506	25010	25211	25403	26412	6021	6181	6427	6826	6404	6330	6533
	Բերքատվությունը (գ/հա)	321.4	327.1	294.2	326.7	325.0	333.7	350.5	401.8	420.4	412.7	412.2	453.1	471	486.1
	Համախառն բերքը (հազ. տոննա)	825.3	819.8	707.6	787.1	849.0	876	954.6	265.1	266.5	269.0	285.3	385.0	306.2	341.0
Բոստանային մշակաբույսեր	Ցանքատարածությունները (հա)	5446	6163	4476	5764	5128	5356	5832	1242	1709	1404	1482	1380	1515	1770
	Բերքատվությունը (գ/հա)	334.5	350.6	296.0	313.8	399.9	388.5	421.4	402.4	393.8	378.8	394.5	467.3	431.5	463.8
	Համախառն բերքը (հազ. տոննա)	182.2	216.1	132.5	180.9	205.1	208.1	245.8	50.0	67.3	53.2	58.5	64.5	65.4	82.1
Պտուղ և հատապտուղ	Տարածությունը (հա)	36748	36959	37710	37149	39285	40229	40123	7209	7096	7112	6972	7299	7394	7416
	Բերքատվությունը (գ/հա)	101.2	104.4	39.2	73.5	47.0	95.0	80.8	141.1	146.6	79.6	116.4	130.8	135.3	106.9
	Համախառն բերքը (հազ. տոննա)	317.8	332.2	128.5	239.4	331.7	338.1	291.0	91.0	92.8	50.9	75.7	86.4	91.8	70.9
Խաղող	Տարածությունը (հա)	16796	16480	17373	16288	17415	17465	17215	4853	4978	4992	4881	5120	5143	5083
	Բերքատվությունը (գ/հա)	128.0	144.9	151.5	158.0	151.3	149.8	157.7	183.6	126.5	203.0	204.2	199.4	204.2	218.8
	Համախառն բերքը (հազ. տոննա)	185.9	208.6	222.9	229.6	241.4	240.8	261.3	81.3	88.2	93.3	94.7	160.3	104.3	112.2

<sup>1</sup> Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով 2008-2012, Եր., 2013 էջ 39-42, ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով 2010-2014, Եր., 2015, էջ 39-43

Գյուղացիական տնտեսությունները ծիրանը և դեղձը հիմնականում իրացնում են անհատ ձեռներցների միջոցով՝ արտահանելով Ռուսաստան և Վրաստան:

Անշուշտ, ՀՀ Արարատի մարզի համար, որպես այցեքարտ կարելի է համարել խաղողը: Մարզը 2014 թվականի տվյալներով զբաղեցնում է հանրապետության խաղողի տարածքների 29.4 տոկոսը, տալով համախառն բերքի 42.9 տոկոսը: 2014 թվականին արտադրվել է 112.2 հազար տոննա խաղող, 2008-ի 81.3 հազար տոննայի դիմաց: Սակայն մարզի 17 գինու-կոնյակի գործարանները չեն կարողանում մթերել ամբողջ արտադրանքը: Գյուղացիական տնտեսությունները շուրջ 20 հազար տոննա հատուկ սորտի սեղանի տեսակի խաղող պահպանում են սառնարաններում՝ հետագայում իրացնելու նպատակով: Դրանց մի մասը (մոտ 75%) նախատեսվում է արտահանման համար: Այստեղ անհանգստացնողն այն է, որ մարզում տարեցտարի դժվարանում է խաղողի իրացման հարցը, որը կարող է պատճառ դառնալ՝ վերադարձ դեպի 90-ական թվականների կեսերը՝ քանդել դժվարությամբ աճեցված խաղողի այգիները:

Արարատի մարզում համեմատաբար մեծ տարածքներ է հատկացված պտղի, բանջարեղենի, կերային մշակաբույսերի, հացահատիկի և խաղողի արտադրություններին: Ըստ տարածաշրջանների դրանք որոշակիորեն տարբերվում են իրարից: Այսպես, Արարատի տարածաշրջանում զարգացած է խաղողագործությունը, պտղաբուծությունը, բանջար-բոստանային մշակաբույսերի արտադրությունը, Արտաշատի տարածաշրջանում՝ խաղողագործությունը, պտղաբուծությունը, բանջարեղենի մշակությունը, իսկ Մասիսի տարածաշրջանում՝ բանջար-բոստանային, կերային մշակաբույսերի և կարտոֆիլի արտադրությունը: Մարզում մշակվում է ընդամենը 100 հեկտար ծխախոտ: Խորհրդային տարիներին միայն երկու գյուղական համայնքներում (Ուրցաձոր և Շաղափ) մշակվել է շուրջ 400 հա ծխախոտ:

Ներկայումս մարզի բուսաբուծության արդյունավետ վարման հիմքը և հիմնական գործոններից է սերմնաբուծության և տնկարանային տեսության զարգացումը, բարձրորակ սերմերի ու տնկանյութերի արտադրությունը:

Արարատի մարզի Դարակերտ համայնքում է տեղաբաշխված ՀՀ գյուղատնտեսության սերմնաբուծական տնտեսությունը: Սակայն այդ տնտեսության կողմից արտադրված սերմերն իրենց որակով զիջում են ներկրվող սերմերի որակին, ինչի

համար էլ գյուղացիները գերադասում են ոչ թե տեղական, այլ ներկրվողը, իսկ դա չի նպաստում սերմնաբուծության զարգացմանը:

Բուսաբուծության զարգացմանը խոչընդոտում է նաև անհրաժեշտ որակի ու քանակության պարարտանյութերի և թունաքիմիկատների ձեռք բերումը, որի հիմնական պատճառներից է գյուղացիական տնտեսությունների ցածր վճարունակությունը: Բացի այդ, էական դեր է խաղում նաև մարզում գյուղմթերքների իրացման մեծածախ շուկաների բացակայությունը, ինչի պատճառով գյուղացիական տնտեսությունները չեն կարողանում ժամանակին իրացնել արտադրված ամբողջ բերքը:

Արարատի մարզում բնակլիմայական պայմաններից ելնելով գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվությունը կախված է նաև ոռոգման համակարգից: Մարզում 1998 թվականին ոռոգելի հողերի տարածքը կազմել է 37828 հա: 2014 թվականին այն կրճատվել է 3064 հա-ով և կազմել է 34764 հա:<sup>1</sup> Ոռոգման աշխատանքներն իրականացվում են Արտաշատի, Արարատի, Ագատի, Վեդու, Մխչյանի և Մասիսի ջրօգտագործող ընկերությունների կողմից: Ոռոգման ջրի վարձավճարների հավաքագրման աստիճանը կազմում է ընդամենը 90.5 տոկոս, որը հնարավորություն չի տալիս ընդլայնելու ջրովի հողատարածքների շրջանակները և բարելավելու կառույցի աշխատանքները:

Այդուհանդերձ ՀՀ կառավարության և դոնոր կազմակերպությունների ծրագրերով կատարվում են որոշակի աշխատանքներ, որոնցից կարելի է առանձնացնել՝

- 1) Մարզի 15 համայնքներում ներտնտեսային ցանցերը վերանորոգելու և ջրի կորուստները կրճատելու համար կատարվել է 450.3 մլն դրամի աշխատանքներ:
- 2) Մարզի 3 համայնքներում միջտնտեսային ջրատարների կառուցման նպատակով իրականացվել է 88.9 մլն դրամի աշխատանքներ:
- 3) Ոռոգման նպատակով 3 համայնքներում հորատվել է 4 խորքային հորեր:

Սակայն ներկայումս էլ համակարգի բարելավման համար անհրաժեշտ է իրականացնել հետևյալ միջոցառումները.

- գործող ոռոգման համակարգի պահպանում, շահագործում և գույքագրում,
- հողօգտագործողների վերջնական ձևավորում, ինքնահոս ջրամատակարարման ընդլայնում, էլեկտրաէներգիայի ծախսերի կրճատում, ջրի մատակարարող և օգտագործող հարաբերությունների բարելավում,

<sup>1</sup> ՀՀ Արարատի մարզի 2015-2018թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիր, էջ 162



- համայնքներում փոքր ջրամբարների կառուցում, ոռոգման համակարգում առկա հիմնախնդիրների վերանայում և հստակեցում:

Հայաստանի Հանրապետությունում հողի և արտադրության մյուս հիմնական միջոցների սեփականաշնորհման հետևանքով տեղի ունեցավ կերարտադրության չափերի նվազում և անասնագլխաքանակի կրճատում: Այսպես, 1991թ. նախորդ տարվա համեմատ խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը կրճատվեց 67.5 հազար գլխով, խոզերինը՝ 104.6, ոչխարներինը և այծերինը՝ 140.1, իսկ թռչուններինը՝ 6379.1 հազարով:<sup>1</sup> Այդ նույն երևույթը տեղի ունեցավ նաև Արարատի մարզում: Ներկայումս Արարատի մարզի անասնաբուծության հիմնական ուղղվածությունը կաթնամսատու արտադրությունն է, որի վերաբերյալ տվյալները բերվում են աղյուսակ 2.7-ում:

Աղյուսակի տվյալները վկայում են, որ 2008-2015 թվականների ընթացքում մարզում կրճատվել է կովերի գլխաքանակը, ինչի հետևանքով նվազել է նաև անասնաբուծական մթերքների արտադրության ծավալները: Ընդհանրապես, Արարատի մարզը անասնաբուծական ցուցանիշներով զիջում է հանրապետության միջին ցուցանիշներին: Եթե բուսաբուծության արտադրության ցուցանիշներով Արարատի մարզը տալիս է հանրապետության արտադրության 20 տոկոսից ավելին, ապա անասնաբուծության գծով այդ ցուցանիշը կազմում է 7-8 տոկոս (տես աղյուսակ 2.7):

Արարատի մարզի անասնաբուծության կայուն աճի միտում է ապահովում թռչնաբուծությունը: Թեև 2007 թվականի թռչնագրիպի հետ կապված խուճապի հետևանքով զգալիորեն կրճատվեց թռչնաբուծության ծավալները, սակայն հետագա տարիներին դա վերականգնվեց և ունեցավ ավելի մեծ զարգացման աճ: Այստեղ լայն թափով զարգանում է նաև մեղվաբուծությունը՝ մեղվաընտանիքների թիվը երեք տարվա ընթացքում կրկնապատկվել է՝ 2014թ. հունվարի 1-ի դրությամբ կազմել է 19511 հատ:<sup>2</sup>

<sup>1</sup> Армения в цифрах. Краткий статистический сборник. Государственное управление по статистике, гос. регистру и анализу Республики Армения. Ер., 1992, էջ 174

<sup>2</sup> ՀՀ Արարատի մարզի 2015-2018թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիր, էջ 164

Աղյուսակ 2.7

Հայաստանի Հանրապետության և ՀՀ Արարատի մարզի անասնազվխաքանակի և անասնաբուժական հիմնական մթերքների արտադրության հիմնական ցուցանիշները 2008-2015թթ.<sup>1</sup>

Հունվարի 1-ի դրությամբ (հազ.գլ.)	Հայաստանի Հանրապետություն								ՀՀ Արարատի մարզ								2015թ. մարզի տես. կշի- ռը ՀՀ-ում (%)
	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	
1. Խոշոր եղջերավոր անասուններ	629.1	584.8	570.6	571.4	599.2	661.0	677.6	688.6	43.6	40.7	41.2	41.2	41.4	44.2	46.4	46.5	6.8
2. որից՝ կովեր	310.6	283.3	273.9	272.6	283.3	303.3	309.6	313.9	19.0	17.3	16.9	15.7	16.5	17.3	17.7	17.3	5.5
3. Խոզեր	86.7	84.8	112.6	114.8	108.1	145.0	139.8	142.4	13.1	13.4	15.3	12.5	12.0	18.1	19.4	19.4	13.6
4. Ոչխարներ և այծեր	637.1	559.2	511.0	532.5	590.2	674.7	717.6	745.8	72.0	68.9	65.9	66.1	70.5	81.4	92.5	93.3	12.5
5. Չիեր	11.8	11.3	10.8	10.1	9.9	10.8	11.7	11.4	0.6	0.6	0.7	0.6	0.6	0.6	0.7	0.7	6.1
Իրացվել է միս կենդանի քաշով (հազ. տոննա)	122.2	125.9	126.2	124.3	127.9	130.3	146.8	163.3	13.0	13.7	8.5	8.0	8.3	8.7	9.8	11.7	7.2
Կաթ. հազ. տոննա	642	661.9	615.7	600.9	601.5	618.2	657.6	700.4	45.5	42.0	38.0	38.1	36.5	38.2	40.1	43.4	6.2
Չու. (մլն հատ)	525.4	576.1	630.1	702.2	633.6	658.1	615.2	641.8	35.5	45.4	56.3	76.7	55.0	55.0	54.7	59.2	9.2
Բուրդ (տոննա)	1298	1332	1307	1188	1230	1280	1426	1477	196.0	195.0	191.7	152.5	157.1	162.7	164	179.6	12.2

<sup>1</sup> Աղյուսակը կազմվել է՝ ըստ Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով 2006-2010թ., Եր., 2011, էջ 42, ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով 2010-2014թթ., 2015, էջ 43, ՀՀ Արարատի մարզի 2015-2018թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիր

Մարզի գյուղացիական տնտեսություններում 2014թ. դրությամբ գործում են 234 ագարակային տնտեսություններ, որոնք ունեն տասից ավելի կովեր, 100-ից ավել մանր եղջերավոր անասուններ, 5 և ավելի խոզամայրեր, որից Արտաշատի տարածաշրջանում 152, Արարատինը՝ 51 և Մասիսի տարածաշրջանում՝ 31-ը: Մարզում կաթի և մսի մթերման կետերի բացակայության պատճառով գյուղացիական տնտեսությունները չեն կարողանում իրացնել անասնապահական մթերքները տեղական շուկաներում և մանր արտադրողների միջոցով, ինչն էլ բերում է անասնագլխաքանակի կրճատմանը:

Արարատի մարզում անասնակերի ապահովման խնդիրներ գրեթե չկան: Այստեղ տարեկան կուտակվում է 170-180 հազ. տոննա չոր խոտ, որի մի մասը վաճառվում է մարզի սահմաններից դուրս: Առանձին խոշոր ագարակային տնտեսություններ որպես անասնակեր արտադրում են արմատապտուղներ և եգիպտացորենի կանաչ կեր՝ տարեկան շուրջ 1000 տոննա:

Մարզում գործում է ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության և անասնաբուժական պետական տեսչության մարզային կենտրոնը, որն իրականացնում է սննդամթերքի անվտանգության և անասնաբուժության բնագավառում «Սննդամթերքի անվտանգության մասին»<sup>1</sup> և «Անասնաբուժության մասին»<sup>2</sup> ՀՀ օրենքների և իրավական նորմերով սահմանված պահանջներին համապատասխան վերահսկողություն:

Ներկայումս մարզում առաջնային խնդիր է մնում անասնաբուժական պարտադիր միջոցառումների մեջ ընդգրկել հիվանդությունների ցանկի ընդլայնումը և մարզային բազայի կենտրոնի ամրապնդումը, ինչպես նաև անասնաբույժերի ծառայության արդյունավետության բարձրացումը:

Արարատի մարզի գյուղատնտեսական արտադրության մեջ էական տեղ է զբաղեցնում ձկնաբուծությունը: 2014թ. հունվարի 1-ի դրությամբ մարզում հաշվառված 161 ձկնաբուծական տնտեսություններից գործել է 132-ը, որոնց ընդհանուր տարած-

<sup>1</sup> «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենք, ՀՀ ՊՏ 2006/64 (519), 20.12.06

<sup>2</sup> «Անասնաբուժության մասին» ՀՀ օրենք, ՀՀ ՊՏ 2005/40 (412) 24.06.05

քը կազմում է 374 հեկտար:<sup>1</sup> Աճեցվում է կարպ, ծածան, պնդաճակատ և բելոնոր ձկնատեսակներ:

Մասիսի տարածաշրջանում զարգանում է լճակային տնտեսությունները՝ 104 տնտեսվարող սուբյեկտներ 76.6 հա տարածության վրա աճեցնում են իշխան և թառափ տեսակի ձկներ, որոնք տարեկան արտադրում են շուրջ 8000 տոննա ձուկ, ինչը հիմնականում արտահանվում է:

Արարատի մարզի ագրովերամշակող արդյունաբերությունը հիմնականում ներկայացվում է պահածոների և ոգելից խմիչքների արտադրությունը: Մարզում պահածոյագործությունը տնտեսության ավանդաբար զարգացած ոլորտներից է, ինչի նախապայման է պտղի և բանջարեղենի զարգացած արտադրությունը: Մարզում պահածոյագործության առաջատարներն են Արտաշատի և Արարատի գործարանները, որոնք հանդիսանում են ոլորտի խոշոր ընկերություններ ոչ միայն մարզում, այլ նաև հանրապետությունում: Նրանք կայուն փոխհարաբերություններ են հաստատել օտարերկրյա գործընկերների հետ և արտադրանքի հիմնական մասն արտահանում են: Արտադրանքի 30-40%-ն իրացվում է ներքին շուկայում: Մարզում գործում են նաև միջին չափի մի քանի ձեռնարկություններ՝ «Ալիշան», «Մամիկոն և որդիներ» և այլն, որոնց աշխատողների թիվը, սեզոնից կախված, կազմում է 60-80 մարդ:

Արարատի մարզի գյուղմթերքների վերամշակող ճյուղերից է ոգելից խմիչքների արտադրությունը: Մարզում գինու արտադրության ընկերությունները կենտրոնացված են հիմնականում Արտաշատի և Արարատի տարածաշրջաններում: Արարատի մարզում խաղողի մթերումներով և ալկոհոլային խմիչքների արտադրությամբ զբաղվում են Վեդի-Ալկոն, Ավշարի գինու գործարանը, Արարատի գինու գործարանը, Գրեյդ Վելին, Վան-77-ը, Արտաշատի գինու-կոնյակի գործարանը, Շահունյանի, Քաղցրաշենի, Մխչյանի գինու-կոնյակի գործարանները, Տափերականի, Երասխի գինու գործարանները և այլ ընկերություններ, ինչպես նաև Երևանի կոնյակի գործարանի և Արարատ գինու-կոնյակի գործարանի խաղողի մթերման կետերը:

<sup>1</sup> ՀՀ Արարատի մարզի 2015-2018թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիր, էջ 164

Գյուղատնտեսության արդյունավետության բարձրացման և արտադրության ինտենսիվացման գործում կարևոր դերակատարություն ունի գյուղատնտեսական տեխնիկայի ապահովվածությունը:

Հայաստանի գյուղատնտեսության մեքենատրակտորային հավաքակազմը համալրման և նորացման կարիք ունի: Հաշվարկները ցույց են տալիս, որ շահագործվող տրակտորների միայն 4.5 տոկոսն ունի մինչև 12 տարվա շահագործման ժամկետ, մնացածը շահագործվում է 13 տարուց ավելի, որի հետևանքով մեծանում են շահագործման ծախսերը, այդ թվում մեկ էտալոնային հեկտարի հաշվով վառելիքի ծախսը և միջին հաշվով 30 տոկոսով նվազում է արտադրողականությունը:<sup>1</sup>

ՀՀ Արարատի մարզի գյուղատնտեսական տեխնիկայի առկա քանակի և սարքինության աստիճանի վերաբերյալ տվյալները բերված են աղյուսակ 2.8-ում:

### Աղյուսակ 2.8

#### ՀՀ Արարատի մարզում գյուղատնտեսական տեխնիկայի առկա քանակը և սարքինության աստիճանը 2014 թվականի հունվարի 1-ի դրությամբ<sup>2</sup>

	Գյուղատնտեսական տեխնիկայի տեսակները	առկա քանակը (միավոր)	որից սարքին վիճակում (միավոր)	սարքինության աստիճանը (%)	ապահովվածությունը 100 գյուղացիական տնտեսության հաշվով
1.	Բեռնատար ավտոմեքենա	1101	847	76.9	1.43
2.	Կոմբայն	35	31	88.6	0.06
3.	Շարքացան	169	151	89.3	0.27
4.	Կցասայլ	572	480	83.9	0.92
5.	Կուլտիվատոր	280	257	31.8	0.47
6.	Հավաքիչ-մամլիչ	97	88	90.7	0.17
7.	Տրակտոր-գութան	384	357	32.9	0.68
8.	Խոտհնձիչ	111	98	88.3	0.2
9.	Տրակտոր	1272	1028	80.8	2.33
10.	Կերահավաք կոմբայն	20	17	85.0	0.04
11.	Հատիկագտիչ մեքենա	32	27	84.4	0.06

<sup>1</sup> Ավետիսյան Ս., Հայաստանի գյուղատնտեսությունը և ագրովերամշակումը.- «Լիմոն», 2010, էջ 112

<sup>2</sup> Գյուղատնտեսական տեխնիկայի առկայության և սարքինության վիճակի մասին, 2014թ. հունվարի 1-ի դրությամբ, ՀՀ ԱՎԾ, Եր., 2014, էջ 4-9

Ընդհանուր առմամբ, Արարատի մարզում գյուղատնտեսական տեխնիկայի պարկը ֆիզիկապես և բարոյապես մաշված է, ծառայության ժամկետը գերազանցում է 20 տարին, առկա տեխնիկան իր հզորությամբ չի համապատասխանում արդի հողօգտագործման պահանջներին:

Այս իրավիճակում անհրաժեշտ է իրականացնել գյուղատնտեսական տեխնիկայի թարմացում: Թեև այս հարցը հանրապետությունում փորձում են լուծել ճապոնական «Աջակցություն անապահով ֆերմերներին» ծրագրի, ինչպես նաև Չինաստանի և Հնդկաստանի կառավարությունների կողմից տրամադրվող դրամաշնորհների միջոցով, սակայն նման ճանապարհով գրեթե անհնարին է լուծել այդ հույժ կարևոր հիմնախնդիրը: Բավական է նշել, որ վերջին երեք տարվա ընթացքում Արարատի մարզին հատկացվել է ընդամենը 8 միավոր տրակտոր: Մեր կարծիքով, այս հարցի առավել արագ և հիմնավոր լուծումը պետք է իրականացվի լիզինգի միջոցով, ընդ որում, որպես մատակարար կազմակերպություններ ընտրվի ռուսական և բելառուսական գյուղատնտեսական տեխնիկա արտադրող կազմակերպությունները:

Տվյալ իրավիճակում ՀՀ կառավարությունը և Արարատի մարզային ղեկավարությունը պետք է ամեն ձևով նպաստեն լիզինգի զարգացմանը, ինչը հնարավորություն կընձեռի գյուղացիական տնտեսություններին ձեռք բերել գյուղատնտեսական տեխնիկա, իրականացնելով պարբերական վճարումներ երկարաժամկետ հատվածում: Աջակցել գյուղացիական տնտեսություններին այս ծառայություններից օգտվելու համար տոկոսադրույքների սուբսիդավորման և տնտեսական այլ լծակների միջոցով:

Գյուղատնտեսական մթերքների ապրանքայնության աստիճանը Արարատի մարզում որոշակի չափով բարձր է միջին հանրապետական ցուցանիշից, ինչն առաջին հերթին բացատրվում է մայրաքաղաքին ավելի մոտ գտնվելու փաստի հետ, իսկ այնուհետև՝ արտադրության մասնագիտացման համեմատաբար բարձր մակարդակով, համեմատած ՀՀ մյուս մարզերի հետ, որի մասին տվյալները բերվում են աղյուսակ 2.9-ում:

Գյուղատնտեսական մթերքների ապրանքայնության մակարդակը ՀՀ-ում և ՀՀ Արարատի մարզում<sup>1</sup>

Գյուղմթերքների անվանումը	Ապրանքայնության մակարդակը, %			
	ՀՀ-ում	ՀՀ Արարատի մարզում		
	2014թ.	2011թ.	2012թ.	2014թ.
Հացահատիկ	33.1	32.4	32.4	34.3
Կարտոֆիլ	45.9	76.1	79.7	77.6
Բանջարեղեն	78.2	86.2	85.6	87.0
Պտուղ	67.4	80.9	82.5	83.5
Խաղող	80.3	83.8	85.1	87.0
Բոստան	89.5	81.2	89.2	80.7
Միս	84.1	87.8	83.9	76.6
Կաթ	54.6	54.0	58.6	63.1
Չուլ	47.3	40.0	46.3	48.0
Բուրդ	40.7	58.7	58.9	78.6
Մեղր	56.8	58.3	44.2	61.0

Արարատի մարզի գյուղատնտեսությունն ապահովված է անհրաժեշտ մասնագիտություն և հմտություն ունեցող աշխատուժով: Միջին հաշվով մեկ գյուղացիական տնտեսությանը բաժին է հասնում աշխատունակ բնակչության (16-63 տարեկան, առանց 1-ին և 2-րդ խմբի հաշմանդամների) 2.5 աշխատող: Սակայն գյուղական համայնքներում առկա աշխատուժը լիարժեք չի օգտագործվում: Մարզի գյուղացիական տնտեսություններում աշխատաժամանակի ֆոնդի օգտագործման միջին ցուցանիշը կազմում է 0.54-0.58 գործակից:<sup>2</sup>

Այսպիսով, վերլուծելով Արարատի մարզի գյուղատնտեսության ոլորտի արտադրա-տնտեսական վիճակը կարելի է համոզիչ կերպով փաստել, որ այն ունի աճի հսկայական պոտենցիալ հետագա զարգացման համար: Դրան կարելի է հասնել չնշակվող հողատարածքների ընդգրկման, գյուղացիական տնտեսությունների խոշո-

<sup>1</sup> ՀՀ Արարատի մարզի 2015-2018թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիր, էջ 165

<sup>2</sup> ՀՀ Արարատի մարզի 2011-2014թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիր, էջ 151

րացման, գյուղատնտեսական արտադրության մասնագիտացման խորացման, ինտենսիվացման և դրանց միջոցով ապրանքային արտադրության մակարդակի բարձրացմամբ: Այստեղ կարևորություն է ստանում տնտեսության օպտիմալ չափերը և մասնագիտացումը, գյուղատնտեսության արտադրական ենթակառուցվածքների, իրավական դաշտի, կառավարման, մարքեթինգի կատարելագործումը, գյուղական բնակավայրերի սոցիալական վիճակի բարելավումը և այլն:

Նման պարագայում մեծանում է կոոպերացիայի դերը, որը բխում է հանրապետության ագրոպարենային համակարգի պահանջներից:

Կոոպերացիայի զարգացման անհրաժեշտությունը խիստ արդիական է, դրա կիրառությունը կնպաստի գյուղատնտեսության զարգացմանը, ռեսուրսների ու միջոցների արդյունավետ օգտագործմանը, շուկայական հարաբերությունների խորացմանը, ինչի համար անհրաժեշտ է՝ մշակել և ընդունել գյուղացիական կոոպերացիայի մասին օրենք և համապատասխան նորմատիվ ակտեր՝ կոոպերատիվների կազմակերպման և դրանց հետագա գործունեության կարգավորման վերաբերյալ, դրանց վերապահել իրավունք ինքնուրույն մշակել իրենց տնտեսական գործունեության զարգացման ծրագրերը, սկզբնական շրջանում տալ հարկային արտոնություններ:

Գյուղատնտեսական արտադրության զարգացման վրա բացասաբար է ազդում նաև ապահովագրական գործի կազմակերպման գրեթե բացակայությունը: Արարատի մարզի գյուղատնտեսության վրա խիստ ազդեցություն են գործում տարերային աղետները (երաշտ, ցրտահարություն, կարկտահարություն, երկարատև անձրևներ և այլն): Նշանակում է գյուղատնտեսական արտադրությունը խիստ ռիսկային է, հետևաբար ապահովագրությունը՝ օբյեկտիվ անհրաժեշտություն:

Գույքային ապահովագրությունը, համաձայն ՀՀ «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» օրենքի, ապահովագրական պատահարի հետևանքով ապահովագրի կամ շահառուի գույքային շահերի՝ գույքի տնօրինման, տիրապետման կամ օգտագործման ժամանակ առաջացած վնասների, կորուստի դեպքում ապահովագրական հատկացմանն է առնչվում: Այստեղ առանձնացվում է գյուղատնտեսական ռիսկերի ապահովագրությունը, որը ներառում է.<sup>1</sup>

<sup>1</sup> Ապահովագրական գործ/ ուս. ձեռնարկ Ա.Շուղուրյանի և Կ.Աբգարյանի խմբ., Եր., «Տնտեսագետ», 2007, էջ 210



- գյուղատնտեսական մշակաբույսերի, բերքի և բազմամյա տնկիների ապահովագրություն,
- գյուղատնտեսական կենդանիների ապահովագրություն,
- գյուղատնտեսական կազմակերպությունների և գյուղացիական տնտեսությունների գույքի (ունեցվածքի) ապահովագրություն,
- գյուղատնտեսության հետ կապված այլ ռիսկերի ապահովագրություն:

Ամփոփելով Արարատի մարզի սոցիալ-տնտեսական զարգացման գործընթացում գյուղատնտեսության «առաքելությունը», կարելի է առանձնացնել դրա ուժեղ և թույլ կողմերը:

Մարզի գյուղատնտեսության ուժեղ կողմերն են.

1. Գյուղատնտեսական չօգտագործվող հողային ռեսուրսների առկայությունը:
2. Գյուղատնտեսության մասնագիտացումը պայմանավորող բնական պայմանների բազմազանությունը:
3. Բարձրարժեք խաղողի, պտղի, բոստանային մշակաբույսերի և ծխախոտի զարգացման հնարավորությունը:
4. Մսակաթնային անասնապահության և ձկնաբուծության զարգացման հնարավորությունը:
5. Թռչնաբուծության արտադրության զարգացման հնարավորությունը:
6. Մայրուղիների հարևանությամբ և մայրաքաղաքին մոտ տեղաբաշխված գյուղական համայնքների մթերքների իրացման հնարավորությունների մեծացումը:

Մարզի գյուղատնտեսության թույլ կողմերն են.

1. Սեփականաշնորհված հողերի մանր չափերը, տարբեր տեղաբաշխվածությունը և կտրտվածությունը:
2. Գյուղատնտեսության արտադրական ենթակառուցվածքների թերզարգացվածությունը, հատկապես միջհամայնքային և ներհամայնքային ճանապարհների անբարեկարգ վիճակը:
3. Գյուղատնտեսական տեխնիկայի սարքինության ցածր աստիճանը, սակավությունը, ֆիզիկական և բարոյական մաշվածության բարձր մակարդակը:

4. Ոռոգման միջտնտեսային և ներտնտեսային ցանցերի անբավարար վիճակը, որը բերում է մեծ քանակության ջրի կորուստների:
5. Տոհմային գործի և սերմնաբուծության աշխատանքների կազմակերպման ցածր մակարդակը:
6. Գերխոնավ հողերի, արոտների, խոտհարքերի բարելավման ուղղությամբ համապատասխան աշխատանքների բացակայությունը:
7. Գյուղացիական կոոպերատիվների կազմակերպման բացակայությունը և այդ ոլորտի իրավական դաշտի անկատարությունը:
8. Գյուղմթերքների վերամշակման կարողությունների անբավարարվածությունը:
9. Տարածաշրջանում գյուղատնտեսական մեծածախ շուկաների գրեթե բացակայությունը:
10. Գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական գործի թույլ կազմակերպումը:
11. Գյուղատնտեսական արտադրության արտոնյալ վարկավորման և սուբսիդավորման ցածր մակարդակը և այլն:

## **2.4. Ագրարային ոլորտի ձեռնարկատիրության զարգացման ներկա վիճակը և հիմնախնդիրները**

1991 թվականին Հայաստանի Հանրապետությունում սկսվեցին ագրարային բարեփոխումները, որոնք ուղղված էին վարչահրամայական տնտեսական համակարգի վերացմանը և շուկայական հարաբերությունների ձևավորմանը: Գործընթացը տեղի ունեցավ արագ և առանց լուրջ նախապատրաստումների: Կարճ ժամանակահատվածում լուծարվեցին կոլտնտեսությունները և խորհրտնտեսությունները, ապապետականացվեց և մասնավորեցվեց հողերը և գյուղատնտեսության մյուս արտադրամիջոցները: Մասնավոր սեփականության առաջացումը միանգամայն նոր խնդիրներ ստեղծեց գյուղատնտեսությամբ զբաղվողների համար, որոնք պետք է ոչ միայն արտադրատնտեսական առումով, այլ նաև հոգեբանորեն վերափոխվեին՝

հրաման կատարողի կարգավիճակից արտադրության կազմակերպողի և կարգավորողի դերակատարությանը:

Սեփականաշնորհումից հետո հանրապետությունում ձևավորվեց սեփականատերերի մեծ բանակ: Դրա հետ միասին, սեփականաշնորհումը հիասթափություն առաջացրեց հասարակության զգալի մասի շրջանում:

Հողի և արտադրության մյուս հիմնական միջոցների սեփականաշնորհումով հաղթահարվեց սեփականության պետական մենաշնորհը և սկիզբ դրվեց տնտեսավարման նոր համակարգի ձևավորմանը, ինչի շնորհիվ հանրապետության բնակչության զգալի մասը դարձավ մասնավոր սեփականատեր:<sup>1</sup> Դրա հետևանքով նոր հիմունքներով կազմակերպվեց արտադրությունը և գյուղական կյանքը: Նորաստեղծ գյուղացիական տնտեսությունները հարկադրված չէին այլևս կատարել պլանային առաջադրանքներ: Բացի այդ, հողի սեփականաշնորհման օրենքի կիրառմամբ զգալիորեն ավելացավ գյուղական բնակչությունը: Այսպես, եթե 1980-ական թվականների վերջերին Հայաստանի գյուղատնտեսության մեջ ներգրավված էին 275 հազար մարդ, ապա 1990-ական թթ. սկզբներին, սեփականաշնորհումից հետո, այդ թիվը կտրուկ աճեց: 1991-1998 թվականներին գյուղատնտեսության մեջ զբաղված էին 567.8 հազար մարդ:<sup>2</sup>

Հողի և արտադրության մյուս միջոցների սեփականաշնորհումն ունեցավ նաև դրական այլ հետևանքներ: Իրավական կարգավորման առումով սեփականության պետական ակտը փոխարինվեց սեփականության իրավունքի օգտագործման յուրահատուկ թույլտվության վկայականով: Միայն 1994 թվականից սկսած իրականացվեցին հողի հանդեպ սեփականության իրավունքի իրավաբանական ձևակերպումը: Սակայն, ինքնին այդ գործընթացը պահանջում էր լուրջ ֆինանսական միջոցներ, որին չէր տիրապետում պետությունը, իսկ մյուս կողմից տնտեսվարող սուբյեկտին տրված վկայականը դեռևս հնարավորություն չէր տալիս իրականացնելու ձեռնարկատիրական գործունեություն, քանի որ գրեթե գոյություն չունեին ֆինանսական ռեսուրսներ նման աշխատանքներ իրականացնելու համար:

<sup>1</sup> Սկրտչյան Հ., Հողային հարաբերությունները և արդի ագրարային քաղաքականության հիմնական ուղղությունները ՀՀ-ում, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն», 1997, էջ 14

<sup>2</sup> Багратян Г., Земельная реформа: вопросы теории и практики. Е8. “Наири”, 2003, էջ 312

Գործնականում գյուղատնտեսական ամբողջ արտադրությունը հայտնվել էր մասնավորի մոտ (անհատական տնտեսություններին որպես սեփականություն փոխանցվեց հողերի 66%-ը)<sup>1</sup>, սակայն ոչ բոլոր հողերն էին մասնավորեցված: Յուրաքանչյուր համայնքում գյուղատնտեսական հողատեսքերի 20 տոկոսը պահպանվեց որպես «պետական պահուստի ֆոնդ»՝ գյուղի հետագա զարգացմանն և հողագուրկ ընտանիքների կարիքներն ապահովելու նպատակով: Արտավայրերը՝ գյուղատնտեսական հողերի մոտ 50 տոկոսը չմասնավորվեցին և անցան համայնքներին:<sup>2</sup>

Սեփականաշնորհման հետևանքով ձևավորվեց սոցիալ-տնտեսական նոր կառուցվածք, որտեղ գերակշռող դերը պատկանում էր գյուղացիական տնտեսություններին, ընդ որում սեփականաշնորհվեցին ոչ միայն հողերը, այլ նաև անասունները, գյուղատնտեսական տեխնիկան և մյուս հիմնական միջոցները:<sup>3</sup> Սեփականաշնորհումը որոշակիորեն կանխեց նաև աղքատության ավելի լայն տարածումն ու խորացումը: Դրանով է բացատրվում, թե ինչու գյուղական բնակավայրերում աղքատությունն ավելի քիչ էր տարածված, քան քաղաքներում: Ընչազուրկ ընտանիքներ համարվում էին այն ընտանիքները, որոնք չունեին հողատարածքներ:<sup>4</sup> Սեփականաշնորհման բացասական կողմերից, որոնք ներկայումս էլ զգացնել են տալիս արդյունավետ տնտեսություն կազմակերպելիս, կարելի է առանձնացնել հետևյալները.

1. Սեփականաշնորհումից հետո, վրա հասած ագրարային ճգնաժամի պայմաններում, պահանջվում էր պետության ակտիվ միջամտություն գյուղատնտեսությանը, առաջին հերթին ֆինանսական և վարկային պետական աջակցություն:
2. Սեփականաշնորհումն իրականացվեց համատարած և միանգամից՝ կիրառելով «շոկային թերապիայի» մեթոդը, այլ ոչ թե մաս-մաս և փուլերով, որը բնորոշ է գրադուալիստական մեթոդին: Ըստ էության, տնտեսական կյանքում կատարվեց կառուցվածքային կտրուկ փոփոխություններ, որին պատրաստ չէր գյուղացին,

<sup>1</sup> Մինասյան Է., Սոցիալ-տնտեսական վերափոխումները Հայաստանի Հանրապետությունում (1990-2003թթ.), Եր., Երևանի պետական համալսարանի հրատարակչություն, 2003, էջ 81

<sup>2</sup> Գոմցյան Ա., Խաչատրյան Ս., ՀՀ ագրարային ոլորտի զարգացման արդի հիմնախնդիրները, Եր., «Տնտեսագետ», 2005, էջ 15

<sup>3</sup> Բաբաջանյան Ս., Հակոբյան Գ., ՀՀ գյուղատնտեսության ներկայիս տնտեսական արդյունավետության հարցի շուրջ. «Էկոնոմիկա», N 10-12, Եր., 1996, էջ 64-70

<sup>4</sup> Տես, Համաշխարհային բանկ, Հայաստանում սոցիալական աջակցության բարելավումը, զեկույց N19385 – AM, Համաշխարհային բանկ, Վաշինգտոն, հունիս 8, 1999, հավելված 5, էջ 4

նա չէր կարող արագ վերակառուցվել և հարմարվել ներկայացվող նոր պահանջներին:

3. Սեփականաշնորհման արդյունքում խիստ կերպով մասնատվեցին գյուղատնտեսական հողատարածքները, ինչը հարկադրեց գյուղացիներին հողը մշակել պարզունակ եղանակով, հիմնականում ձեռքի պարզագույն գործիքներով՝ գրեթե բացառելով գյուղատնտեսական տեխնիկայի օգտագործումը:
4. Սեփականաշնորհման ընթացքում թույլ տրված կոպիտ սխալների և անարդարությունների պատճառով գյուղական բնակչության մի մասը աշխատանք գտնելու նպատակով ստիպված տեղափոխվեց քաղաքներ, համալրելով գործազուրկների շարքերը:
5. Կոլտնտեսությունների և խորհրտնտեսությունների լուծարման հետևանքով հանրապետության գյուղացիական հողատարածքներն ավելի մանրատվեցին, միջին հաշվով յուրաքանչյուր տնտեսությանը հատկացվեց 1.3-1.5 հեկտար հողաբաժին: Առավել բնակեցված և պտղաբեր տարածաշրջաններում (Արարատյան դաշտ) տնտեսության միջին հողատարածքը կազմում է 0.75, իսկ երկրի հյուսիսարևելքում և հարավ-արևելքում՝ 2.5 հեկտարից մի քիչ ավելի:<sup>1</sup>
6. Գյուղատնտեսության արտադրության միջոցների և հողերի մասնատումը բերեց արտադրության տեխնոլոգիաների նշանակալի խախտումների, բույսերի վնասատուների և կենդանիների հիվանդությունների դեմ պայքարի կանխարգելիչ ու բուժման աշխատանքների խիստ կրճատմանը, որը հանգեցրեց շատ մեծ բացասական հետևանքների:

Գյուղատնտեսության զարգացման վրա բացի նշված գործոններից բացասական ազդեցություն ունեցավ նաև սեփականաշնորհման ընթացքում թույլ տրված բազմաթիվ այլ սխալներ ու բացթողումներ, որոնց մի մասը ժամանակի ընթացքում ուղղվել են, բայց առանձին հետևանքներ խոր բացասական արմատներ են թողել և շատ դժվար կլինի դրանց վերացնել:

Պետք է նշել, որ Հայաստանի Հանրապետության կառավարության և ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից միշտ էլ որոշակի աշխատանքներ են

---

<sup>1</sup> ՀԱԱ, ֆ. 113, ց.165, գ.171

տարվել և տարվում վերը նշված թերություններն ու բացթողումները շտկելու ուղղությամբ: Մեր կարծիքով, միայն որոշակի արդյունքների հասնելուց հետո, կարելի կլինի մտածել ագրարային ոլորտում ակտիվ ձեռնարկատիրական գործունեության իրականացման մասին: Դեռևս 1990-ական թվականների վերջերին ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը ձեռնամուխ եղավ ագրարային քաղաքականության ուղղությունների վերանայմանը՝ նախանշելով համակարգի առջև ծառայած ընթացիկ և հեռանկարային խնդիրների լուծման կոնկրետ միջոցառումները: Այդ ժամանակ նշվում էր լուծում պահանջող մի շարք հիմնախնդիրներ, այդ թվում՝

1. հրատապ լուծում պահանջող խնդիրներ.

ա) ոլորտում ներդրումների և մյուս ռեսուրսների ավելացումը,

բ) հողի շուկայի ձևավորման գործընթացի արագացումը,

գ) գյուղատնտեսության ոլորտում կոոպերացիայի զարգացումը և խոշոր ապրանքային տնտեսությունների ստեղծումը,

դ) գյուղացիական արտադրատեխնիկական սպասարկումների համակարգի վերջնական ձևավորումն ու ընդլայնումը և այլն:

2. հիմնական հեռանկարային խնդիրներ.

ա) պարենային ապահովության քաղաքականության վերամշակումը և իրականացումը, երկրի պարենային անվտանգության ապահովումը,

բ) հանրապետության ագրոպարենային ոլորտի բնատնտեսական ներուժի առավել լրիվ օգտագործումը և գյուղատնտեսության արդյունավետության բարձրացումը,

գ) գյուղմթերքների ներմուծման և արտահանման հաշվեկշռի բարելավումը,

դ) շուկայական հարաբերությունների ամբողջական ձևավորմանն ուղղված անհրաժեշտ իրավական ու տնտեսական պայմանների ստեղծումը:<sup>1</sup>

Ավելացնենք, որ բացի վերը նշված, լուծում պահանջող խնդիրներից, գյուղատնտեսության հետագա զարգացմանը, այդ թվում՝ ձեռնարկատիրական գործունեության իրականացմանը խոչընդոտել և խոչընդոտում են նաև հետևյալ բացթողումները.

---

<sup>1</sup> Մովսիսյան Վ., Հողի ճակատագրով մտորումներ տքնության, Եր., ՀՀ ԳԱԱ, «Գիտություն», 2001, էջ 252

1. Մասնավոր սեփականության պայմաններում բազմաթիվ գյուղացիական տնտեսություններ չունեն իրենց գործունեությունն ուղղորդող, իրավունքներն ու շահերը պաշտպանող կառույցներ: Իրավիճակն ավելի էր վատանում տեխնիկայի, մասնագիտացված կազմակերպությունների բացակայությամբ, որոնք գյուղացիական տնտեսություններին պետք է մատակարարեին քիմիկատներ, դեղամիջոցներ, պարարտանյութ, մատակարարեին գյուղատնտեսական տեխնիկա և այլն: Գրեթե աշխատանք չէր կատարվում հողերի ագրոտեխնիկական սպասարկման ուղղությամբ, անգործության էին մատնված տոհմաբուծական, սերմնաբուծական, անասնաբուծական աշխատանքները, բարձիթողի վիճակում էր մնում ոռոգման համակարգի որոշակի հատվածը:
2. Անհրաժեշտ չափով ձևավորված չէր շուկայական ենթակառուցվածքները և հողի շուկան, չկար ոլորտում ներդրումների համալիր համակարգ և հակամենաշնորհային օրենսդրություն, չէին գործում ապահովագրական հիմնադրամները, մշակված չէին ոլորտը կարգավորող օրենսդրական ու նորմատիվ ակտերը, գրեթե չկար կառավարման, կադրերի ուսուցման և որակավորման բարձրացման կարգավորման կառույցները:
3. Ձևավորված չէր հողի շուկան և չկային գյուղատնտեսական արտադրանքի մեծածախ շուկաներ, կարգավորված չէր արտադրողների և գնորդների միջև հարաբերությունները, արդյունավետ չէր գործում «արտադրություն-վերամշակում-սպառում» կապը, ինչի հետևանքով արտադրված գյուղմթերքի մի մասը չէր իրացվում: Ըստ էության գյուղացիական տնտեսությունների բացարձակ մեծամասնությունը վարում էին փակ բնատնտեսություն՝ լուծելով միայն կենսաապահովման նվազագույն պահանջները:

Մարզը որոշիչ դերակատարություն ունի հանրապետության գյուղատնտեսության տարեկան համախառն արտադրանքի կառուցվածքում:

Վերջին տարիներին մարզի համախառն արտադրանքի ծավալը ունեցել է կայուն աճի միտումներ և հանրապետության գյուղատնտեսության համախառն արտադրանքի ընդհանուր ծավալի մեջ կազմել է 14-15%, ինչը բավականին բարձր ցուցանիշ է, հաշվի առնելով այն հանգամանքը, որ մարզի գյուղատնտեսական հո-

ղատարածքները կազմում են հանրապետության գյուղատնտեսական հողատարածքների ընդամենը 7.66%-ը:

Արարատի մարզի 2011-2014թթ. գյուղատնտեսական հողատարածքների և գյուղարտադրանքի արդյունքային ցուցանիշների վերլուծությունից պարզվում է, որ 2014թ-ին՝ 2011թ. համեմատ, չնայած հացահատիկի տարածքների ավելացմանը 443 հա-ով, հացահատիկի միջին բերքատվությունը՝ 1 հա-ից (եղանակային անբարենպաստ պայմանների պատճառով) պակասել է, որի հետևանքով հացահատիկի հիմնական բերքը 2012թ. պակասել է 510 տոննայով: 2012թ. բանջարեղենի և բոստանի տարածքները պակասել են համապատասխանաբար 409 հա-ով և 102 հա-ով, սակայն հետևողական մշակման արդյունքում համախառն բերքը ավելացել է նախորդ տարվա համեմատությամբ, համապատասխանաբար, 19631 տոննայով և 6025 տոննայով: Նույն տարում կարտոֆիլի, պտղի և խաղողի տարածքներն ավելացել են համապատասխանաբար 94 հա-ով, 327 հա-ով և 239 հա-ով, համապատասխանաբար ավելացել են նաև նշված մշակաբույսերի համախառն բերքը՝ 2981 տոննայով, 10743 տոննայով և 5588 տոննայով:

2014 թվականի վերլուծությունից երևում է, որ կարտոֆիլի տարածքները նախորդ տարիների համեմատությամբ պակասել են 114 հա-ով (կարտոֆիլի ցեց վնասատուի պատճառով), որի արդյունքում պակասել է համախառն բերքը: Բանջարեղենի համախառն բերքը՝ շնորհիվ ներմուծված լավագույն սերմերի, մշակության առաջավոր տեխնոլոգիաների, ավելացել է 1210 տոննայով: Բոստանի պտղի և խաղողի պարագաներում տարածքների ավելացումը հանգեցրել է համախառն բերքի ավելացման:

2014թ. փաստացի ցանքատարածքներն ավելացել են 1457 հա-ով:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ մարզի մշակաբույսերի բերքատվության ցուցանիշները զգալիորեն բարձր են հանրապետության միջին ցուցանիշներից:

Մարզի 2011-14թթ. գյուղատնտեսական մշակաբույսերի տարածքների, համախառն բերքի և բերքատվության ցուցանիշները ներկայացված են աղյուսակ 2.10-ում:



**ՀՀ Արարատի մարզի գյուղատնտեսական հիմնական մշակաբույսերի և բազմամյա տնկարկների տարածությունները, բերքատվությունը և համախառն բերքը**

ՀԱՑԱՀԱՏԻԿ												
	Ցանքատարածությունը (հա)				Բերքատվությունը (g/հա)				Համախառն բերքը (հազ. տոննա)			
	2011	2012	2013	2014	2011	2012	2013	2014	2011	2012	2013	2014
ՀՀ	157812	172206	178367	188695	27.9	26.5	30.8	31.8	440.7	456.1	548.8	590.6
Մարզ	5073	5516	5526	6752	39.9	35.8	42.0	46.7	20.2	19.7	23.2	30.7
Տեսակարար կշիռը, %	3.2	3.2	3.1	3.6	143.0	135.1	136.4	146.8	4.6	4.3	4.2	5.2
ԿԱՐՏՈՖԻԼ												
	Ցանքատարածությունը (հա)				Բերքատվությունը (g/հա)				Համախառն բերքը (հազ. տոննա)			
	2011	2012	2013	2014	2011	2012	2013	2014	2011	2012	2013	2014
ՀՀ	28675	31243	30680	31552	194.3	206.7	214.3	232.2	557.3	647.2	660.5	733.2
Մարզ	802	896	781	782	305.5	306.8	309.5	333.1	24.5	27.5	24.2	26.0
Տեսակարար կշիռը, %	2.8	2.8	2.5	2.5	157.2	148.4	144.4	143.4	4.4	4.2	3.7	3.5
ԲԱՆՁԱՐԵՂԵՆ												
	Ցանքատարածությունը (հա)				Բերքատվությունը (g/հա)				Համախառն բերքը (հազ. տոննա)			
	2011	2012	2013	2014	2011	2012	2013	2014	2011	2012	2013	2014
ՀՀ	25010	25211	25403	26412	306.7	325.0	333.7	3505	787.1	849.0	876.0	954.6
Մարզ	6826	6406	6330	6533	412.2	453.1	471.0	486.1	285.3	305.0	306.2	341.0
Տեսակարար կշիռը, %	27.3	25.4	24.9	24.7	134.4	139.4	141.1	139.4	36.2	35.9	35.0	35.7
ԲՈՍՏԱՆ												
	Ցանքատարածությունը (հա)				Բերքատվությունը (g/հա)				Համախառն բերքը (հազ. տոննա)			
	2011	2012	2013	2014	2011	2012	2013	2014	2011	2012	2013	2014
ՀՀ	5764	5128	5356	5832	313.8	399.9	388.5	421.4	180.9	205.1	208.1	245.8
Մարզ	1482	1380	1515	1770	394.5	467.3	431.5	463.8	58.5	64.5	65.4	82.1
Տեսակարար կշիռը, %	25.7	26.9	28.3	30.3	125.7	116.9	111.1	110.1	32.3	31.4	31.4	33.4

Աղյուսակ 2.10-ի շարունակությունը

ՊՏՈՒՂ ԵՎ ՀԱՏԱՊՏՈՒՂ												
	Տարածությունը (հա)				Բերքատվությունը (g/հա)				Համախառն բերքը (հազ. տոննա)			
	2011	2012	2013	2014	2011	2012	2013	2014	2011	2012	2013	2014
ՀՀ	37149	39285	40229	40129	73.5	97.0	95.0	80.8	239.4	331.7	338.1	291.0
Մարզ	6972	7299	7394	7416	116.4	130.8	135.3	103.9	75.7	86.5	91.8	70.9
Տեսակարար կշիռը, %	18.8	18.6	18.4	18.5	158.4	134.8	142.4	128.6	31.6	26.1	27.2	24.4
ԽԱՂՈՂ												
	Տարածությունը (հա)				Բերքատվությունը (g/հա)				Համախառն բերքը (հազ. տոննա)			
	2011	2012	2013	2014	2011	2012	2013	2014	2011	2012	2013	2014
ՀՀ	16288	17415	17465	14215	158.0	151.3	149.8	157.7	229.6	241.4	240.8	261.3
Մարզ	4881	5120	5143	5083	204.2	199.4	211.3	218.8	94.7	100.3	104.3	112.2
Տեսակարար կշիռը, %	30.0	29.4	29.4	29.5	129.2	131.8	141.1	138.7	41.2	41.5	43.3	42.9

Տվյալների աղբյուրը՝ «ՀՀ Արարատի մարզի 2015-2018թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիր», Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը 2010-2014 թթ., Եր., 2015, էջ 39-43

Ինչպես երևում է Արարատի մարզի գյուղատնտեսական հիմնական մշակաբույսերի և բազմամյա տնկարկների տարածությունների, բերքատվության և համախառն բերքի վերաբերյալ աղյուսակների վերջին չորս տարիների տվյալների վերլուծությունից, մարզում ավելացել է հացահատիկի, խաղողի, պտղի և հատապտղի, բանջարեղենի. բոստանային մշակաբույսերի ինչպես բերքատվության այնպես էլ համախառն բերքի ցուցանիշները:

Մարզում գյուղատնտեսական բնագավառում ոռոգման նոր եղանակների՝ կաթիլային, անձրևացման, ինչպես նաև բարձր բերքատվությամբ սերմերի, որակյալ պարարտանյութերի և թունաքիմիկատների կիրառումը էականորեն կբարձրացնի մարզի գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվության ցուցանիշները:

Մարզում արտադրվում է տարեկան շուրջ 300-350 հազ. տոննա բանջարեղեն: Դժվարություններ են առաջանում գյուղացիական տնտեսությունների կողմից արտադրված բանջարեղենի արտադրանքի իրացման հարցում՝ արտադրանքի ընդա-

մենը 10-15% է մթերվում պահածոների գործարանների կողմից, արդյունքում դա բացասաբար է անրադառնում մարզում բանջարաբուծության զարգացմանը:

Տարեկան արտադրվում է 100 հազար տոննայից ավել խաղող, որից մոտ 80 հազար տոննան մթերվում է մարզի 17 գինու-կոնյակի գործարանների կողմից, 15-20 հազար տոննան պահպանվում է սառնարաններում՝ հետագայում վաճառելու համար, իսկ մնացած բերքը իրացվում է տեղական շուկաներում:

Չնայած վերջին տարիներին ոլորտում արձանագրված դրական փոփոխություններին, 2014թ. մարզում չի մշակվել մոտ 6530 հա (ներառյալ տնամերձ հողամասերը) հողատարածքներ՝ ոռոգման ջրի բացակայության, գյուղացիական տնտեսությունների ցածր վճարունակության և հողերի գերխոնավ, աղակալված լինելու պատճառով:

Արարատի մարզում խաղողագործությունը, պտղաբուծությունը և բանջարեղենի մշակությունն առավելապես զարգացած է Արարատի և Արտաշատի տարածաշրջաններում: Մասիսի տարածաշրջանում համեմատաբար բարվոք է վիճակը բանջարեղենի մշակությամբ՝ մյուս տարածաշրջանների համեմատ հետ է մնում կիսով չափով, իսկ խաղողագործության և պտղաբուծության ուղղություններով 8-9 անգամ հետ է մնում Արտաշատի և Արարատի տարածաշրջաններից: Կերային մշակաբույսերի և կարտոֆիլի մշակությամբ առաջատար է Մասիսի տարածաշրջանը: Մարզի բոստանի տարածքների 84%-ը և հացահատիկի տարածքների 65%-ը գտնվում են Արարատի տարածաշրջանում:

Աղյուսակ 2.11-ում ներկայացված է մարզի հիմնական մշակաբույսերի 2014թ. ցանքատարածություններն ըստ տարածաշրջանների:

Մարզի բուսաբուծության ճյուղի արդյունավետ վարման հիմքը և վճռական գործոններից մեկը սերմնաբուծության և տնկարանային տնտեսության զարգացումն է՝ բարձրորակ սերմերի և տնկանյութերի արտադրությունը՝ պահպանման և օգտագործման համապատասխան համակարգի ձևավորման հիման վրա:

**Մարզի հիմնական մշակաբույսերի 2014թ. ցանքատարածություններն  
ըստ տարածաշրջանների<sup>1</sup>**

Մշակաբույսի անվանումը	Արարատի տարածա- շրջան (հա)	Արտաշատի տարա- ծաշրջան (հա)	Մասիսի տարա- ծաշրջան (հա)
Հացահատիկ	3347	621.1	1050
Բանջարեղեն	2269.2	2210.7	1815.5
Կարտոֆիլ	100.8	206.6	463.8
Բոստան	1266.9	54.2	193.7
Պտուղ	3166.8	3755.7	472.67
Կերային մշակաբույսեր	1289	2297	3267.6
Խաղող	2397.4	2454.8	291.01
Ծխախոտ	90.5	49.8	17

Մարզի Դարակերտ համայնքում դեռևս խորհրդային տարիներից, գործում է բանջարաբոստանային և տեխնիկական մշակաբույսերի գիտական կենտրոնը, որը տարեկան ապահովում է մարզի սերմերի և սածիլների պահանջարկի մինչև 15 տոկոսը, սակայն սերմնաբուծական տնտեսության ստացած սերմերը չեն ապահովում բարձր բերքատվություն և դուրս են մրցունակությունից:

Մարզում գյուղատնտեսական մշակաբույսերի երաշխավորված և բարձր բերք ստանալու կարևորագույն պայմանը ոռոգման համակարգի անխափան աշխատանքն է:

Մարզի ոռոգվող հողատարածքի պակասելու պատճառներից է նաև այն, որ մարզում դեռևս գործում են բավականին շատ հողային հունով և կիսաքանդ խողովակներով ջրատարներ՝ որոշ համայնքներում ոռոգման ջրի կորուստը կազմում է մինչև 50 տոկոս:

<sup>1</sup> Տվյալները տրամադրվել են ՀՀ Արարատի մարզի մարզային վիճակագրական ծառայությունից

Մարզում ոռոգման աշխատանքները կազմակերպվում են 5 ջրօգտագործող ընկերությունների («Արտաշատի», «Արարատի», «Մասիսի», «Վեդու» և «Ազատի») միջոցով, որոնք տարեկան միջին հաշվով մատակարարում են մոտ 110 մլն խորանարդ մետր ջուր:

2011-2014թթ. ընթացքում ոռոգման ջրի վարձավճարների հավաքագրումը կազմել է 90.5%-93.1%: Աշխատանքներ են տարվում ոռոգման ջրի վարձավճարների հավաքագրումը 100%-ի հասցնելու ուղղությամբ:

ՀՀ պետական բյուջեի և այլ դոնոր կազմակերպությունների միջոցներով մարզի 41 համայնքներում վերանորոգվել է 110.5 կմ երկարությամբ ոռոգման ցանցեր, իրականացվել է շուրջ 27 մլրդ դրամի աշխատանքներ, սակայն այն դեռևս չի բավարարում ներկայիս պահանջները և ջրատարների մեծ մասում ջրի կորուստները շատ մեծ են:

Զնայած մարզում ոռոգման համակարգում կատարված աշխատանքներին, դեռևս կան շատ անելիքներ: Ոռոգման համակարգում նախատեսվող կարևոր միջոցառումներն են.

1. Ոռոգման համակարգերի պահպանում, շահագործում և գույքագրում:
2. Ջրօգտագործողների համակարգի վերջնական ձևավորում, ինքնահոս ջրամատակարարման ընդլայնում, էներգետիկ ծախսերի կրճատում, ջուր մատակարարող և օգտագործող փոխհարաբերությունների բարելավում:
3. Ջրամբարների կառուցում, համայնքներում ոռոգման ջրերի վերաբերյալ առկա խնդիրների վերանայում և լուծման ժամանակացույցի կազմում:

Ինչպես նշել ենք, Արարատի մարզի անասնաբուծության հիմնական ուղղվածությունը կաթնա-մսային արտադրական ուղղությունն է, սակայն մարզում մսի մթերման կետեր և սպանդանոց չլինելու պատճառով գյուղացիական տնտեսություններն իրենց արտադրանքն իրացնում են տեղական շուկաներում: 2014թ. ընթացքում Մասիս քաղաքում կառուցվեց նոր ժամանակակից տեխնոլոգիական սարքավորումներով ապահոված սպանդանոց: Սպանդանոցի հզորությունը օրվա կտրվածքով կազմում է 1000 մանր եղջերավոր և 360 խոշոր եղջերավոր:

Մարզում գործում են կաթ վերամշակող 3 կազմակերպություններ՝ Նարեկի «ԽԱՔ», «Արարատ-պանիր» և Դալարի «Լուլա», սակայն այդ գործարանների մթերման հնարավորությունները դեռևս շատ քիչ է մարզի ամբողջ կաթի արտադրանքը մթերելու համար:

Այսպիսով, վերլուծելով ՀՀ ագրարային ոլորտում ձեռնարկատիրական գործունեության իրականացման հնարավորությունները, կարելի է միանշանակ փաստել, որ գյուղատնտեսությունում, բացի իրեն բնորոշ առանձնահատկություններից, որոնք չեն խրախուսում ձեռներեցությունը ճյուղում, հանրապետությունում բարեփոխումներից հետո որոշակի չափով դյուրինացվել է ձեռներեցության իրականացումը:

Ընդհանուր առմամբ ՀՀ-ում ձեռներեցության ձևավորման և զարգացման համար ստեղծվել են անհրաժեշտ օրենսդրական պայմաններ: Ինչպես ամեն մի երկրում, այնպես էլ Հայաստանի Հանրապետությունում, ձեռնարկատիրությունը չափազանց կարևոր նշանակություն ունի երկրի տնտեսական կյանքում: Սակայն, ինչպես արդեն նշվել է, բարեփոխումների անցած ժամանակաշրջանում տվյալ հատվածի ոլորտի կարևորությունը պատշաճ կերպով չի գնահատվել, ինչի արդյունքում ներկայումս ձեռնարկատիրության իրականացման գործում առկա են մի շարք հիմնախնդիրներ, որոնք խոչընդոտում են ինչպես ամբողջ ազգային տնտեսության, այնպես էլ ագրարային ոլորտի զարգացմանը:

ՀՀ-ում ձեռնարկատիրական գործունեությունը կարգավորող օրենսդրական դաշտի ձևավորման սկիզբը համարվում է ՀՀ նախարարների խորհրդի կողմից 1991թ. հունվարի 22-ին ընդունած «Փոքր ձեռնարկությունների ստեղծման և զարգացման մասին» թիվ 42 որոշումը, որում սահմանված է ձեռնարկությունների կարգավիճակն ըստ աշխատողների թվաքանակի և ձևավորման ընթացակարգը: Հաջորդ քայլը հանդիսացավ 1992թ. մարտի 14-ին ընդունված «Ձեռնարկությունների գործունեության մասին» ՀՀ օրենքը<sup>1</sup>, որում նշվում է, որ գյուղատնտեսության մեջ փոքր է համարվում իրավաբանական կարգավիճակ ունեցող այն ձեռնարկությունը, որն ունի ոչ ավելի քան 50 աշխատող:

<sup>1</sup> ՀՀ օրենքը «Ձեռնարկությունների գործունեության մասին», ընդունված 14.03.1992թ.

Ձեռնարկատիրության կանոնակարգման գործընթացում օրենսդրական դաշտի ձևավորման ուղղությամբ էական քայլերից է 2000թ. դեկտեմբերի 5-ին «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքի ընդունումը<sup>1</sup>, որի նպատակն էր սահմանել փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտների չափորոշիչները, պետական աջակցության հիմնական ուղղությունները և այդ ոլորտում քաղաքականության իրականացման սկզբունքները:

Հայաստանի Հանրապետության ագրարային ոլորտում ձեռներեցության ձևավորումն ունի իր առանձնահատկությունները, որոնք պայմանավորված են արտադրական և տնտեսական գործոններով, հասարակական և ազգային բնութագրերով: Դրանցից կարելի է առանձնացնել.<sup>2</sup>

- կառավարչական ցածր մակարդակը, գիտելիքների և փորձի, շուկայական հարաբերություններում կուլտուրայի պակասը,
- թույլ զարգացած ենթակառուցվածքի համակարգը,
- ինքնակազմակերպման և ինքնակառավարման ոչ արդյունավետ գործընթացը,
- անկայուն տնտեսական և քաղաքական իրավիճակներին համակերպվելը,
- ցածր տեխնիկական մակարդակը և հագեցվածությունը,
- առավելագույն ինքնուրույնության ձգտումը,
- գործունեության մի քանի տեսակների համատեղումը,
- կադրերի որակավորման բարձր մակարդակը:

Ագրարային ոլորտում ձեռներեցության զարգացման վրա ազդեցություն են թողնում նաև այնպիսի գործոններ, ինչպիսիք են գների անկայուն վիճակը, վարկի ձեռք բերման բարդությունները, սոցիալական վճարների, ջրօգտագործման, հողի հարկի վճարումների ծանր բեռը:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը կարևորելով փոքր և միջին ձեռներեցության (ՓՄՁ) դերը երկրի տնտեսական զարգացման, աշխատատեղերի ստեղծման, բնակչության կենսամակարդակի բարձրացման, հասարակության մեջ միջին խավի ձևավորման, երկրում սոցիալ-տնտեսական և քաղաքական կայունու-

<sup>1</sup> ՀՀ օրենքը «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին», ընդունված 05.12.2000թ.

<sup>2</sup> Օհանջանյան Ա., Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական կարգավորման խնդիրները Հայաստանում, Եր., 2010, «Լիմուշ», էջ 85-86

թյան ապահովման գործում, որոշակի միջոցառումներ է ձեռնարկում ՓՄՁ-ին պետական աջակցության ու զարգացման գործում:

ՀՀ կառավարությունը 2002 թվականի մարտի 19-ի թիվ 282 որոշումով ՓՄՁ պետական աջակցության 2002 թվականի ծրագրի շրջանակներում հիմնադրեց Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն՝ որպես հանրապետությունում ՓՄՁ պետական աջակցություն իրականացնող հիմնական կարգավորող: Այդ որոշման հիման վրա 2005 թվականի դեկտեմբերի 5-ին կազմավորվեց ՓՄՁ զարգացման ազգային կենտրոնի (ՁԱԿ) Արարատի մասնաճյուղը, որպես ծրագրային միջոցառում:

Միջին հաշվով Հայաստանի Հանրապետությունում փոքր և միջին ձեռնարկությունները տալիս են երկրի ՀՆԱ-ի շուրջ 41-42 տոկոսը, արտահանման ծավալի 17-18 տոկոսը: ՓՄՁ-ն միջին հաշվով տարեկան ստեղծում է շուրջ 22 հազար աշխատատեղ:<sup>1</sup>

ՓՄՁ պետական քաղաքականության տնտեսական նպատակների անկյունաքարն է հանդիսանում ՀՀ մարզերի, տնտեսական զարգացման անհամամասնությունների հաղթահարումը՝ օգտագործելով յուրաքանչյուր տարածաշրջանի տնտեսական զարգացման առանձնահատկություններն ու ներուժը և խթանելով տնտեսվարող սուբյեկտների միջև ներմարզային և միջմարզային համագործակցության զարգացումը:

Մարզի զարգացման ծրագրով ՓՄՁ աջակցության միջոցառումները նախատեսված էր իրականացնել «Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամի (Հայաստանի ՓՄՁ ՁԱԿ) գործունեության շրջանակներում:

ՓՄՁ պետական աջակցության ուղղությամբ իրականացվող հետևողական քաղաքականության արդյունքում վերջին տարիներին Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է ՓՄՁ ոլորտը բնութագրող ցուցանիշների դինամիկ աճ: 2013թ. ՓՄՁ տեսակարար կշիռը երկրի համախառն ներքին արդյունքում (ՀՆԱ)

---

<sup>1</sup> Նույն տեղը, էջ 91



կրկնակի գերազանցել է 1999 թվականի մակարդակը: Դրա հետ մեկտեղ, ավելացել է նաև ՓՄՁ ոլորտի մասնաբաժինը երկրի արտահանման ծավալում՝ կազմելով 18%:

Նշանակալի է ՓՄՁ սուբյեկտների մասնակցությունը նոր աշխատատեղերի ստեղծման գործում: 2014թ. հունվարի 1-ի դրությամբ հանրապետությունում ստեղծված ՓՄՁ սուբյեկտների թվաքանակը կազմել է 73925. ՓՄՁ սուբյեկտների քանակը 2010թ. համեմատ ավելացել է 25 տոկոսով: Ընդ որում ՓՄՁ սուբյեկտների գերակշիռ մասը կենտրոնացված է Երևանում 53%, Արարատի մարզում այն կազմում է 6%:

ՓՄՁ սուբյեկտների հանրապետական բաշխվածքը ըստ անհատ ձեռնարկատերերի և տնտեսական գործունեության իրավունք ունեցող առևտրային իրավաբանական անձանց հետևյալն է (տե՛ս աղյուսակ 2.12):

**Աղյուսակ 2.12**

**Գրանցված ՓՄՁ սուբյեկտների մարզային բաշխվածք<sup>1</sup>**

Մարզեր	ՓՄՁ սուբյեկտներ			
	քանակ	[%]	ՓՄՁ սուբյեկտներում գրառվածների բաշխվածությունը [%]	ՓՄՁ սուբյեկտների շրջանառության ծավալը [%]
Երևան	39180	53	61	65
Արագածոտն	2217	3	2	2
Արարատ	4438	6	4	4
Արմավիր	4436	6	4	5
Գեղարքունիք	2957	4	3	2
Լոռի	4436	6	6	5
Կոտայք	7175	7	7	6
Շիրակ	3696	5	6	4
Սյունիք	3696	5	4	4
Վայոց Ձոր	1741	2	1	1
Տավուշ	2217	3	2	2

<sup>1</sup> ՀՀ Արարատի մարզի սոցիալ-տնտեսական զարգացման 2015-2018թթ. ծրագիր. Արտաշատ, 2014, էջ 50-51

Ընդամենը ՀՀ	73925	100	100	100
-------------	-------	-----	-----	-----

Արարատի մարզում ՓՄՁ սուբյեկտների թիվը կազմում է 4438: Ընդ որում Հայաստանի Հանրապետությունում գործող ՓՄՁ սուբյեկտների ընդհանուր թվում Արարատի մարզի ՓՄՁ սուբյեկտները կազմում են ընդամենը 6%: Հատկանշականը այն է, որ նախկինում գործող խոշոր ձեռնարկությունները աստիճանաբար իրենց տեղը զիջեցին փոքրերին, որոնք աշխատում են ավելի ճկուն և ապահովում են ավելի բարձր արդյունքներ:

Արարատի մարզի զարգացման ծրագրով ՓՄՁ աջակցության միջոցառումները նախատեսվում է իրականացնել «Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամի (Հայաստանի ՓՄՁ ՁԱԿ) գործունեության շրջանակներում: Հայաստանի ՓՄՁ ՁԱԿ-ի Արարատի մասնաճյուղի կողմից տրամադրվող աջակցության ուղղությունները և ծրագրերը հետևյալն են.

1. Վարկային երաշխավորությունների տրամադրման ծրագիր:
  2. Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցություն:
  3. ՓՄՁ սուբյեկտներում նորարարությունների և ժամանակակից տեխնոլոգիաների ներդրմանն աջարկություն ՓՄՁ սուբյեկտների կողմից թողարկվող արտադրանքի (մատուցվող ծառայությունների) շուկաներ առաջ մղման աջակցություն:
  4. ՓՄՁ սուբյեկտներին գործարար տեղեկատվական և խորհրդատվական աջարկություն:
  5. ՓՄՁ սուբյեկտներին ուսուցողական աջակցություն:
  6. Հայաստանում «Ձեռնարկությունների եվրոպական ցանցի» հաղորդակցման կենտրոնի գործունեության կազմակերպում:
- ՓՄՁ-ներին ցուցաբերած աջակցությունը իրականացվել է հետևյալ մեխանիզմով (աղ. 2.13):

ՓՄՁ աջակցման մեխանիզմները

Աջակցության ուղղություններ	Աջակցության մեխանիզմները ըստ ՓՄՁ սուբյեկտների	
	Գործող ՓՄՁ-ներ	Սկսնակ գործարարներ
Ֆինանսական աջակցություն	Երաշխավորվում է վարկի հիմնական գումարի ոչ ավելի, քան 70%-ը, երաշխավորության առավելագույն չափը մինչև 10.0 մլն դրամ: Վարկային տոկոսի մասնակի սուբսիդավորում: Սեփական կապիտալի ֆինանսավորում	Մինչև 2.0 մլն դրամ վարկի ստացման համար տրամադրվում է վարկային երաշխիք վարկի գումարի մինչև 130% չափով:
Տեղեկատվական, խորհրդատվական և ուսուցողական ծրագրեր	Տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն: Նեղ մասնագիտական խորհրդատվական աջակցություն: Ուսուցողական դասընթացներ:	Դասընթացներ և անհատական խորհրդատվություն գործարար ծրագրի մշակման համար:
Իրացման աջակցություն	Գովազդային վահանակների պատրաստում: Պիտակների տպագրություն: Ինտերնետային կայքի պատրաստում: Մասնակցություն ցուցահանդեսներին:	

Աղբյուրը՝ ՓՄՁ ՀՀ Արարատի մարզային կենտրոն

Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցության ծրագրի շրջանակներում վարկավորումն իրականացվել է «Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ» բանկի միջոցով տարեկան 12% տոկոսադրույքով:

Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցության ծրագրի շրջանակներում աջակցություն է ցուցաբերել 12 սկսնակ գործարարի:

ՓՄՁ սուբյեկտներին խորհրդատվական աջակցություն է տրամադրվել օրենքներում կատարվող փոփոխությունների, արտաքին տնտեսական գործունեության իրականացման, հոսքագծերի և սարքավորումների ձեռքբերման, նորարարությունների և նոր տեխնոլոգիաների ներդրման, գործընկերների որոնման, ֆինանսական միջոցների ներգրավման և կառավարման, լիցենզավորման, ստանդարտացման, գործարար և ներդրումային ծրագրերի մշակման, հաշվապահական հաշվառման և այլ հարցերով:

Մարզում ձեռնարկատիրության հետագա զարգացման հնարավորությունները համայնքապետերը համարում են.

1. բնակչության ձեռներեցությունը՝ համայնքում բարձրագույն և մասնագիտական կրթություն ունեցող անձանց սեփական գործ սկսելու ցանկությունը,

2. տեղական գյուղմթերքների հումքային բազայի հիման վրա վերամշակման և իրացման արդյունավետ կազմակերպումը,

3. զբոսաշրջության զարգացումը՝ հաշվի առնելով համայնքների մի մասի բարենպաստ աշխարհագրական դիրքը և բնակլիմայական պայմանները,

4. համայնքում ներդրումներ կատարելու տեղացի արտագնա ձեռներեցների պատրաստակամությունը:

Արարատի մարզում աջակցություն ստացողների տարածքային բաշխվածության մեջ գերակշռում են քաղաքային համայնքներում գործող ՓՄՁ-ները: Եթե ծրագրի իրականացման սկզբնական փուլում թերևս դա ընթացելի է, ապա հետագայի համար կլինի անհանդուրժելի, քանի որ մարզը գյուղատնտեսական ուղղվածություն ունի և աջակցությունները պետք է ուղղված լինեն դեպի գյուղմթերքների արտադրությունն ու վերամշակումը: Դա հնարավորություն կընձեռի աջակցությունն ավելի հասանելի դարձնել գյուղական համայնքներին, որտեղ գործող ՓՄՁ-ների քանակը դեռևս չնչին

է: Խիստ անհրաժեշտ է ավելացնել գյուղական համայնքներից գյուղատնտեսությամբ զբաղվող շահառուների քանակը: Այս գործընթացում պետք է ակտիվություն ցուցաբերեն տեղական ինքնակառավարման մարմինները (ՏԻՄ), որոնց մասնակցությունը նախատեսված է ՓՄՁ աջակցության ծրագրերում, սակայն նրանք առայժմ պասիվ դիրք են գրավում այդ հարցում:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ մարզում առկա են մի շարք խնդիրներ, որոնց հետ առնչվում են ՓՄՁ սուբյեկտները: Այդ խնդիրները կրում են օբյեկտիվ և սուբյեկտիվ բնույթ, մասնավորապես, ՓՄՁ-ի սուբյեկտների համար ֆինանսավարկային միջոցների անմատչելիությամբ, գործարար տեղեկատվության և խորհրդատվության ստացման, կադրերի մասնագիտական ուսուցման հարցերում դժվարություններով, ՓՄՁ-ի սուբյեկտների կողմից արտադրվող արտադրանքի (ծառայությունների) շուկաների առաջնղման հետ կապված խնդիրներով և փորձի ու հմտության պակասով:

Փոքր ձեռներեցության զարգացման հիմնախնդիրները կարելի է դասակարգել օրենսդրական, ֆինանսական, տեխնիկական և ենթակառուցվածքային գործոնային խմբերի, որոնք իրենց ազդեցությունն են թողնում ՓՄՁ սուբյեկտների գործունեության վրա:

Ֆինանսական բնույթի խնդիրները հանգում են ֆինանսական (վարկային) ռեսուրսներից օգտվելու բարդությունների՝ պայմանավորված վարկերի կարճաժամկետայնության և այլընտրանքային ֆինանսավորման աղբյուրների բացակայության հետ, որոնք լուրջ խնդիրներ են առաջացնում հատկապես գյուղատնտեսական արտադրության ոլորտում, որտեղ տրամադրվող վարկերը պետք է լինեն առնվազն 3 տարուց ավելին:

ՓՄՁ զարգացմանը խոչընդոտող առանձնակի խնդիր է նաև ներմարզային և միջմարզային տնտեսական կոոպերացիայի ոչ բավարար մակարդակը: Այս պարագայում կարևորվում է տեղեկատվական հոսքերի մատչելիության, դրանց ընկալման, մշակման և փոխանակման խնդիրները, որոնց հետ անմիջականորեն կապված են ձեռներեցության սուբյեկտների կառավարման և շուկայավարման հարցերը:

Այսպիսով, հետազոտելով ՀՀ Արարատի մարզի ագրարային ոլորտի ձեռներեցության արդի վիճակը, բացահայտելով առաջնային հիմնախնդիրները, կարելի է առանձնացնել այն հիմնական գործոնները, որոնք խոչընդոտում են մասնավոր հատվածի և ձեռնարկատիրական գործունեության զարգացմանը մարզում:

1. Ձեռնարկատիրության աջակցման և մասնավոր հատվածի զարգացման տարածաշրջանային ծրագրերի մշակման անհրաժեշտություն, որի սկզբնական փուլում պետք է հստակեցվեն այն ռեսուրսները, որոնք տարածաշրջանի համայնքները կարող են տրամադրել ձեռներեցության զարգացման և մասնավոր ներդրումները խրախուսելու նպատակով:

2. Մարզի տնտեսության գերակա ճյուղերում մասնավոր հատվածի զարգացման հայեցակարգերի ընդունում: Այս պարագայում Արարատի մարզի բոլոր տարածաշրջանների համար գերակա են համարվում գյուղատնտեսական մթերքների արտադրությունը, վերամշակումը և իրացումը, ինչպես նաև զբոսաշրջությունը, իր ենթակառուցվածքներով հանդերձ (հյուրանոցներ, սննդի տրամադրման օբյեկտներ, ազգային ավանդական ապրանքների ցուցադրում ու վաճառք և այլն):

3. Մասնավոր ինվեստիցիաների խթանման միջոցառումների իրականացում: Մարզի տարածաշրջաններում ձեռներեցության և մասնավոր հատվածի զարգացման ծրագրերի, գերակա ոլորտների հայեցակարգերի հիման վրա կձևավորվեն մասնավոր ներդրումների առաջարկներ, որը կբարելավի գործարար միջավայրն ու մրցակցային դաշտը: Անհրաժեշտ է մշակել մարզային և տարածաշրջանային ներդրումային առաջարկների փաթեթներ, կազմակերպել իրազեկման միջոցառումներ, դրանք քննարկել ՏԻՄ-երի և պոտենցիալ ներդրողների մասնակցությամբ:

4. Անհրաժեշտ է օժանդակել Արարատի մարզի գործարարներին ֆինանսավորման այլընտրանքային ռեսուրսների հայթայթման, արտաքին ֆինանսավորման ներգրավման հարցերում: Օժանդակել արտադրողներին այլընտրանքային ֆինանսավորման և լիզինգային ծրագրերի իրականացման հարցերում:

5. Գյուղատնտեսական արտադրանք մթերող կազմակերպությունների համար ստեղծել կարճաժամկետ և երկարաժամկետ ֆինանսական ռեսուրսներից մատչելի

պայմաններով (ցածր տոկոսադրույք, մարման ճկուն գրաֆիկ և այլն) օգտվելու հնարավորություններ:

6. Օժանդակել ազարակային տնտեսություններին և գյուղմթերքներ վերամշակող ձեռնարկություններին արտադրություն կազմակերպելու հարցում, նրանց միավորելով ընկերությունների կամ միությունների մեջ, որը հնարավորություն կտա բարելավել արտադրանքի ապրանքային տեսքը, դիզայնը, փաթեթավորումը, գովազդի կազմակերպումը, դուրս գալ արտաքին շուկա ավելի մեծ ապրանքային խմբաքանակով, իսկ դա իր հերթին կբերի տրանսակցիոն ծախսերի կրճատմանն ու «մասշտաբի էֆեկտի» կիրառմանը:

Մասնավոր հատվածի զարգացման հիմնախնդիրների վերլուծությունը ցույց է տալիս, որ Արարատի մարզի տնտեսության հետագա զարգացման համար էական է շարունակելով առանձին ՓՄՁ-ների մակարդակով ցուցաբերվող աջակցությունը, անցում կատարել կոնկրետ ոլորտների և տարածաշրջանների մակարդակով մասնավոր հատվածի զարգացման ծրագրային միջոցառումների իրականացմանը:

### ԳԼՈՒԽ 3.

## ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՈԼՈՐՏՈՒՄ

### 3.1. Պետական աջակցության մեխանիզմների կատարելագործման ուղիները

Տնտեսավարման արդի շրջանում պետությունը և շուկան պետք է հանդես գան միասին, համագործակցեն, ունենան միասնական նպատակ: Ոչ պետությունը և ոչ էլ շուկան առանձին-առանձին չեն կարող գործել արդյունավետ, նրանք պարտավոր են լրացնել իրար՝ շտկելով մյուս կողմի թերությունները:

Տնտեսագիտական գրականության մեջ տնտեսության պետական միջամտության վերաբերյալ գոյություն ունեն բազմաթիվ տեսակետներ, որոնցից կարելի է առանձնացնել.

- Ջոնաթան Դյուգսին՝ «Մեկ դար առաջ հազվադեպ էր կատարվում մասնավոր հատվածի տնտեսական գործունեության ֆեդերալ կարգավորում: Այսօր մասնավոր հատվածի վերահսկողությունը շատ տարածված երևույթ է»:<sup>1</sup>
- Չարլզ Վոլֆին՝ «Պետական քաղաքականության միջամտության սկզբունքային հիմնավորումը կապված է շուկայական արդյունքի որոշ թերությունների հետ»:<sup>2</sup>
- Թայլեր Բոուենին՝ «Պետական միջամտության տնտեսական հիմնավորումների մեծ մասը հիմնված է այն գաղափարի վրա, որ շուկան չի կարող ապահովել հասարակական բարիքները և վերացնել արտաքին ազդակները»:<sup>3</sup>

Ամերիկացի նշանավոր տնտեսագետ Փոլ Ա. Սամյուելսոնը նշում է շուկայական բաշխման թերությունները, որի համար պետությունը պետք է միջամտի շուկայական գործընթացին: Դրանք են՝ արտաքին ծախսերը և օգուտները, հասարակական բա-

<sup>1</sup> Jonathan Hughes, "Do Americans Want Big Government" in *Second Thoughts* (New York: Oxford University Press, 1993), էջ 115

<sup>2</sup> Charles Wolf, *Ir Markets or Government* (Cambridge: MIT Press, 1988) էջ 17

<sup>3</sup> Tyler Cowen, "Public Coods and Externalitis" *Fortune Encyclopedia of Economics* (Lt haca, N4, Wamer, 1993), էջ 74



րիքները, մոնոպոլիան, անհրազեկ սպառողները: Տնտեսության պետական կարգավորման ողջ տրամաբանությունը հանգեցնում է այն ճշմարտությանը, որ շուկայական մոդելի արդյունավետությունը մեծացնելու և շուկայական իշխանության չարաչափումները սանձելու համար անհրաժեշտ է մի շարք լծակների օգտագործման միջոցով ազդել դրա վրա, ինչը նշանակում է, որ տնտեսական համակարգի պետական կարգավորումը դառնում է անխուսափելի:<sup>1</sup>

Պետության և շուկայի համագործակցության վերաբերյալ տեսակետներ են հայտնել նաև մեր հանրապետության առաջատար տնտեսագետներից Ա.Մարկոսյանը<sup>2</sup>, Յ.Աղաջանյանը<sup>3</sup>, Ս.Ավետիսյանը<sup>4</sup>, Ս.Ղազարյանն ու Է.Ղազարյանը<sup>5</sup>, Յ.Ֆահրադյանը<sup>6</sup> և այլոք:

Ագրարային ոլորտի պետական միջամտությունը տնտեսական քաղաքականության միջոցառումների համակարգ է, որն իրականացվում է արտադրության զարգացման, գյուղի սոցիալական և արտադրական ենթակառուցվածքների կատարելագործման, ձեռնարկատիրական գործունեության ծավալման համար նորմալ պայմաններ ապահովելու, գյուղացիական տնտեսությունների առաջընթացին նպաստելու և ընդհանրապես գյուղական բնակավայրերի սոցիալ-տնտեսական զարգացման խթանման նպատակով: Ագրարային ոլորտի համալիր զարգացումը և կարգավորումը չի կարող լիովին իրականացվել ոչ շուկայի և ոչ էլ պետության կողմից:

Զարգացած շուկայական տնտեսությունների փորձը վկայում է, որ արդյունավետ սոցիալ-տնտեսական զարգացումը հնարավոր է միայն շուկայական և պետական մեխանիզմների օպտիմալ համագործակցության շնորհիվ, որտեղ արդեն իրականացված է «աշխատանքի բաժանում» պետության և շուկայի միջև: Այդ մոտեցումը որոշակիորեն անհավասարակշռվում է անցման շրջանի տնտեսության երկրներում, որտեղ պետական կարգավորման գործառույթների շրջանակն ավելի լայն է լինում:

<sup>1</sup> Սամուելսոն Փոլ Ա., Նորդհաուս Ուիլյամ Դ. «Տնտեսագիտություն-2», Միկրոտնտեսագիտություն, Եր., Ապրիլ, 1996, էջ 344

<sup>2</sup> Մարկոսյան Ա., Պետությունը և շուկան, գիրք 1-ին, Եր., «Տիգրան Մեծ», 2000թ., էջ 560

<sup>3</sup> Աղաջանյան Յ., «Պետությունը և տնտեսությունը», Եր., «Տնտեսագետ», 2004թ., 400 էջ

<sup>4</sup> Ավետիսյան Ս., «Հայաստանի Հանրապետության ագրարային շուկայի ձևավորման հիմնախնդիրները անցումային տնտեսության պայմաններում», Եր., 2002թ.

<sup>5</sup> Ղազարյան Ս.Գ., Ղազարյան Է.Ս., Պետության ագրարային քաղաքականությունը և դրա կարգավորիչ դերը գյուղատնտեսության ոլորտում, Ագրոգիտություն, N 5, Երևան, 2002, էջ 199-203

<sup>6</sup> Ֆահրադյան Յ., «Ագրարային արմատական վերակառուցումները Հայաստանի Հանրապետությունում», ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Եր., 2003թ., էջ 212

Տվյալ իրավիճակում պետական կարգավորման օբյեկտ է դառնում նաև շուկայական տնտեսավարման անցման գործընթացը, որտեղ ավելի է կարևորվում տնտեսության պետական կարգավորման դերը, քան ձևավորված շուկայական տնտեսության պայմաններում: «Փոփոխությունների ժամանակ կառավարությունը պետք է ուժեղացնի այն հիմնադրույթները, որոնք զբաղվում են վարչական ղեկավարմամբ, այն է՝ համակարգմամբ, ծրագրերի մշակմամբ, անձնակազմով, ֆինանսների ղեկավարմամբ և հետազոտություններով: Այս ծառայությունները կազմում են և միշտ կկազմեն ցանկացած ձեռնարկության ուղեղն ու կամքը»:<sup>1</sup>

Պետության և շուկայի համագործակցումն առավել կարևորվում է ագրարային ոլորտում, որտեղ վերարտադրության տնտեսական գործընթացները միահյուսվում են բնակլիմայական և կենսաբանական գործոնների հետ, ինչը դրսևորվում է արտադրության սեզոնայնությամբ, ռիսկայնությամբ և արդյունքի ստացման անորոշություններով: Բացի դրանից, գյուղատնտեսությունը շուկայական հարաբերություններին անցման փուլում ավելի է խճճվում՝ պայմանավորված հողի և գյուղատնտեսական արտադրության մյուս միջոցների սեփականության ձևերի փոփոխմամբ, իրավաօրենսդրական կարգավորմամբ, հարկային նոր մեխանիզմի, գնակազմավորման և մի շարք տնտեսական մեխանիզմների նորովի արմատավորմամբ: Այստեղ էական դերակատարություն ունի նաև տնտեսագիտությունը, հատկապես ագրոտնտեսագիտությունը, քանի որ տնտեսագիտական հետազոտությունների օգնությամբ կարող են բացահայտվել և վերլուծվել գյուղատնտեսության զարգացումն ու դրա ինտենսիվությունը պայմանավորող գործոնները, դրանց վրա ազդելու հնարավորությունները, միջոցներն ու ուղղությունները, ուսումնասիրել և լուծել այդ նպատակների իրականացմանն առնչվող բազմաթիվ ու բազմաբնույթ խնդիրները:<sup>2</sup>

Ընդհանրապես, գյուղատնտեսության պետական կարգավորման անհրաժեշտությունը բխում է հետևյալ հանգամանքներից.

<sup>1</sup> Դենհարդ Բ. Լոբերո, Արիզոնայի նահանգային համալսարան, «Հանրային կազմակերպության տեսություններ», Եր., «Անտարես», 2006, էջ 85

<sup>2</sup> Ղազարյան Է.Ս., ՀՀ ագրարային տնտեսագիտության դերն ու տեղը շուկայական տնտեսության զարգացման գործում: Եր., «Հայագիտակ», 2003, էջ 145

1. Պետությունը պատասխանատվություն է կրում բնակչության պարենային ապահովության համար, երաշխավորում է երկրի տնտեսական և պարենային անվտանգությունը և նրա քաղաքական անկախությունը:

2. Ելնելով արտադրության վերջնական արդյունքների վրա բնակլիմայական գործոնների ազդեցությունից, պետությունը պետք է ստեղծի երաշխավորված ապահովագրական համակարգ: Պետական կարգավորման միջոցով անհրաժեշտ է գյուղատնտեսական ձեռնարկություններին ապահովել տնտեսության մյուս ճյուղերին համահավասար պայմաններ՝ ընդլայնված վերարտադրության իրականացման և անհրաժեշտ եկամտի ստացման ապահովման նպատակով:

3. Պետությունը գյուղատնտեսության ոլորտում պետք է ստեղծի շուկայական ենթակառուցվածք, իրականացնի սոցիալ-տնտեսական բարեփոխումներ, աստիճանաբար կատարելագործի ձեռնարկատիրության վարքագծի մոդելը, ձևավորի կառավարման ճկուն համակարգ, կիրառի գնային և մաքսային այնպիսի քաղաքականություններ, որոնք չխոչընդոտեն, այլ նպաստեն գյուղացիական ազգային տնտեսության զարգացմանը և ներքին շուկայի կայունացմանը:

Ագրարային ոլորտում պետության աջակցության ձևերը բազմազան են և հանդիսանում են՝

- բյուջետային դոտացիաները, սուբսիդիաները և սուբվենցիաները,
- ագարակատերերին ցածր տոկոսադրույքով և (կամ) անտոկոս բյուջետային երաշխիքային վարկերի տրամադրումը,
- պետական գնման երաշխավորված գների սահմանումը,
- պետական նպատակային ծրագրերի մշակումը և իրականացումը առանձին ճյուղերի կամ տարածաշրջանների համար,
- բյուջետային աջակցությունն ուղղված ճյուղի սոցիալական ենթակառուցվածքների զարգացումը,
- առևտրային բանկերի կողմից գյուղացիական տնտեսություններին տրվող վարկերի տոկոսադրույքի և ապահովագրական վճարների մի մասի սուբսիդավորում և այլն:

Այստեղից հետևում է, որ անհրաժեշտ է հստակեցնել պետական ներգործությունը տնտեսական մեխանիզմի հիմնական տարրերի (իրավական, վարչական, ինստիտուցիոնալ, տնտեսական և այլն) միջոցով նպաստել գյուղատնտեսության համաչափ զարգացմանը, ինչը պետք է նպատակամղվի առաջնային (գերակա) խնդիրների լուծմանը, որոնք առկա են գյուղատնտեսական արտադրության զարգացման տվյալ փուլում:

Այս ուղղությամբ, սկսած 2007 թվականից ՀՀ կառավարությունը կատարել է սուբսիդավորման փորձնական ծրագիր՝ Արագածոտնի և Գերարքունիքի մարզերի Արագած ու Գամբարակ տարածաշրջաններում, 2008 թվականից՝ ՀՀ յոթ մարզերում, ցանքատարածությունների յուրաքանչյուր հեկտարի մշակման դիմաց վճարելով 35 հազար դրամ: Հողօգտագործման բնագավառում սուբսիդավորման նպատակներից են.

- տարբեր բնատնտեսական պայմաններում գյուղացիական տնտեսությունների համար նպաստավոր մրցակցային միջավայրի ձևավորում և գերակա ուղղությունները զարգացնելու համար խթանող պայմանների ստեղծում,
- տարածաշրջանների կտրվածքով պարենային ինքնաապահովման և սոցիալական վիճակների բարելավման համար պայմանների ստեղծում:

Ընդհանուր առմամբ, ՀՀ գյուղատնտեսության ոլորտում սուբսիդավորման խնդիրներն են.

- հիմնավորել սուբսիդավորման անհրաժեշտությունը,
- սահմանել սուբսիդավորման ուղղությունները և իրականացման մեխանիզմները,
- բացահայտել առավել աջակցության կարիք ունեցող տարածաշրջանները, համայնքները և տնտեսության ոլորտները,
- որոշել սուբսիդավորման կիրառման ձևերը,
- կանխատեսել սուբսիդավորումից ակնկալվող արդյունքների չափերը:

Գյուղատնտեսության սուբսիդավորման ուղղությունները բաժանվում են ըստ տնտեսական գործունեության բնագավառների և ըստ օբյեկտների:

Ըստ տնտեսական գործունեության բնագավառների սուբսիդավորումն ընդգրկում է հողօգտագործումը, վարկերի տրամադրումը, պարարտանյութերի, քիմիկատների, դեղորայքի, գյուղտեխնիկայի ձեռքբերման աջակցությունը և այլն:

Ըստ օբյեկտների սուբսիդավորումը կարող է ընդգրկել գյուղացիական անհատական կամ կոլեկտիվ տնտեսությունները, համայնքը կամ տարածաշրջանը: Կախված կոնկրետ պայմաններից և առանձնահատկություններից տարբեր են լինում նաև սուբսիդավորման ձևերն ու ծավալները:

Պետության կողմից գյուղատնտեսության աջակցությունը չի սահմանափակվում միայն հողօգտագործողներին դրամական սուբսիդիա վճարելով: Այն ընդգրկում է նաև գյուղատնտեսական վարկերի տոկոսադրույքների, պարարտանյութերի և քիմիկատների, բարձր մթերատվության անասունների ձեռք բերման, տեխնիկայի գնման սուբսիդավորումը:

ՀՀ գյուղատնտեսության նախարարության միջոցով իրականացվում է վարկային տոկոսադրույքի 6-8%-ի սուբսիդավորում պետական բյուջեի միջոցներից, ինչը որոշակի չափով նպաստում է վարկային տեղաբաշխման ռիսկայնության դիվերսիֆիկացմանը և տնտեսական գործունեության խթանմանը: Նշենք, որ այս միջոցառումը սկսվել է 2008 թվականից Շիրակի մարզի Աշոցքի և Ամասիայի 44 համայնքներում և Գեղարքունիքի մարզի ճամբարակի քաղաքային և 15 գյուղական համայնքներում: Դա զգալիորեն խթանեց նշված տարածաշրջաններում գյուղատնտեսական աշխատանքների ակտիվացմանը, սակայն լայն տարածում չստացավ ամբողջ հանրապետության մասշտաբով:

Ներկայումս տրամադրվող վարկերի տոկոսադրույքը կազմում է 12 -14 տոկոս: Վարկերի տոկոսադրույքի 6-8 տոկոս սուբսիդավորման պարագայում, մասնագետների գնահատմամբ, (տարեկան 7-10 տոկոս) կարճաժամկետ և միջնաժամկետ վարկեր ձեռք բերման պահանջարկը հանրապետության գյուղատնտեսության ոլորտում կազմում է շուրջ 150 մլրդ դրամ, որից բուսաբուծությունում` 95 և անասնաբուծությունում` 55 մլրդ դրամ:<sup>1</sup>

<sup>1</sup> «Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքի սուբսիդավորման մասին», ՀՀ կառավարության 2008թ. որոշում

Ոլորտի արտադրության ծավալների ավելացմանը զուգընթաց մեծանալու է վերամշակող ձեռնարկությունների պահանջարկը վարկային ռեսուրսների հանդեպ: Նման պարագայում տրամադրվող վարկերի տոկոսադրույքի մասնակի սուբսիդավորումը հանդիսանում է պետական ու մասնավոր հատվածների համագործակցության արդյունավետ ձևերից մեկը, ինչի պայմաններում հնարավոր է գյուղատնտեսության վարման ռիսկերը դիվերսիֆիկացնել 3 կողմերի՝ պետության, վարկավորող կազմակերպությունների և տնտեսավարողների միջև՝ նպաստելով հանրապետությունում բանկային համակարգի ամրապնդմանը, վարկային տոկոսադրույքի նվազեցմանը, որը կնպաստի ագրոպարենային համալիրի զարգացմանը: Վարկերի տոկոսադրույքի սուբսիդավորումը բխում է նաև Առևտրի համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) պահանջներից՝ ինչը նախատեսում է ներքին շուկայի մատչելիության ապահովում, արտահանման լրավճարների բացառում, առևտրի խոչընդոտների վերացում և այլն:

Գյուղատնտեսական արտադրության առանձնահատկություններով պայմանավորված տնտեսավարող սուբյեկտները արտադրության ընթացքում ունենում են խոշոր ներդրումների և շրջանառու միջոցների լրացման կարիք, որի ամենահուսալի աղբյուրը վարկն է: Արարատի մարզի ագրարային ոլորտում, ինչպես արդեն նշվել է, իրականացվում է «Ակբա-կրեդիտ-Ագրիկոլ» բանկի կողմից: Ներկայումս վարկերը գյուղացիական տնտեսություններին տրվում են կարճատև և բարձր տոկոսադրույքներով, ինչի հետևանքով գյուղացիական տնտեսությունները բնական աղետների պատճառով, կորցնելով բերքի մի զգալի մասը, հայտնվում են տնտեսական ծանր վիճակում: Առաջարկում ենք սուբսիդավորել ոչ թե առևտրային բանկերի կողմից տրվող տոկոսադրույքները, այլ գյուղատնտեսական մթերքների արժեքները:

2012թ.-ից ՀՀ կառավարությունը ամեն տարի մարզի գյուղացիական տնտեսություններին, շուկայականից ցածր գներով հատկացնում է պարարտանյութեր և դիզելային վառելիք: 2012-2014թթ. մարզին հատկացվել է 9355 տ՝ 1 մլն 122600 դրամ արժողությամբ ազոտական պարարտանյութ և 3620371 լ՝ 1 մլրդ 267 մլն 129850 դրամ արժողությամբ դիզելային վառելիք: 2012-2014թթ. կառավարության կողմից մարզի գյուղացիական տնտեսություններին հատկացվել է աշնանացան ցորենի 322 տ 1-ին վերարտադրության սերմացու՝ 1 կիլոգրամը 160 դրամով հետ վերադարձնելու պայ-

մանով և 13.67 տ էլիտային վերարտադրության սերմացու՝ 1:2 փոխհարաբերությամբ 1-ին վերարտադրության սերմացու վերադարձնելու պայմանով: Սակայն անհրաժեշտ է նշել, որ գյուղացիական տնտեսությունները իրենց ցածր վճարունակության պատճառով չեն կարողանում բավարար քանակությամբ պարարտանյութ, դիզվառելիք, սերմացու ձեռք բերել: Այդ պատճառով՝ բերքատվության ցուցանիշները կարող էին ավելի բարձր լինել, չնայած դրան մարզի բուսաբուծական մթերքների բերքատվության ցուցանիշները բարձր են հանրապետության միջինից:

Բերքատվության ցուցանիշների վրա մեծ ազդեցություն ունի նաև մարզում գյուղմթերքների իրացման մեծածախ շուկաների բացակայությունը՝ չի իրացվում արտադրված ամբողջ բերքը:<sup>1</sup>

ՀՀ կառավարության կողմից սուբսիդավորման իրականացումը նպատակ ունի կանխելու գյուղմթերքների շուկայական գների աճը: Այսպես, վերջին 5-6 տարիների ընթացքում գյուղացիական տնտեսություններին ազոտական պարարտանյութերը զեղչ գներով է տրամադրվում, պետությունն իր վրա է վերցնում դրանց ծախսերի մի մասը՝ մասնավորապես հանքային պարարտանյութերի գները շուկայականից ցածր է եղել 50%-ով, իսկ դիզելային վառելիքինը՝ 25%-ով: Նույն մոտեցումն է ցուցաբերում դիզելային վառելիքի և առանձին դեղամիջոցների հանդեպ: Մարզում 2013-2014թթ. դոտացիոն գներով տրամադրվել է 9950 տ ազոտական պարարտանյութ, 1497 կգ թունաքիմիկատներ: Վերջինս տրամադրվել է անվճար: Մարզի 57 համայնքների 430 գյուղացիական տնտեսություններին անվճար հատկացվել է 64.5 տոննա ցորենի սերմացու:

Անասնաբուծության բնագավառում սուբսիդավորումը նպատակ ունի գյուղացիներին հնարավորություն տալ ձեռք բերել բարձր մթերատվության կովեր և մատղաշներ, որպեսզի բարձրացվի ոլորտի արդյունավետության մակարդակը: Կառավարության օժանդակությամբ, ՀՀ գյուղատնտեսության նախարարության միջոցով ներկրվում են բարձր մթերատվության կովեր և մատղաշներ, որոնց միջին օրական կաթնատվությունը կազմում է 29 լիտր (4.2% յուղայնությամբ): ՀՀ գյուղնախարարությունը արտասահմանյան երկրներից ձեռք է բերում կով կամ մատղաշ, տրամադրում

<sup>1</sup> ՀՀ Արարատի մարզի 2015-2018 թվականների սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիր, էջ 160

գյուղացուն, իսկ վերջինս պետությանը տալիս է բանկային երաշխիք՝ վերադարձնել դրամական արժեքները 4 տարվա ընթացքում (առաջին տարին 10%, երկրորդը՝ 20, երրորդը՝ 30 և մնացած 40 տոկոսը վերջին չորրորդ տարում):

Սոցիալ-տնտեսական կյանքում անասնաբուծությունն ունի ավելի գլոբալ և լայնամասշտաբ նշանակություն, քան սովորական բժշկությունը: Բավական է հիշել այն աֆորիզմը, որ «Բժիշկը բուժում է մարդուն, իսկ անասնաբույժը՝ մարդկությանը»: Կենսաբանական անվտանգության հիմնահարցը գիտական և գործնական նշանակության բարդ խնդիր է ոչ միայն սոցիալ-տնտեսական տեսակետից, այլ մարդկանց առողջապահության ապահովման առումով: Բնակչությանը կենդանական ծագման անվտանգ սննդամթերքով ապահովելու համար պետք է լուրջ ուշադրություն դարձնել անասնաբուժական հիմնախնդրին:

Հանրապետությունում անասնաբուժական գործի կազմակերպման արդյունավետությունը բարձրացնելու, մոտակա տարիներին համաճարակային իրավիճակը բարելավելու, կենդանական ծագման անվտանգ մթերքի ու հումքի արտադրության համար, անհրաժեշտ է ճյուղի կառուցվածքային փոփոխություններում հիմնական տեղը հատկացնել ոչ թե սննդամթերքի անվտանգությանը, այլ այն ապահովող անասնաբուժական տեսչությանը: Դրա հետ կապված խնդիրները պայմանավորված են անասնաբուժական գործունեության մակարդակով, որն իրականացվում է անասնաբուժական-սանիտարական փորձաքննությամբ:<sup>1</sup>

Հանրապետությունում որոշակիորեն վատթարացել է հակահամաճարակային վիճակը կապված գյուղատնտեսական կենդանիների վարակիչ հիվանդությունների դեմ պայքարի միջոցառումների անվանացանկի կրճատման հետ: Արարատի մարզում աշխատում են 78 անասնաբուժներ, որոնք իրականացնում են անասնաբուժական միջոցառումներ և սննդամթերքի անվտանգություն «Սննդամթերքի անվտանգության մասին»<sup>2</sup> և «Անասնաբուծության մասին»<sup>3</sup> ՀՀ օրենքների ու իրավական նորմատիվ ակտերով սահմանված պահանջներին համապատասխան վերահսկողություն: Պետպատվերի շրջանակներում 90-98 տոկոսով կատարվում են կենդանիների հիվանդու-

<sup>1</sup> Գրիգորյան Ս. «ՀՀ անասնաբուժական ծառայության մի քանի հիմնախնդիրների շուրջ», Հայաստանի Հանրապետության օրաթերթ, 18 փետրվարի, 2011թ.

<sup>2</sup> «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենք, ՀՀ ՊՏ 2006/64 (519), 20.12.2006

<sup>3</sup> «Տոհմային անասնաբուծության մասին» ՀՀ օրենք, ՀՀ ՊՏ 2005/40, (412), 24.06.2005



թյունների դեմ պատվաստումներ, ախտորոշիչ հետազոտություններ և անասնաբուժասանիտարական միջոցառումներ:

Այնուհանդերձ, մարզում առաջնահերթ խնդիր է մնում անասնաբուժական պարտադիր միջոցառումների մեջ ընդգրկվող հիվանդությունների ցանկի ընդլայնումը և սննդամթերքի անվտանգության ու անասնաբուժական պետական տեսչության մարզային կենտրոնի բազայի ամրապնդումը: Համայնքներում գործող անասնաբույժների աշխատանքի արդյունավետության բարձրացումը պահանջում է իրականացնել ներդրումներ՝ ուղղված անասնաբույժների գործունեության բազայի ստեղծմանն ու ամրապնդմանը:

Ժամանակակից շուկայական հարաբերությունների պայմաններում պետությունը չպետք է բավարարվի անմիջապես գործնական աջակցություններով, այլ նաև պետք է վերահսկի շուկան և ուղղություն տա արտադրական գործունեությանը: Նույնիսկ այն դեպքում, երբ ռեսուրսները տեղաբաշխելու հիմնական որոշումները կայացվում են մասնավոր հատվածում, կառավարությունները աչալրջորեն հսկում են, որպեսզի կանխեն շուկայական իշխանության չարաշահումը, բայց միևնույն ժամանակ մասնավոր ընկերություններին հնարավորություն են ընձեռում մրցակցելու իրենց արտասահմանյան մրցակիցների հետ:<sup>1</sup> Տնտեսության պետական կարգավորման միջոցով «պետությունը հաստատում է տնտեսության ինստիտուցիոնալ միջավայրի անբաժան մասը համարվող որոշակի ամրագրված կանոններ (մասնավորապես օրենքներ), որոնք հասարակության մեջ գոյություն ունեցող, սակայն չգրված (չամրագրված) սկզբունքներին (կանոններին) զուգահեռ հանդիսանում են հասարակության անդամների վարքագծի կառավարման միջոցները»:<sup>2</sup>

Շուկայական տնտեսավարմանն անցնելուց հետո մեր հանրապետությունում տնտեսության պետական կարգավորման «պետություն և շուկա» հարաբերություններում դեռևս բացակայում են համակարգված մոտեցումները, կարգավորման մեթոդների ու մեխանիզմների փոխկապակցված համակարգը: Անկախության սկզբնական

<sup>1</sup> Հարությունյան Դ., Գործարարության ծավալման տնտեսական խթանները Հայաստանի Հանրապետությունում: - Եր., «Արեգ» հրատ., 2007, էջ 54-55

<sup>2</sup> Մարկոսյան Ա., «Պետությունը և շուկան», Եր., «Տիգրան Մեծ», 2000, էջ 15

շրջանում դա հասկանալի և ընդունելի էր, սակայն ներկայումս արդեն դարձել է օբյեկտիվ անհրաժեշտություն, որը պահանջում է ունենալ լուծումներ:

Անցումային տնտեսության երկրներում ձեռներեցության զարգացմանը բնորոշ են մի շարք հիմնախնդիրներ, որոնց լուծումները կարող են իրականացվել միայն պետական աջակցության միջոցով: Դրանցից են, առաջին հերթին, ներդրումային բարենպաստ միջավայրի առկայությունը: Պետության կողմից վարվող հստակ քաղաքականությունը և ձեռներեցության շահերը պաշտպանող կառույցների հստակ գործունեության դեպքում է հնարավոր ձեռնարկատիրական գործունեության հետագա զարգացում տնտեսության բոլոր ոլորտներում, հատկապես՝ գյուղատնտեսության մեջ:

Այստեղ անհրաժեշտ է վերհանել առաջնային նպատակները և խնդիրները, դրանց լուծման համար մշակել հեռանկարային և միջանկյալ միջոցառումների ծրագրեր: Որպես կանոն, հեռանկարային ծրագրերին են պատկանում գործազրկության ու աղքատության կրճատումը, մրցակցային դաշտի ապահովումը, երկրում բնակչության բարեկեցության բարձրացումը և սոցիալական բնույթի հիմնախնդիրների լուծումը:

Ագրարային ոլորտում ձեռնարկատիրության պետական աջակցության հիմնական ուղղություններն են.

1. Կազմակերպական բնույթի օգնության իրականացում՝ իշխանական կառույցներում կազմակերպչա-տնտեսական հարցերի օպերատիվ և գործնական լուծում, պետական ռեսուրսներից օգտվելու մրցակցային հավասար պայմանների ապահովում:
2. Տնտեսական բնույթի աջակցություն, ինչը ներառում է՝
  - ա) գործող արտադրություններին աջակցում,
  - բ) հարկային արտոնություններ՝ հարկերից ազատում, հարկային զեղչեր, հարկադրույքների ժամանակավոր իջեցում և այլն,
  - գ) նոր կազմակերպվող արտադրություններին աջակցություն՝ կախված տնտեսական ցիկլի տևողությունից ազատել հարկերից 1-3 տարով,
3. Ֆինանսավարկային աջակցություն՝
  - ա) արտոնյալ (անտոկոս) վարկերի, կարճաժամկետ փոխառությունների տրամադրում,

- բ) ֆինանսական օգնության տրամադրում արտադրության վերամասնագիտացման ծրագրերի իրականացման համար,
- գ) ձեռնարկությունների պարտավորությունների գծով գրավատուի երաշխավորի գործառույթների կատարում,
- դ) սպառողների շահերի պաշտպանության տնտեսական նոր կառույցներին աջակցման, ձեռնարկությունների համար կադրերի պատրաստման, վերապատրաստման և որակավորման բարձրացման միջոցառումների ֆինանսավորում և այլն:

4. Տեղեկատվական աջակցություն գործող ձեռնարկություններին:

Հայաստանի Հանրապետությունում ձեռնարկատիրության նկատմամբ իրականացվող պետական քաղաքականությունը հիմնականում որակվում է որպես աջակցման քաղաքականություն, ինչը նպատակաուղղված է իրականացնելու «ՓՄՁ պետական աջակցության մասին» ՀՀ օրենքով ամրագրված պետական աջակցության հիմնական ուղղությունները: Այդ օրենքով հանրապետությունում ձեռներեցության պետական աջակցության հիմնական ուղղություններն են՝ իրավական նպաստավոր դաշտի ձևավորումը, ֆինանսական և ներդրումային աջակցությունը, երաշխիքների տրամադրումը, ենթակառուցվածքների ստեղծումը և զարգացումը, տեղեկատվական ու խորհրդատվական օգնությունը, արտաքին կապերի խթանումը, առաջավոր տեխնոլոգիաների ներդրման աջակցությունը, բարենպաստ հարկային քաղաքականությունը, պետական գնումների, պարզեցված հաշվետվությունների գործընթացներին աջակցությունը և այլն:

Հայաստանում ձեռնարկատիրական գործունեության պետական աջակցությունն անհրաժեշտ է ապահովել բարենպաստ օրենսդրա-իրավական հիմքի վրա, աջակցության արտադրական և շուկայական ենթակառուցվածքների ստեղծման ծրագրերի միջոցով: Աջակցությունը պետք է բխի պետական քաղաքականության իրականացման կառուցակարգերի կատարելագործման և կորդինացման անհրաժեշտությունից:

Հանրապետությունում ձեռնարկատիրական գործունեության իրականացման բարենպաստ միջավայրի ապահովումը պետական քաղաքականության հիմնական

ուղղություններից է: Ոլորտի զարգացման համար իրավա-տնտեսական դաշտի ձևավորումը ենթադրում է պետական աջակցության հետևյալ ուղղությունների ապահովումը.

- իրավական բարենպաստ դաշտի ձևավորումը,
- ֆինանսական և ներդրումային աջակցությունը, երաշխիքների տրամադրումը,
- աջակցող ենթակառուցվածքների ստեղծման ու զարգացման նպաստելը,
- տեղեկատվական և խորհրդատվական օգնությունը,
- արտաքին տնտեսական գործունեության խթանումը,
- նորարարական գործունեության և ժամանակակից տեխնոլոգիական ներդրման աջակցությունը,
- բարենպաստ հարկային քաղաքականության իրականացումը,
- կադրերի պատրաստումը և վերապատրաստումը,
- վիճակագրական հաշվետվությունների և հաշվապահական հաշվառման պարզեցված համակարգերի ստեղծումը,
- պետական գնումների իրականացման գործընթացին աջակցությունը:<sup>1</sup>

Այսպիսով, վերլուծելով ագրարային ոլորտում ձեռնարկատիրական գործունեության պետական աջակցության հարցերը, հանգում ենք այն եզրակացության, որ անհրաժեշտ է ակտիվացնել պետական ներգործությունը՝ տնտեսական մեխանիզմի բոլոր տարրերի (տնտեսական, վարչական, օրենսդրական, ինստիտուցիոնալ, սոցիալական և այլն) համակարգային մոտեցմամբ, որտեղ նրանք պետք է գործեն միասնաբար, չխոչընդոտեն իրար, այլ լրացնեն մյուսների բացթողումները, հետապնդելով մեկ ընդհանուր նպատակ:

Ամփոփելով հետազոտության այս հատվածը, կարելի է արձանագրել, որ չնայած չափավոր աճին ՀՀ գյուղատնտեսությունը դեռևս մնում է տնտեսության առավել խոցելի ոլորտներից մեկը, որը կարիք ունի պետական աջակցության: Գյուղատնտեսությունը հիմնականում ներկայացված է փոքր գյուղացիական տնտեսություններով, որոնք խոցելի են ոչ միայն շուկայից եկող տնտեսական շուկերից՝ պահանջարկը, գինը, այլ նաև պատշաճ պետական ֆինանսավորման և նպատակադրված

<sup>1</sup> Օհանջանյան Ս., Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական կարգավորման խնդիրները Հայաստանում: - Եր., «Լիմուշ», 2010, էջ 194-195

սուբսիդավորման սխեմաների բացակայությունից, մատչելի վարկային ռեսուրսների անհասանելիությունից: Այդ ուղղությամբ առաջարկում ենք երկրում տանել ակտիվ քաղաքականություն վարկային կոոպերատիվների ստեղծման ուղղությամբ և մեր կարծիքով գյուղացիական տնտեսությունների վարկավորման հիմնախնդրի լուծման հիմնական ուղին գյուղատնտեսական վարկային կոոպերատիվների ցանցի ստեղծումն է: Վարկային կոոպերատիվների առավելությունը կայանում է նրանում, որ ի տարբերություն առևտրային բանկերի ոչ թե առավելագույն շահույթ ստանալն է, այլ իր անդամների վարկային պահանջարկի բավարարումը: Վարկային կոոպերատիվի ստեղծումը կարագացնի տնտեսավարման նոր ձևերի, վերամշակման, իրացման, ագրոսպասարկման ծառայությունների մատուցման և կոոպերատիվների ստեղծման գործընթացը:

Վարկավորման մյուս կարևոր ուղին պետական վարկերի տրամադրումն է ցածր տոկոսադրույքով: Հաշվի առնելով 20-րդ դարի սկզբին ստոլիպինյան ռեֆորմի տարիներին Ռուսաստանի, Գերմանիայի և 70-ականներին Մերձավոր Արևելքի երկրներում, այժմ նաև ԱՄՆ-ում կիրառվող փորձը առաջարկում ենք ՀՀ-ում ստեղծել գյուղատնտեսական պետական բանկ և ընդունել օրենք վերջինիս մասին:

Գյուղատնտեսական պետական բանկի ֆինանսավորման աղբյուրներ կարող են հանդիսանալ պետական բյուջետային միջոցները, միջազգային ֆինանսական կազմակերպությունների կողմից տրվող արտոնյալ վարկերը, դրամաշնորհները, սեփականաշնորհումից գոյացած միջոցները և այլն:

Ոլորտի զարգացման վրա պետական միջամտությունը պետք է հիմնվի համակարգ ձևավորող սկզբունքների վրա՝ հաշվի առնելով գյուղատնտեսական ու տարածաշրջանային առանձնահատկությունները, տվյալ պահի հիմնախնդիրները, դրանց լուծման իրատեսական հնարավորությունները և այն ամենն, ինչը ներկայումս արգելքներ է ստեղծում տնտեսության կայունացմանն ու հետագա զարգացմանը:

Մեր կարծիքով գյուղատնտեսական արտադրության տնտեսավարման արդի փուլում Արարատի մարզի ագրարային ոլորտի ձեռնարկատիրական գործունեության զարգացման բնագավառում մեծ կարևորություն է ստանում նաև տնտեսական ռիսկերի հաղթահարման, դրանց կառավարման կատարելագործման ուղիների,

ռիսկերի նվազեցման հնարավորությունների բացահայտումը և արդյունավետ կառավարման հարցերը:

### **3.2. Ձեռնարկատիրական ռիսկերի կառավարման կատարելագործման ուղիները ՀՀ Արարատի մարզի ագրարային ոլորտում**

Ձեռնարկատիրությունը, լինելով շահույթ հետապնդող գործունեություն, միշտ էլ ուղեկցվում է ռիսկի գործոնով, քանզի իր մեջ պարունակում է հնարավոր կորստի վտանգ: Որպես կանոն, ձեռնարկատիրությունն իրականացվում է ձեռներեցի անձնական ռիսկի շրջանակներում: Ռիսկը բացասական և անորոշ հետևանքներով հասկացություն է, ինչը կարող է դրսևորվել ցանկացած պահի անհայտ աստիճանով, այսինքն հնարավոր չէ նախապես կանխագուշակել դրա ստույգ ժամկետը և ուժգնության չափը: Դրա համար էլ ռիսկն արդյունքի հասնելու հավանականության աստիճանի գործունեություն է:

Առօրյա կյանքում ռիսկերի սահմանման և էության վերաբերյալ գոյություն ունեն բազմաթիվ մոտեցումներ, որը կապված է դրա տարաբնույթ տեսակներից: Ամենատարածված և ընդունելի սահմանումը տրված է Գ.Դավիդովի և Ա.Բելիկովի կողմից<sup>1</sup>, որոնք ռիսկը սահմանում են, որպես հավանականություն՝ ձեռնարկության միջոցների (ռեսուրսների) մի մասի կորստի (վտանգ), եկամտի ոչ լրիվ ստացման, կամ որոշակի արտադրական կամ ֆինանսական գործունեության իրականացման արդյունքում ի հայտ եկած լրացուցիչ ծախսեր: Նշանակում է ռիսկը վերաբերվում է որևէ անբարենպաստ իրադարձության, վտանգի վրա հասնելու հավանականության: Հետևաբար, ռիսկի հետ կապված բացասական երևույթների վերացման համար անհրաժեշտ է բացահայտել հիմնական հատկանիշները, ծագման աղբյուրները, նրա հիմնական տեսակները, ռիսկի թույլատրելի մակարդակը, չափման և նվազեցման մեթոդները:

<sup>1</sup> Давыдов Г.В., Беликов А.Ю. Методика количественной оценки риска банкротства предприятий. //Управление риском, 1999, N3, էջ 13-20

Ռիսկի հիմնական հատկանիշներն են հակասությունը, անվստահությունը, անսպասելիությունը, այլընտրանքը և անորոշությունը<sup>1</sup>:

Ռիսկի կառավարման, կազմակերպման արդյունավետությունը որոշվում է հիմնականում ռիսկերի դասակարգման միջոցով<sup>2</sup>, որոնք բաժանվում են առաջին հերթին զուտ և սպեկուլյատիվ խմբերի:

Զուտ ռիսկերը զրոյական կամ բացասական արդյունքի դրսևորումներն են: Դրանց մեջ են մտնում բնական, բնապահպանական, քաղաքական, տրանսպորտային և առևտրային ռիսկերի մի մասը:

Սպեկուլյատիվ ռիսկերը ենթադրում են և դրական և բացասական արդյունքի հնարավորություն: Դրանց են վերաբերում ֆինանսական ռիսկերը, սղաճային, դեֆլյացիոն, արտարժույթային, լիկվիդայնության և ներդրումային ռիսկերը:

Ազդարային ոլորտի հետ ամենասերտ առնչությունն ունի բնական ռիսկը, որը կապվում է բնության աղետների (ջրհեղեղ, երկրաշարժ, փոթորիկ, կարկտահարություն, ցրտահարություն, համաճարակ, հրդեհ, երաշտ և այլն) հետ: Բնապահպանական ռիսկերը կապվում են շրջակա միջավայրի աղտոտման, իսկ քաղաքականը՝ երկրում քաղաքական իրավիճակի ու պետության գործունեության հետ: Տրանսպորտային ռիսկերը նույնպես անմիջականորեն կապվում են գյուղատնտեսության հետ՝ բեռների տեղափոխման, գյուղմթերքների պահպանման, պահեստավորման, փաթեթավորման և մի շարք այլ միջոցառումների իրականացման հետ:

Ռիսկի էությունը վերջին հաշվով դրսևորվում է նրա կատարած գործառույթներով: Շուկայական տնտեսավարման պայմաններում ռիսկը կատարում է երկու հիմնական գործառույթ՝ պաշտպանական և կարգավորման: Տնտեսագիտական գրականությունում նշվում է ռիսկի պաշտպանական գործառույթի երկու մոտեցում<sup>3</sup>.

ա) պատմական, որը ցույց է տալիս, թե տնտեսական կյանքի զարգացման ընթացքում ե՞րբ և ինչպե՞ս է առաջացել պաշտպանական գործառույթը: Համաշխարհային տնտեսագիտությունը ռիսկերի ապահովման գծով առանձնացնում է պարենային անվտանգության պաշարների 17% կամ երկու ամսվա համար, նշելով, որ ազ-

<sup>1</sup> Романов В.С. Управление рисками: Этапы и методы //Факты и проблемы практики менеджмента: Материалы научно-практической конференции, 30 октября 2001г., Киров: Изд. Вятского ГЛУ, 2001, էջ 71-72

<sup>2</sup> Бланк И.А. Стратегия и тактика управления финансами.- Киев: ИТЕМ и т.д. АДЕФ – Украина, 1996

<sup>3</sup> Альгин А.П. Риск и его роль в общественной жизни. М., 1989

գային կամ տարածաշրջանային պարենային պաշարները պարտադիր չէ, որ ամենուրեք լինեն նույնը: Դեֆիցիտը կարող է լրացվել ներմուծման միջոցով<sup>1</sup>:

բ) Սոցիալ-տնտեսական, որը կապվում է նորարարության՝ հիմնականում գիտատեխնիկական առաջադիմության (ԳՏԱ) զարգացման, դրանց արդյունքների ներդրման հետ:

Կարգավորման գործառույթն ունի հակասական բնույթ և դրսևորվում է երկու մոտեցումներով.

ա) կառուցողական՝ տնտեսական հարցերը լուծելիս ռիսկը կատարում է կատալիզատորի դեր, որտեղ ռիսկին բնորոշ է ակտիվացումը, նորին ձգտելը, նորարարական որոշումների փնտրելը և այլն:

բ) ապակառուցողական՝ դրսևորվում է այն դեպքերում, երբ որոշումները կայացվում են առանց բավարար հիմնավորման, ինչը հանգեցնում է բացասական արդյունքների:

Ընդհանրապես ռիսկը վերացական հասկացություն է, որը չունի առարկայական դրսևորում, բայց այդ հակասության միջոցով նկարագրվող իրավիճակներն առարկայական տեսք են ստանում իրական կյանքում<sup>2</sup>: Ռիսկը իրավիճակների տեսական ընդհանրացումն է, իսկ ռիսկային իրավիճակներն ունեն տարածման լայն միջակայք, ինչի համար դժվար է առանձնացնել կարգավորիչ գործառույթի օբյեկտիվ գործոններից որևէ մեկը: Օբյեկտիվ գործոն է նաև այն, որ տնտեսվարող սուբյեկտը հաշվարկներ է կատարում, որի նպատակը հնարավոր վնասներից խուսափելն է կամ էլ նվազեցնելը: Դա հատկապես վերաբերվում է ձեռնարկատիրական գործունեությանը: Նախապես հաշվարկներ կատարելը ձեռներեցներին հնարավորություն է տալիս հաջողությունների հասնել առաջադրված նպատակներին հասնելու համար:

Ռիսկի պետական կարգավորման արդյունավետությունը կախված է բազմաթիվ գործոններից, որոնցում առանձնանում է տնտեսվարող սուբյեկտի կողմից նյութական ռեսուրսներ ունենալու ապահովման աստիճանից: Նշանակում է ռիսկի օգտագործման հնարավորությունը բխում է տնտեսվարող սուբյեկտի որոշում ընդունելու ռիսկի ընկալման ու գնահատման հոգեբանական չափանիշներից:

<sup>1</sup> Ломакин В.К. Мировая экономика: учебник для вузов.- М., “Финансы”, ЮНИТИ, 1998, էջ 188

<sup>2</sup> Кох Т.У. Управление банком, Уфа, 1981



Ռիսկի կառավարման մեթոդները բազմազան են, իսկ ռիսկերի լուծման միջոցները դրանցից խուսափումն է, պահպանումը, փոխանցումը, ռիսկայնության աստիճանի նվազեցումը<sup>1</sup>:

Ռիսկի աստիճանի նվազեցման համար կիրառում են տարբեր եղանակներ: Դրանցից են.

- ռիսկերի դիվերսիֆիկացիան (տարբերակումը),
- արդյունքների վերաբերյալ լրացուցիչ տեղեկության ձեռքբերումը,
- քվոտավորումը (լիմիտավորում),
- ապահովագրումը,
- ինքնաապահովագրումը:

Դիվերսիֆիկացիան ռիսկի և եկամտի կորստի իջեցման նպատակով ներդրվող միջոցների բախումն է կապիտալի կիրառման տարբեր օբյեկտների միջև, որոնք իրար հետ կապված չեն: Դա հնարավորություն է տալիս խուսափել ռիսկի մի մասից՝ կապիտալը բաշխելով գործունեության տարբեր տեսակների միջև:

Քվոտավորումը (լիմիտի սահմանումը)՝ ծախսերի և վաճառքի սահմանային չափերի որոշումն է:

Ապահովագրումը՝ երբ ձեռներեցը պատրաստ է նախապես հրաժարվել արդյունքի մի մասից, որպեսզի խուսափի ռիսկից:

Ինքնաապահովագրումը նշանակում է ձեռներեցության իրականացնողն ինքն է իրեն ապահովագրում: Այս դեպքում նա խնայում է ապահովագրական գումարները: Ինքնաապահովագրումը պահուստային ֆոնդերի (բնեղեն և դրամական) ստեղծման ապակենտրոնացված ձև է:

Ձեռնարկության (տնտեսության) մակարդակով ռիսկերի կառավարումը բացասական ֆինանսական արդյունքների կանխատեսման և վերացման գործընթաց է, որը հիմնվում է որոշակի սկզբունքների վրա, դրանցից են.

- չի կարելի ռիսկի գնալ ավելին, քան սեփական կապիտալի մեծությունն է,
- քիչ արդյունքի համար չի կարելի ռիսկի տակ դնել մեծ արժեքներ,
- պետք է հաշվի առնել ռիսկի հետևանքները:

---

<sup>1</sup> Вишняков Я.Д., Колосов А.В., Шемяков В.Л. Оценка и анализ финансовых рисков предприятия в условиях враждебной окружающей среды бизнеса // Менеджмент в России и за рубежом, 2000г. N 3, էջ 15-17

Ֆինանսական ռիսկերի պորտֆելում պետք է ընդգրկել այն ռիսկերը, որոնք ենթակա են չեզոքացման, որոնց համար կարող են կիրառվել ներքին մեխանիզմները և մեթոդները: Կարևոր սկզբունք է նաև այն, որ պորտֆելի ռիսկերից եղած ֆինանսական կորուստները պարտադիր չէ, որ մեծացնեն մյուս ռիսկերի հետ կապված ռիսկային հավանականությունը, հետևաբար կառավարման գործընթացում ռիսկերը պետք է չեզոքացվեն առանձին-առանձին:

Ֆինանսական գործունեության իրականացման ժամանակ անհրաժեշտ է կիրառել ռիսկերի այն տեսակները, որոնց մակարդակը չի գերազանցում արդյունավետության համապատասխան մակարդակը՝ ըստ «ռիսկ-եկամտաբերության» սանդղակի: Եթե ռիսկի մակարդակը բարձր է սպասվող եկամտաբերության աստիճանից, ապա այն պետք է մերժվի ձեռներեցության իրականացման տեսանկյունից: Ֆինանսական ռիսկի մակարդակին համապատասխանող կորուստների սպասվող չափը պետք է համապատասխանի կապիտալի այն մասին, որը երաշխավորում է ռիսկերի ներքին ապահովագրումը: Հակառակ դեպքում այն կբերի ակտիվների որոշակի մասի կորստի՝ կնվազեցնի եկամտի ձևավորման հնարավորությունը և սպասվող զարգացման հույսերը:

Ռիսկերի կառավարման հիմքը կազմում է գործարարության համար բացասական ֆինանսական հետևանքների չեզոքացումը:

Տնտեսավարման գործող կառուցակարգի պայմաններում գործարարները ստիպված են դիմելու ռիսկի, ինչը ենթադրում է վնասի, կորստի վտանգ: Նշանակում է գործարարի նպատակը բարենպաստ արդյունքին հասնելու ձգտումն է: Առանց ռիսկի հնարավոր չէ պատկերացնել տնտեսական զարգացման շարժիչ ուժ հանդիսացող նախաձեռնությունը, նորարարությունը, ձեռներեցությունը:<sup>1</sup>

Ռիսկերի կառավարման համակարգը պետք է հենվի ձեռներեցի կողմից ընտրված ֆինանսական ռազմավարության ընդհանուր չափանիշների վրա, ինչպես նաև տնտեսական գործունեության կառավարման առանձին ուղղությունների քաղաքականության վրա: Որպես կանոն, ռիսկերի ընդունումն անհամատեղելի է դրանց բացասական հետևանքների չեզոքացման հնարավորությունների հետ:

<sup>1</sup> Կոմերցիայի հիմունքներ, Ս.Բուլանիկյան խմբ., Եր., Տնտեսագետ, 2003, էջ 230

Շուկայական տնտեսավարման պայմաններում գործարարության արդյունքը զգալի չափով կախված է գործարար աշխարհում գործընկերոջ վարքագծից, պարտավորությունները կատարելու պատասխանատվությունից, նրա ֆինանսական հնարավորությունից, այսինքն՝ գործընկերները պետք է լինեն հուսալի: Գործարարության իրականացմանը որոշակիորեն նպաստում է գործարարության ծրագիրը՝ բիզնես-պլանը, որի անհրաժեշտությունը պայմանավորված է ֆիրմայի որոշումներ կայացնելու և իրականացնելու հստակությունից՝ ի՞նչ և ինչպե՞ս արտադրել, ում վաճառել և որտեղից ձեռք բերել ռեսուրսները: Անշուշտ գործարարության ծրագրի մշակումը և կենսագործումը հանդիսանում է ձեռնարկատիրական ռիսկի նվազեցման հիմնական ուղիներից մեկը:<sup>1</sup>

Ամփոփելով ռիսկերի կառավարման տեսական մասը, կարելի է նշել, որ տնտեսական ռիսկերի կառավարման մեթոդների համակարգում առաջատար դերը պատկանում է դրանց չեզոքացման արտաքին գործիքներին: Դրանք ներկայացնում են բացասական հետևանքների նվազեցման մեթոդների համակարգ, որն ընտրվում և իրականացվում է անմիջապես տնտեսության շրջանակներում:

Ինչպես արդեն նշվել է, առավել ռիսկային է համարվում գյուղատնտեսության ոլորտը, քանզի գյուղատնտեսական արտադրության ռացիոնալ կազմակերպումը ներառում է հողի, աշխատանքային, տեխնիկական, նյութարտադրական ու ֆինանսական ռեսուրսների խնայողաբար օգտագործումը և բարձրորակ արտադրանքի արտադրության ավելացումը:<sup>2</sup> Գյուղատնտեսական արտադրությունն ունի բնորոշ գծեր, որոնք օժտված են ոլորտի առանձնահատկություններով:

Ոչ միայն արտադրությունն է ռիսկային, այլ նաև գյուղատնտեսական արտադրանքի իրացումը: Այն պարունակում է ռիսկայնություն՝ շուտ փչացող, տեղափոխման ու պահպանման հատուկ պայմաններ պահանջող արտադրատեսակները (կաթ, միս, առանձին սորտերի մրգեր, բանջարեղեն և այլն) պահանջում են իրականացնել լրացուցիչ ծախսեր հատուկ նշանակության մեքենաների, սարքավորումների, սառնարանների, չորանոցների ձեռք բերման և օգտագործման համար: Գյուղատնտեսական

<sup>1</sup> Նույն տեղը, էջ 250

<sup>2</sup> Ավետիսյան Ս.Ս.- «Հայաստանի Հանրապետության ագրարային շուկայի ձևավորման հիմնախնդիրները անցումային տնտեսության պայմաններում», Եր., 2002թ.

արտադրության համար բարձր ռիսկայնություն է առաջացնում նաև ժամանակային գործոնը՝ ծախսերի իրականացման ու արդյունքների ստացման երկարատև տարբերությունը:

Գյուղատնտեսության զարգացումը պահանջում է նախատեսել կորուստներ, որոնք էականորեն ազդում են ռիսկերի դինամիկայի վրա հետևյալ ասպեկտներով.

- գյուղատնտեսության արտադրության հիմնական ամբողջական ծախսերի բարձրացման ռիսկը՝ արտադրանքի թողարկման վրա գյուղատնտեսական միավոր հողատեսքերի հաշվով,
- գյուղատնտեսական արտադրանքի իրացումից համախառն եկամտի նվազման ռիսկ:

Գյուղատնտեսությանը բնորոշ է բոլոր տեսակի ռիսկերը, սակայն առավել արդիական է բնական ռիսկը, ինչն առաջ է գալիս տնտեսական գործունեության իրականացման ժամանակ՝ կապված ռեսուրսների և եկամտի կորստի վտանգի հետ: Անբարենպաստ կլիմայական պայմանները գյուղատնտեսական արտադրության ռիսկի հիմքն է: Գյուղատնտեսությունում առկա են նաև այլ ռիսկեր, որոնք բխում են գյուղատնտեսական հողատարածքների օգտագործման, բույսերի և անասունների կենսագործունեության հետ: Դրանք միասին ազդում են գյուղացիական տնտեսությունների մասնագիտացման վրա:

Շուկայական տնտեսավարման պայմաններում գյուղատնտեսական ռիսկերի վերլուծությունը և կառավարման որոշման մշակումն ու հիմնավորումը կատարվում է իրավական ակտերի ձևով՝ ուղղված ռիսկերի նվազեցմանը: Գյուղատնտեսական ռիսկերի նվազեցմանն ուղղված միջոցառումները չպետք է սահմանափակվեն միայն գնահատումով: Իրական տնտեսական պայմաններում ռիսկի տարբեր գործոնների գործողությունները կարող են օգտագործվել ռիսկի մակարդակի իջեցմանը: Բուսաբուծությունում ռիսկի իջեցումը լինում է պաշտպանական կենսաբանական միջոցներով: Օրինակ, սելեկցիան հնարավորություն է տալիս ստեղծել ցրտադիմացկուն սորտեր, նվազեցնել կորուստները եղանակային տատանումներից:

Գյուղատնտեսական ռիսկերի նվազեցման ամենահիմնական մեթոդը՝ ապահովագրությունն է, որի միջոցով փոխհատուցվում են հնարավոր ծախսերի և վնասների

մի մասը: Դրանում պետք է իր ակտիվ մասնակցությունն ունենա պետությունը վճարելով կորուստների առնվազը 50 տոկոսը:

Ռիսկերի կառավարումը չի հանդիսանում ձեռնարկատիրական գործունեության իրականացման բաղադրիչ: Դա բացատրվում է նրանով, որ յուրաքանչյուր կառավարական որոշում այս կամ այն չափով կապված է ռիսկերի հետ: Գոյություն ունեն կառավարական որոշումների ընդունման որոշակի մեթոդներ, որոնք նախապես ուղղված են ագրարային ոլորտում ռիսկի նվազեցմանը: Գյուղատնտեսությունում արդյունավետության ապահովման նպատակով անհրաժեշտ է ինտենսիֆիկացնել ձեռնարկատիրական գործունեությունը դիվերսիֆիկացիայի միջոցով, ինչը հնարավորություն կտա նվազեցնելու ռիսկի աստիճանը: Ագրարային ոլորտում դրա կարևոր պայմաններից է տարածաշրջանային, տնտեսական մասնագիտացման և կոոպերացման խորացումը, ինչի հիման վրա զարգանում են տարածաշրջանային և միջտնտեսական կապերը, խորանում է աշխատանքի տեխնոլոգիական բաժանման գործընթացը, արտադրությունը մասնատվում է ըստ տեխնոլոգիական փուլերի: Դրանք նպաստում են արտադրության մեջ ներդնել գիտության նվաճումներն ու նրանում օգտագործել բարձր արտադրական տեխնիկան:<sup>1</sup>

Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության ռիսկերի նվազեցման գործիքներից կարելի է առանձնացնել հակակարկտային համակարգերի ներդրումը: Կարկտահարությունը զգալի վնասներ է հասցնում գյուղատնտեսության ոլորտին՝ տարեկան ոչնչացնելով ցանքատարածքների և մշակաբույսերի 4-5%-ը, որը գնահատվում է շուրջ 16-20 մլրդ դրամ: Կարկտահարության պատճառած մեծածավալ վնասները՝ 7-8%, հիմնականում բաժին են ընկնում Շիրակի մարզին և Արարատյան դաշտավայրին: Հանրապետության տարածքում գործում է 36 հակակարկտային կայաններ, որոնք տեղադրված են Շիրակի և Արագոծտնի մարզերում: Մեկ հակակարկտային կայանի տեղադրման արժեքը 10 մլն ՀՀ դրամ է, մեկ կայանի հսկողության շառավիղը՝ 80-100 հեկտար, իսկ մեկ հեկտարի ծախսը՝ 0.45 ԱՄՆ դոլար:

Արարատի մարզում գյուղատնտեսական նշանակության հողերը (վարելահող և բազմամյա տնկարկներ) կազմում են 38933 հա: Մարզում անհրաժեշտություն կա

<sup>1</sup> Ղազարյան Ս.Գ., Ղազարյան Է.Ս., «Տնտեսական քաղաքականությունը և գյուղատնտեսական արտադրության զարգացման հիմնադրույթները», ՏՀԻ, գիրք երկրորդ, Եր., 1997, էջ 36-42

տեղադրելու 432 (38933:90) հակակարկտային կայան, որոնց տեղադրման համար անհրաժեշտ է 4320 մլն դրամ: Մեկ տարում Արարատի մարզում կարկուտի հասցրած վնասի չափը կազմում է 4871 մլն դրամ:<sup>1</sup> Վերլուծելով ստացված արդյունքները, ստացվում է, որ մեկ տարվա կարկուտի հասցրած վնասը մեծ է հակակարկտային համակարգի համար պահանջվող ամբողջ ծախսերից: Այս իրավիճակում անհրաժեշտ է արագացնել հակակարկտային կայանների տեղադրումը մարզում, որը պետք է իրականացվի պետության և ապահովագրական կազմակերպությունների կողմից, իսկ ծախսերն աստիճանաբար կփոխհատուցվի գյուղացիական տնտեսությունների կողմից հարկման ճանապարհով: Արարատի մարզում հակակարկտային տեխնոլոգիաների կիրառումը կնպաստի գյուղատնտեսական ապահովագրական ծառայությունների ներդրմանը: Կարկտահարման ռիսկերը գյուղատնտեսական մյուս ռիսկերի հանդեպ ավելի մեծ են:

Տնտեսավարման արդի փուլում ՀՀ Արարատի մարզի գյուղատնտեսության ռիսկայնության բարձր աստիճանը մի կողմից պայմանավորված է բնակլիմայական, իսկ մյուս կողմից՝ ագրարային բարեփոխումների արդյունքում առաջացած բազմաթիվ պատճառներով՝ գյուղացիական տնտեսությունների փոքր չափեր, բարձր արտադրողական փոքրածավալ տեխնիկայի բացակայություն, գյուղատնտեսական արտադրության ենթակառուցվածքների թերզարգացվածություն, արտադրանքի իրացման դժվարություններ, բնակչության գնողունակության անկում, պարարտանյութերի, դեղամիջոցների, թունաքիմիկատների ձեռք բերման բարձր գներ և այլն:

ՀՀ ագրարային ոլորտում իրականացված բարեփոխումներն ավելի մեծացրին տնտեսության վարման ռիսկերի աստիճանը, ինչը պայմանավորված է բազմաթիվ գործոններով: Դրանցից են՝

- գյուղացիական տնտեսությունների փոքր չափերը,
- պետության կողմից գյուղատնտեսությանը տրամադրվող անբավարար աջակցությունը,
- ձեռնարկատերերի իրավունքի զգալի խախտումները պետական և տեղական կառավարման պաշտոնյաների կողմից,

<sup>1</sup> Մխիթարյան Կ.Ս., Ձեռնարկատիրական ռիսկերի կառավարման կատարելագործման ուղիները ՀՀ Արարատի մարզի ագրարային ոլորտում: Ատենախոսություն, Ը.00.02., Եր., 2009, էջ 145

- ֆինանսավարկային համակարգի անկայունությունը,
- ապահովագրական կառույցների թերզարգացվածությունը,
- նյութատեխնիկական թույլ բազան,
- էներգոռեսուրսների, պարարտանյութերի, դեղերի, քիմիկատների բարձր գները,
- բարձր հարկերը,
- իրավական դաշտի անկատարությունը,
- պլանային համակարգից շուկայական տնտեսավարմանն անցման շրջանի անխուսափելի բարդությունները,
- արտադրական և գյուղի սոցիալական ենթակառուցվածքների ցածր մակարդակը,
- հին տնտեսական կապերի վերացում, շրջափակում և այլն:

Բացի վերոնշյալ ընդհանուր բնույթի ռիսկային գործոններից, հանրապետության յուրաքանչյուր մարզին և նույնիսկ տարածաշրջանին բնորոշ են զուտ յուրահատուկ ռիսկային գործոններ: Այս տեսակետից ՀՀ Արարատի մարզի ագրարային ոլորտում առավել ընդգծված են հետևյալ ռիսկերը:

Բուսաբուծությունում`

- վաղ գարնանային և ուշ աշնանային ցրտահարություններ,
- տեղատարափ անձրևներ, որը բերում է հողատարման, մշակաբույսերի արմատների մերկացման, ծաղկաթափման և այլն,
- Արաքս գետի և վտակների մերձակայքում ջրի մակարդակի բարձրացում,
- արտեզյան ջրերի բարձրացում,
- կարկտահարություն,
- երկարատև երաշտներ,
- ցանքատարածքների ողողումներ,
- ուժեղ քամիներ,
- արագ փչացող գյուղմթերքների իրացման ռիսկեր,
- մորեխների և մկնանման կրծողների զարգացման ռիսկեր և այլն:

Անասնաբուծությունում`

- հիվանդություններ և համաճարակներ,
- տեղատարափ անձրևներ և ջրհեղեղ,
- տևական երաշտներ,
- կայծակ և կարկուտ,
- արևային և ջերմային հարվածներ,
- ցրտահարություններ,
- թունավորում խոտերից,
- գայլերի և վայրի գազանների հարձակումներ,
- օձի և թունավոր միջատների խայթումներ և այլն:

ՀՀ Արարատի մարզում տարերային աղետների վնասները շատ մեծ է, հատկապես բուսաբուծության ոլորտում: Մարզի բուսաբուծությանը ռիսկերի հետևանքով հասցրած տարեկան միջին վնասը կազմում է ավելի քան 14613 մլն դրամ:<sup>1</sup>

Արարատի մարզի անասնաբուծությունում ռիսկերի մակարդակը որոշակիորեն ավելի ցածր է, քան բուսաբուծության մեջ: Անասնաբուծությունում հիմնականում ռիսկեր են գոյանում վարակիչ հիվանդությունների և համաճարակների պատճառով: Այստեղ վարակիչ հիվանդություններից են բրուցելյոզը և ժանտախտը: Բրուցելյոզն առավել շատ տարածված է խոշոր եղջերավոր անասունների, ինչպես նաև ոչխարների և այծերի, իսկ ժանտախտը՝ խոզերի մոտ: Մարզի անասնաբուծության համար ռիսկային վտանգ են ներկայացնում նաև սիբիրախտ և դաբաղ հիվանդությունները, որոնք ժամանակ առ ժամանակ գլուխ են բարձրացնում: Հանուն արդարության պետք է նշել, որ այդ ուղղությամբ կատարվում են որոշակի աշխատանքներ: Այսպես, 2009 թվականին ՀՀ կառավարության կողմից մշակված հատուկ միջոցառումներով ախտորոշիչ հետազոտություններ է կատարվել բրուցելյոզ հիվանդության նկատմամբ՝ ստուգման են ենթարկվել 30990 գլուխ խոշոր եղջերավոր և 67668 մանր եղջերավոր անասուններ: Սիբիրախտ հիվանդության նկատմամբ նախազգուշական պատվաստումների են ենթարկվել 64336 գլուխ խոշոր, 88035 գլուխ մանր եղջերավոր անասուններ և 19807 գլուխ խոզեր: Ամբողջ հանրապետությունում տարեկան դաբաղ հիվանդության նկատմամբ հակահամաճարակային միջոցառումների մեջ ընդգրկվել

<sup>1</sup> Մխիթարյան Կ.Ս., Ձեռնարկատիրական ռիսկերի կառավարման կատարելագործման ուղիները ՀՀ Արարատի մարզի ագրարային ոլորտում: Ատենախոսություն, Ը.00.02., Եր., 2009, էջ 78



են շուրջ 120 հազար գլուխ խոշոր եղջերավոր և 130 հազար գլուխ մանր եղջերավոր կենդանիներ:<sup>1</sup>

Ագրարային ոլորտում ձեռնարկատիրական ռիսկերի նվազեցման գործում կարևոր դերակատարություն կարող է ունենալ գյուղատնտեսական արտադրության կառավարման կատարելագործումը:

Գյուղատնտեսական արտադրության կառավարման կատարելագործումը մեր կարծիքով ենթադրում է հետևյալ հիմնախնդիրների համալիր լուծումը և միջոցառումների իրականացումը, որոնք հնարավորություն կտան կատարելագործել կառավարման և կազմակերպական կառուցվածքները, բարձրացնել կառավարման արդյունավետությունը և հասնել տնտեսական բարձր արդյունքների.

- կիրառվող կառավարման մեթոդների օպտիմալ զուգակցում,
- աշխատանքի կազմակերպման մեթոդների կատարելագործում և աշխատանքի պայմանների բարելավում,
- կառավարման աշխատատարության նվազեցում, ավելորդ, կրկնվող գործառույթների և փաստաթղթերի վերացում,
- կառավարչական անձնակազմի աշխատանքի արտադրողականության բարձրացում ոչ արտադրողական աշխատանքի աշխատաժամանակի կրճատման հաշվին,
- կառավարման գործընթացում շրջանառվող բոլոր փաստաթղթերի շրջանառության տևողության կրճատում և փաստաթղթաշրջանառության օպտիմալացում,
- կառավարչական աշխատակազմի ընդհանուր թվաքանակի կրճատում,
- ծախսերի կրճատում՝ կառավարման գործառույթների արդյունավետ մեթոդների արմատավորման և իրավակազմակերպական օպտիմալ ձևի ընտրության միջոցով և այլն:

Գյուղատնտեսական արտադրության կառավարման կատարելագործումը պահանջում է համալիր մոտեցում և մեր կարծիքով հնարավոր է իրականացնել պլանավորման բարելավման, արտադրության օպտիմալ կազմակերպական կառուցվածք-

<sup>1</sup> ՏԵՍ, ԲԳ Արարատի մարզի 2011-2014թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիր, Արտաշատ, 2010, էջ 149

ների կատարելագործման ու կառավարման սոցիալ-հոգեբանական մեթոդների ներդրման, տնտեսավարման արդյունավետ ձևերի արմատավորման, սեփականության ձևերի օպտիմալ զուգակցման, կառավարչական աշխատանքների նյութական շահագրգռվածության և պատասխանատվության արդյունավետ համակարգի ներդրման միջոցով:

Ուսումնասիրելով ձեռնարկատիրական ռիսկերի կառավարման հիմնահարցերը առաջարկում ենք.

1. Մշակել և իրականացնել գյուղատնտեսական ռիսկերի զսպման և կառավարման միջոցառումներ՝ նպաստելով ֆինանսական ռեսուրսների հոսքին դեպի ագրարային ոլորտ, խթանելով վարկային տոկոսադրույքների ներդրումների հետ կապված խնդիրների լուծմանը: Մասնավորապես միջոցառումներ ձեռնարկել ոլորտում ապահովագրական համակարգի ներդրման և ռիսկերի դիվերսիֆիկացման ուղղությամբ: Գյուղատնտեսական կազմակերպություններում ռիսկերի արդյունավետության վրա մեծապես կարող են անդրադառնալ նաև ռիսկ-մենեջմենտ ծառայությունների ձևավորումը:

2. Մեր կարծիքով, անհրաժեշտ է գյուղատնտեսության խոշոր կազմակերպություններում ստեղծել ռիսկերի կառավարմամբ զբաղվող բաժին:

3. Ինչպես նաև, առաջարկում ենք ներկայացնել վիճակագրական հաշվետվություններում ռիսկերի վերաբերյալ հաշվետվություններ:

### **3.3. Ագրարային ոլորտի արտադրական ենթակառուցվածքների զարգացման ուղիները Արարատի մարզում**

Ենթակառուցվածք տերմինը ծագել է լատ. *infra* – ներքև, տակ, և *structura* – կառուցվածք, տեղաբաշխում հասկացություններից, որը տարաբնույթ ծառայությունների համալիր է՝ կոչված սպասարկելու արտադրությանը և բնակչությանը: Ենթակառուցվածքը բազմաճյուղ և բազմաոլորտ կառույցների ամբողջություն է՝ ընդգրկելով ճանապարհները, ջրանցքները, կամուրջները, օդանավակայանները, էներգետիկ

տնտեսությունները, տրանսպորտը, կապը, ջրամատակարարումը և կոյուղին, գազամատակարարումը, առողջապահությունը, գիտությունը, կրթությունը և այլն:

Յուրաքանչյուր երկիր, նրա առանձին ճյուղեր, տարածաշրջաններ, համայնքներ, ֆիրմաներ ունեն իրենց նպատակներն իրականացնելու համար անհրաժեշտ ենթակառուցվածքներ, որոնք «կոչված են ապահովելու տնտեսական հարաբերությունների արդյունավետ գործունեությունը»:<sup>1</sup> Ենթակառուցվածքները սովորաբար կրում են համալիր բնույթ, որովհետև առանձին տեսակի ենթակառուցվածքներ միաժամանակ կարող են լինել և արտադրական և սոցիալական (ճանապարհները, գազամատակարարումը, ջրամատակարարումը, կամուրջները և այլն), արտադրական և շուկայական (ֆինանսավարկային ինստիտուտները, աճուրդները, բորսաները, նյութատեխնիկական մատակարարումը և այլն):

Ենթակառուցվածքների պահպանման և զարգացման ծախսերը հիմնականում իր վրա է կրում պետությունը, քանի որ դրանք պահանջում են մեծածավալ ներդրումներ, գրեթե շահույթ չեն հետապնդում, ինչի համար էլ մասնավոր ձեռներեցությունը չի ձգտում դեպի այդ ոլորտը:

Ենթակառուցվածքներն առավել կարևորվում են գյուղական համայնքների համար՝ կապված դրանց տեղաբաշխվածության հեռավորությունների, բնակեցման ցածր աստիճանի և գյուղական բնակչության կենսակերպի իրականացման հետ:

Գյուղական բնակավայրերում նախկինում ստեղծված արտադրական և սոցիալական ենթակառուցվածքների մանրատման և փոշիացման պատճառով սակավահող Չայաստանում, հատկապես բարեփոխումների առաջին տարիներին, ցանքատարածությունները կրճատվեցին մոտ 100 հազար հեկտարով, բազմամյա տնկարկների տարածությունը՝ ավելի քան 30 հազար հեկտարով, խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը՝ 191.1 հազարով, ոչխարներինը և այծերինը՝ 437, խոզերինը՝ 245, թռչուններինը՝ 8261.1 հազարով:<sup>2</sup>

Պետք է նշել, որ սկզբնական շրջանում ագրարային ոլորտի ենթակառուցվածքների զարգացման հարցերը գրեթե մոռացության էին ենթարկվել, ինչի պատ-

<sup>1</sup> Տնտեսագիտության տեսություն, Գ.Կիրակոսյանի և Ի.Խլիլայանի խմբ. «Տնտեսագետ», Եր., 2009, էջ 159

<sup>2</sup> Ֆահրադյան Յ., Չայաստանի Հանրապետությունում ագրարային արմատական բարեփոխումների արդյունքների և մի քանի խնդիրների մասին: «Էկոնոմիկա», 1996թ., էջ 29

ճառներից մեկն էլ այն էր, որ հողի և գյուղատնտեսության մյուս արտադրության միջոցների սեփականաշնորհման հետ համատեղ չմասնավորացվեց արտադրական ենթակառուցվածքի համակարգի միջոցները: Արդյունքում խզում առաջացավ բուն արտադրության գործընթացի և ենթակառուցվածքների միջև: Սովորաբար դրանք գտնվում են փոխադարձ դիալեկտիկական կապի մեջ՝ մեկի զարգացումը պայմանավորում է մյուսի զարգացումը: Ըստ էության, հանրապետությունում այդ հիմնախնդրին անդրադարձան միայն ՀՀ կառավարության կողմից մարզերի սոցիալ-տնտեսական ծրագրերի մշակման և իրագործման միջոցառումների անցկացումով:

Արարատի մարզի մարզային և համայնքային ենթակառուցվածքների զարգացումը կայուն զարգացման ծրագրի (ԿԶԾ) հիմնական գերակայություններից է, որի խնդիրներն առնչվում են անբարեկարգ ճանապարհների անմխիթար վիճակի, խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման, ինչպես նաև գազիֆիկացման հարցերի հետ:

Արարատի մարզի ճանապարհների վիճակի վերլուծությունը ցույց է տալիս, որ մարզի տարածքով անցնում է երկու միջպետական՝ 103.6 կմ, 21 հանրապետական՝ 313.5 կմ և 50 տեղական (մարզային) նշանակության 250 կմ ավտոճանապարհներ: Միայն տեղական նշանակության ավտոճանապարհների ցանցում առկա են 102 կամուրջ և 308 երկաթբետոնյա խողովակներ: Տեղական նշանակության ճանապարհները 109.3 կմ ասֆալտբետոնե, 27.4 կմ սև խճային և կոպճային, 84.8 կմ՝ կոպճային ու 28.5 կմ բնահողային ծածկույթով է:<sup>1</sup>

ԿԶԾ-ում ֆիզիկական մեկուսացվածությունը սահմանված է որպես կարևորագույն գործոն, ինչը խոչընդոտում է կենսաբանական, սոցիալական և հոգևոր մշակութային պահանջմունքները բավարարելուն: Հանրապետությունում աղքատության մակարդակն անմիջականորեն կապված է մարզերը Երևանից, իսկ համայնքները մարզկենտրոններից հեռավորության՝ հատկապես ճանապարհների վիճակի հետ: Հետազոտությունները ցույց են տալիս, որ մայրուղիներից և քաղաքային բնակավայրերից հեռու գտնվելն առավել աղքատածին գործոն է գյուղական համայնքների բնակիչների համար:

<sup>1</sup> ՀՀ Արարատի մարզի 2011-2014թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիր, էջ 176

2013թ. տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջական հետազոտության (SSԿԱՅ) տվյալների համաձայն՝ գյուղերում բնակվող այն տնտեսությունները, որոնք տեղակայված են կոշտ ծածկույթով ճանապարհների և շուկաների մոտակայքում, առավել ունևոր են, քան ճանապարհներից հեռու բնակվողները: Համաձայն դրանց տվյալների՝ սովորաբար ամսվա ընթացքում գյուղաբնակ տնային տնտեսության որևէ անդամ օգտվում է ճանապարհային երթևեկության միջոցներից պարարտանյութ, սերմեր գնելու համար 1.8 օր, գյուղմթերք վաճառելու համար՝ 5.3 օր, համայնքից դուրս աշխատելու՝ 21.0 օր, այլ նպատակների համար՝ 4.6 օր: Գյուղաբնակ տնային տնտեսության անդամը բուժական հաստատություն հասնելու համար ծախսում է միջինը 10-17 թույե, դեղատուն հասնելու՝ 14 թույե, գյուղապետարան՝ 10 թույե, մանկապարտեզ՝ 12 թույե, տարրական դպրոց՝ 23 թույե, միջնակարգ դպրոց՝ 10 թույե, գյուղարտադրանքի վաճառքի շուկա՝ 22 թույե, բանկ (ֆինանսական ծառայություն)՝ 20 թույե:<sup>1</sup>

Բնակավայրերի ֆիզիկական մեկուսացվածությունը կրճատելու նպատակով անհրաժեշտ է զարգացնել ճանապարհաշինությունը՝ նկատի ունենալով դրանց ազդեցությունը մարզի սոցիալ-տնտեսական զարգացման գործում: Գյուղաբնակային մեջ իրականացվող ներդրումները երկու անգամ արդյունավետ են իրենց նպատակաուղղվածության և գյուղական աղքատության նվազեցման առումով, քան միջամտության մյուս ձևերը:<sup>2</sup>

Ներկայումս Արարատի մարզի տեղական նշանակության ճանապարհների մեծ մասը, ֆինանսական ռեսուրսների անբավարարության պատճառով, երկար ժամանակ նորոգման չի ենթարկվել, որի հետևանքով քանդվել և դարձել են երթևեկության համար դժվարանցելի:

Պետք է նշել, որ ՀՀ Արարատի մարզի ճանապարհների բարեկարգման և վերականգնման ուղղությամբ կատարվում են որոշակի աշխատանքներ: Այսպես, 2007 թվականին բոլոր ֆինասավորման աղբյուրների հաշվին իրականացվել է 2100.7 մլն դրամի աշխատանքներ, այդ թվում՝ պետական բյուջեի հաշվին 1764.0 մլն, համայնք-

<sup>1</sup> Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը: Վիճակագրական վերլուծական զեկույց: Եր., 2014, էջ 72-73

<sup>2</sup> Գյուղական ենթակառուցվածքը Հայաստանում: Հասցեագրելով ծառայությունների մատուցման բացերը: Համաշխարհային բանկ, 2004թ.

ների բյուջեներից՝ 231.7 մլն և «գյուղական տարածքների տնտեսական զարգացման» ծրագրով՝ 105.0 մլն դրամ: 2008 թվականին ընդհանուր ֆինանսավորումն այդ ուղղությամբ կազմել է 2262.24 մլն դրամ, որից՝ պետական բյուջե՝ 1241.98 մլն, համայնքների բյուջեներ՝ 143.66 մլն, «գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագիր»՝ 214.0 մլն, «Հազարամյակի մարտահրավերներ»՝ 500.0 և «Ասիական զարգացման բանկ»՝ 162.6 մլն դրամ: 2014 թվականին ճանապարհաշինության ուղղությամբ կատարված աշխատանքների ընդհանուր ֆինանսավորումն աճել է շուրջ 3 անգամ:<sup>1</sup> Այդ աննախադեպ աճը կապված է «Ասիական զարգացման բանկի» ծրագրով կատարված 4459.745 մլն դրամի՝ 64.49 կմ երկարությամբ ավտոճանապարհի հիմնանորոգման ֆինանսավորմամբ: Սակայն 2010 թվականին, կապված ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքների և գյուղատնտեսական անբարենպաստ եղանակային պայմաններից, ճանապարհաշինության ոլորտի ֆինանսավորումը նորից կրճատվեց, կազմելով ընդամենը շուրջ 2 մլրդ դրամ:<sup>2</sup>

ՀՀ պետական բյուջեի միջոցներով վերանորոգվել է մարզային նշանակության մեկ ավտոճանապարհ 16.23 մլն դրամով, միջպետական նշանակության մեկ և հանրապետական նշանակության մեկ կամուրջների հիմնանորոգում՝ 35.6 մլն դրամով:

Արարատի մարզում 2011-2014թթ. մարզային զարգացման ծրագրով նախատեսվել է 24546 մլն դրամ ֆինանսավորում, որից՝

- 1) նորոգել 249.8 կմ ընդհանուր երկարությամբ միջպետական, հանրապետական և տեղական նշանակության ճանապարհներ, որի համար, ըստ նախնական հաշվարկների, պահանջվում է 19.53 մլրդ դրամ,
- 2) մարզի քաղաքային և գյուղական համայնքների փողոցների հիմնանորոգման համար կպահանջվի 2811.5 մլն դրամ,
- 3) մարզի ճանապարհային ցանցի ձմեռային պահպանման և ընթացիկ շահագործման համար տարեկան ֆինանսավորման պահանջը կկազմի մոտ 770 մլն դրամ,
- 4) կամուրջների նորոգման համար՝ 184 մլն դրամ:

<sup>1</sup> ՀՀ Արարատի մարզի 2015-2018թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիր, էջ 177

<sup>2</sup> ՀՀ Արարատի մարզի մարզպետարանի տվյալներ

ՀՀ Արարատի մարզի ճանապարհաշինության ոլորտի ուղղությունները  
2011-2014 թվականների համար<sup>1</sup>

Ճանապարհներն ըստ նշանակության	Չափի միավոր	2011- 2014թթ.	այդ թվում			
			2011	2012	2013	2014
1. Միջպետական	կմ	19.7	11.7	-	-	8.0
	մլն դրամ	2350	1400	-	-	950
2. Հանրապետական	կմ	114.0	37.3	31.4	34.0	
	մլն դրամ	9700	4570	2250	2140	740.0
3. Տեղական	կմ	116.1	3.3	40.3	29.1	43.4
	մլն դրամ	7480	260	3020	1850	2350
Ընդամենը	կմ	249.8	51.3	81.7	63.1	62.7
	մլն դրամ	19530	6230	5270	3990	4040
Քաղաքային և գյուղական համայնքների փողոցների նորոգում	համայնք. թիվը	57	9	17	16	15
	մլն դրամ	2811.5	815.5	724	664	608
Ընթացիկ պահպանում և շահագործում	մլն դրամ	3080	770	770	770	770
Կանուրջների նորոգում	մլն դրամ	184	69	40	40	35
Ճանապարհաշինությունում ամբողջ ծախսերը	մլն դրամ	24546	7774	6634	5114	5024

ՀՀ Արարատի մարզի ագրարային ոլորտի ձեռնարկատիրական գործունեության զարգացման համար կարևոր նախադրյալ է հանդիսանում մշակվող հողատարածքների ոռոգումը: Արարատյան դաշտավայրի մշակվող հողերի առավել մեծ մասը ոռոգվում է: Սակայն սուբյեկտիվ և օբյեկտիվ պատճառներով դեռևս որոշակի դեպքերում այն բավարար չէ: Այսպես, ըստ 2013թ-ի հետազոտության տվյալների, Արարատի

<sup>1</sup> ՀՀ Արարատի մարզի 2011-2014թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիր, էջ 179-180

մարզում հող մշակող բնակչության ոռոգվող հողատարածքների 10.7%-ը ոռոգում է հողի 25%-ը, 4.6%-ը՝ 25-50%, 7.6%-ը՝ 50-75 և 77.1%-ը 100%-ով ոռոգում է մշակվող հողատարածքները: Այս ցուցանիշով Արարատի մարզը զիջում է միայն Արմավիրի մարզին՝ 82.3%: Ըստ հետազոտության տվյալների, տնային տնտեսությունների 64%-ը ստացել է ոռոգման ջուր՝ բավարար քանակությամբ և ժամանակին, 23%-ը՝ բավարար քանակությամբ, բայց ոչ ժամանակին, 6%-ը՝ ժամանակին, բայց ոչ բավարար քանակությամբ, իսկ 6%-ը՝ ոչ բավարար և ոչ էլ ժամանակին: Ոռոգման ջրի մատակարարման ընդհատումների պատճառներից նշվում է՝ ջրատարների տեխնիկական անբավարար վիճակը (28%), տեղական ցանցի խնդիրները (22%), վճարումներ չկատարելը (8%), պոմպերի հետ կապված վթարները (14%): Օգտագործված ոռոգման ջրի դիմաց վճարվել է 93%, իսկ 7% -ը չի վճարել գումար չունենալու, անհրաժեշտ քանակության և ժամանակին ջուր չստանալու պատճառով:<sup>1</sup>

Արտադրական և սոցիալական ենթակառուցվածքների համակարգում կարևոր տեղ է զբաղեցնում նաև ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքը: Արարատի մարզում ջրամատակարարումը իրականացվում է «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի «Երևան Ջուր ՓԲԸ» և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից: Խմելու ջուրն ունի ռազմավարական ռեսուրսների նշանակություն, որը սակայն չի մատակարարվում մի շարք գյուղական համայնքներում, չնայած առկա է զգալի քանակության ջրի պաշարներ:

ՀՀ Արարատի մարզի ջրամատակարարման համակարգն ընդգրկում է՝

- մայրուղի ջրատարներ – 870 կմ,
- ներքին ցանց – 4010 կմ,
- 26 ջրամբար 40 հազ. մ<sup>3</sup> տարողությամբ:

«Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ն սպասարկում է 74 համայնք, «Երևանջուրը» - 5 և ՏԻՄ-երի կողմից՝ 18 համայնք: Ջրամատակարարման խնդրի լուծումն առաջին հերթին կապված է մատակարար-սպառող և ներդրող-շահառու համագործակցության հստակ իրականացման հետ: Դրանց միջև փոխհարաբերությունները հստակեցնելու համար պետք է ճիշտ գնահատել փոքր համայնքների պահանջները և դրանցում

<sup>1</sup> Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, վիճակագրական-վերլուծական զեկույց, Եր., 2014, էջ 69-70



ներդրումների տնտեսական նպատակահարմարվածությունը, որտեղ անհրաժեշտ է հաշվի առնել ոչ միայն ծախսեր և օգուտներ ցուցանիշները, այլ նաև բնակչության կենսունակության գնահատման ցուցանիշները՝ համայնքի հեռանկարային զարգացման կամ թեկուզև նույն վիճակի պահպանման հիմնախնդիրները (մարդկանց չնդել արտագաղթի):

Ուրոտում սակագնային քաղաքականություն մշակելիս պետք է հրաժարվել սակագների և սպառողական վարձերի զգալի բարձրացման միջոցով կապիտալ ներդրումների ծախսածածկումից, թեև կապիտալ ծախսերը պետք է կատարվեն պետական միջոցներից, ինչպես նաև դոնոր կազմակերպությունների կողմից՝ հիմնականում Ասիական Ջարգացման Բանկի ֆինանսավորմամբ: Ջրամատակարարման ընկերությունների կառավարման արդյունավետությունը և ֆինանսական կայունությունը պայմանավորված է շահագործման ծախսերի արդյունավետությամբ և վճարների հավաքագրման մակարդակի բարելավմամբ: Սակայն ներկայումս ամենահրատապ հարցը մնում է ջրի կորստի կրճատումը, ինչը հիմնականում բխում է ջրամատակարարման ցանցերի անմխիթար վիճակից և ջրի վարձավճարների հավաքագրման ցածր աստիճանից: Պետք է նշել, որ Արարատի մարզում գնալով բարձրանում է վճարների գանձման մակարդակը: Այսպես, 2007 թվականին վարձավճարների հավաքագրումը կազմել է՝ «Հայջրնուդկոյուդի» ՓԲԸ-ում 59.4 տոկոս, «Երևանջուր»-ում՝ 57.3 տոկոս, 2008-ին համապատասխանաբար՝ 63.2 և 64.4, 2009-ին՝ 66.7 և 67.1, 2010 թվականին՝ 70.1 և 71.2 տոկոս, 2014-ին՝ 78.2 և 80.1 տոկոս:<sup>1</sup>

Մարզում 2007-2014 թվականներին կառուցվել և վերակառուցվել են շուրջ 84 կմ խմելու ջրագիծ: Այդուհանդերձ ներկայումս Արարատի մարզում ջրամատակարարման խնդիրների լուծմանը խոչընդոտում են.

- անհրաժեշտ ֆինանսական և նյութական ռեսուրսների անբավարարվածությունը,
- համայնքների կողմից թույլ ուշադրության հատկացումը,
- ջրի կորուստների մեծ քանակը,
- վարձավճարների գանձման ցածր մակարդակը,

<sup>1</sup> ՀՀ Արարատի մարզի 2011-2014թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիր

- ջրամբարների անբավարար տեխնիկական վիճակը,
- ջրային ռեսուրսների ոչ ռացիոնալ օգտագործումը և այլն:

Արարատի մարզում ջրամատակարարման ոլորտում չլուծված հիմնախնդիրներից են նաև՝

- 1) Եղեգնավան և Նորակերտ համայնքները չունեն խմելու ջուր, բնակիչներն այն գնում են ջուր վաճառող ցիստեռներից,
- 2) Ռանչպար, Նորամարգ, Սիս, Սիփանիկ, Նիզամի, Սայաթ-Նովա, Հովտաշատ, Հովտաշեն գյուղական համայնքներում խմելու ջուրը մատակարարվում է համայնքների տարածքում գտնվող ոռոգման համար նախատեսված խորքային հորատանցքերից,
- 3) Զանգակատուն, Նարեկ, Լանջանիստ, Լանջառ, Լուսաշող, Պարույր Սևակ, Արմաշ, Շաղափ, Վարդաշատ համայնքների ջրամատակարարման համակարգերը շահագործվում են գյուղապետարանների կողմից, առանց ջրի վարակազերծման,
- 4) Ուրցալանջ, Տիգրանաշեն համայնքներում բացակայում է կենտրոնացված ջրամատակարարումը՝ օգտվում են գյուղի կենտրոնում գտնվող ջրի ծորակներից:

Գյուղական բնակավայրերի ջրամատակարարման և ջրահեռացման ցանցերը գտնվում են համայնքային սեփականության ներքո՝ խիստ մաշված և անբարվոք վիճակում, որոնք լուրջ խնդիրներ են առաջացնում որակյալ ջրամատակարարման հարցում, հիմնականում չունեն սանիտարական գոտիներ (սանիտարական պահպանման գոտի, պահակային հսկողություն), ջուրը չի վարակազերծվում՝ ջրատարներն անցնում են ոռոգման առվակներով, արոտավայրերով:

ՀՀ Արարատի մարզի ջրամատակարարման համակարգի գործունեության բարելավման հիմնական ուղղություններից են.

- 1) Սակագների ծախսածածկման և վարձավճարների հավաքագրման մակարդակի բարձրացման ճանապարհով անհրաժեշտ է աստիճանաբար հրաժարվել ջրամատակարարման ընկերությունների սուբսիդավորման քաղաքականությունից, ինչը հնարավորություն կտա խնայված բյուջետային միջոցներն ուղղել սոցիալ-տնտեսական այլ ծրագրերի իրականացմանը:
- 2) Ջրաչափերի տեղադրման միջոցով բարելավել ջրի ծախսի հաշվառման կարգը:

3) Բարձրացնել ջրամատակարարման համակարգի կազմակերպությունների կառավարման արդյունավետության աստիճանը՝ օգտագործված ջրի դիմաց վճարների հավաքագրման միջոցով:

Ցանկացած համայնքում և նույնիսկ փոքր բնակավայրում ջրամատակարարման խնդիրներն առնչվում են ջրահեռացման հետ, որն իր սոցիալ-տնտեսական ու սանիտարա-հիգիենիկ նշանակությամբ չի զիջում մյուս ենթակառուցվածքային հարցերին և ուղղակիորեն կապվում է բնակչության առողջապահական և բնապահպանական հիմնախնդիրների հետ, իսկ վերջիններս ունենալով համակարգային բնույթ, չեն կարող լուծվել միայն մարզային մակարդակով իրականացվող առանձին ծրագրերի միջոցով:

Այս իրավիճակում ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների ոլորտում գոյություն ունեն բազմաթիվ չլուծված ու լուծում պահանջող հիմնախնդիրներ.<sup>1</sup>

- ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների ինքնաձևափոխման ցածր մակարդակը՝ ներկայումս ինքնաձևափոխման չեն,
- նոր ջրատարների կառուցման և շահագործվող ջրագծերի վերանորոգման համար ֆինանսական միջոցների անբավարարությունը,
- խողովակների ֆիզիկական մաշվածությունը և անբավարար թողունակությունը,
- համայնքային ենթակառուցվածքի համակարգերում խմելու ջրի վարակազերծման միջոցառումների ցածր մակարդակը,
- իրահավաք կառույցների շահագործման և պահպանման ցածր մակարդակը,
- կենցաղային կեղտաջրերի մաքրման կայանների գրեթե բացակայությունը:

Ոլորտում իրականացված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ մարզի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգի առաջնահերթ խնդիրներից են մարզի բոլոր քաղաքներում և 14 գյուղական համայնքներում ջրամատակարարման համակարգի տեղադրում, այդ թվում՝ ջրահեռացման և մաքրման կայանների կառուցում:

<sup>1</sup> ԳՂ կառավարության 30.10.2009թ. N-1207-Ն որոշմամբ Կայուն զարգացման ծրագիր

Ագրարային ոլորտի արտադրական ենթակառուցվածքների կարևոր բաղադրիչ է համարվում գյուղտեխնիկայի առկայությունը և դրանց սարքինության աստիճանը, որը ներկայումս գտնվում է անմխիթար վիճակում, ինչի մասին վկայում են աղյուսակ 3.2-ի տվյալները:

**Աղյուսակ 3.2**

**Գյուղտեխնիկայի առկայությունը ըստ հող ունեցող կամ անասնապահությունով զբաղվող տնային տնտեսություններում օգտագործման տևողության 2014թ. հունվարի 1-ի դրությամբ<sup>1</sup>, %**

Գյուղտեխնիկայի տեսակներ	ընդամենը	մինչև 2 տարի	3-5 տարի	6-10 տարի	ավելի քան 10 տարի
Տրակտոր	100	12.4	1.2	12.3	74.0
Բեռնատար ավտոմեքենա	100	9.3	9.9	29.3	51.5
Հացահատիկային կոմբայն	100	-	-	-	100.0
Տրակտորային կցասայլակ	100	12.9	0.0	38.7	48.4
Տրակտորային խոտհնձիչ	100	23.2	19.2	31.1	26.5
Կերահավաք կոմբայն	100	-	-	-	100.0
Հատիկագտիչ	100	-	-	100	-
Տրակտորային շարքացան	100	-	7.7	15.5	76.8
Տրակտորային գութան	100	-	6.1	13.0	80.9
Կուլտիվատոր	100	-	8.6	8.7	82.7
<b>Ընդամենը</b>	100	9.4	7.2	23.8	59.6

Արտադրական ենթակառուցվածքների համակարգում նշանակալի տեղ ունի գազամատակարարումը, որը բնակչության բարեկեցության և արտադրության արդյունավետության բարձրացման հիմնական գործոններից է: Գազամատակարարման ոլորտում իրականացվող քաղաքականությունը պետք է ուղղվի գազամատակարարման հասանելիության աստիճանի բարձրացմանը:

<sup>1</sup> Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, Եր., 2014, էջ 70

Ներկայումս Արարատի մարզը համարվում է հանրապետությունում ամենագազիֆիկացվածներից մեկը: Մարզի 97 համայնքներից գազիֆիկացված է 82 համայնք: Կառուցվել է 349.4 կմ միջին ճնշման և 903.76 կմ ցածր ճնշման գազատար: Մարզում բաժանորդների թիվը 2015թ. հունվարի 1-ի դրությամբ կազմում է 47011, այդ թվում գյուղական համայնքներում՝ 31083:<sup>1</sup>

Այլընտրանքային էներգետիկ աղբյուրների բացակայության պատճառով ավելի է մեծանում գազիֆիկացման անհրաժեշտությունը: Բացի այդ, եթե հաշվի առնենք, որ յուրաքանչյուր բնակարանի գազիֆիկացումը հնարավորություն է տալիս տարեկան տնտեսել 10-12 մ<sup>3</sup> վառելափայտ, ապա Հայաստանի պարագայում դա շատ մեծ արժեք ունի:

Արարատի մարզում գազիֆիկացման աշխատանքները հիմնականում կատարվում են «Հայառուսգազարդի» կողմից, իսկ որոշ դեպքերում՝ ԳԶՄՀ-ի և համայնքների համաֆինանսավորմամբ: Բայց քանի որ գազն ապրանք է, սպառողը պետք է ամբողջությամբ վճարի դրա օգտագործման դիմաց, գազիֆիկացման աշխատանքները ծախսատար են, գազի գինն ունի բարձրացման միտում, հետևաբար դրանք բերում են գազիֆիկացման հանդեպ պահանջարկի նվազմանը: Արարատի մարզում գազիֆիկացման գործընթացին խոչընդոտում է միանվագ ծախսերի իրականացման պահանջը և գազի սակագնի բարձր մակարդակը: Այստեղ անհրաժեշտ է պետական միջամտություն, հատկապես փոքր և հեռավոր գյուղերի համար: Պետությունը պետք է այդ գյուղերի գազիֆիկացման աշխատանքները վերցնի իր վրա, գազասպառման համար կիրառի զեղչային սակագներ՝ սուբսիդավորի գազի առկա գնի մի մասը, ինչպես ներկայումս դա արվում է ցածր եկամուտ ունեցող բնակչության հանդեպ՝ 1 խոր. մետր սպառված գազի դիմաց վճարի 100 դրամ, հանրապետությունում կիրառվող 156 դրամի փոխարեն: Գազիֆիկացումը Հայաստանի Հանրապետության և մասնավորապես Արարատի մարզի համար այլընտրանք չունի: Դրա համար էլ ՀՀ նախագահի 2008թ. հուլիսի 30-ի թիվ ՆՀ-128-Ա կարգադրության հանձնարարականով՝ Արարատի մարզում իրականացվել են գազամատակարարման հետևյալ աշխատանքները.

<sup>1</sup> ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով 2010-2014, Եր., 2015, էջ 197

1. Կատարվել է Արարատ քաղաքի 40 բազմաբնակարան շենքերի 948 բնակարանների գազիֆիկացումը, ինչի համար ծախսվել է 56.3 մլն դրամ, որից 47.3 մլն համայնքի բյուջեից, 9 մլն դրամը «Հայռուսգազարդի» ՓԲԸ-ի կողմից:
2. Նորամարզ և Սիս համայնքների միջին ճնշման գազատարի շինարարության աշխատանքները կատարվել է «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրի վերլուծության և կառավարման գրասենյակ» պետական հիմնարկը՝ «Շուկայական հնարավորություններն են ֆերմերներին» ծրագրի շրջանակներում:
3. Ռանչպար և Արբաթ բնակավայրերի գազատարների կառուցման համար Արարատի մարզպետարանը ծրագրի հայտ է ներկայացրել նշված համայնքների գազիֆիկացման աշխատանքները 2011-2013թթ. ծրագրերում ընդգրկելու համար:
4. Ջրաշեն համայնքի միջին ճնշման գազատարը կառուցվել է դեռևս 2008 թվականին, սակայն ֆինանսական ռեսուրսների բացակայության պատճառով (անհրաժեշտ 112 մլն դրամ) ներքին ցանցի աշխատանքները չեն կատարվում:
5. 2009 թվականին «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրի վերլուծության և կառավարման գրասենյակ» պետական հիմնարկի և համայնքի միջոցներով ավարտվել է Սիփանիկ համայնքի գազիֆիկացման աշխատանքները (80 մլն դրամ):

Պետք է ավելացնել, որ Իրան-Հայաստան գազատարի կառուցման շնորհիվ հնարավորություն է առաջացել իրականացնելու գազատարի ուղեգծին հարակից մարզի համայնքների գազաֆիկացման աշխատանքները: Սակայն, նույնիսկ հիմնական գազատարներին կից փոքր համայնքներում, դրանք շատ դեպքերում դառնում են տնտեսապես ոչ ձեռնտու:

Անկախ պատճառներից, պետական գազամատակարարման ընկերության կողմից ծառայությունների կրճատումը համայնքներում հանգեցրել է սպասարկվող բաժանորդների քանակի կրճատմանը (խորհրդային շրջանի համեմատ բազմաբնակարան շենքերի միայն 58%-ն է գազիֆիկացված): Որտեղ չկա գազ, օգտագործվում է հիմնականում վառելափայտ, որն ունի բացասական բնապահպանական հետևանքներ:

ՀՀ Արարատի մարզի 2011-2014 թվականների սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրով նախատեսվում է գործարկել 38 կմ գազատար, որի մոտավոր արժեքը կազմում է 200 մլն դրամ: Ընդհանուր առմամբ ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտում մարզում պետք է իրականացվի 2291.4 մլն, իսկ գազամատակարարման գծով՝ 3187 մլն դրամ:

Գազամատակարարմանն այլընտրանքային ապրանք կարող է ծառայել էլեկտրաէներգիան, որն Արարատի մարզում որոշակի չափով իրականացվում է հիդրոկայանների կողմից: Ձեռնարկատիրության հետագա զարգացումը նոր պահանջներ է ներկայացնում էներգետիկ հզորությունների ստեղծմանը: Ներկայումս հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից տրված արտոնագրերի համաձայն Արարատի մարզում երկու փոքր հիդրոկայաններ, ունենալով 3.523 ՄՎտ ընդհանուր հզորություն, տարեկան արտադրում են 6.75 մլն ԿՎտ/ժամ էլեկտրաէներգիա:

Կառավարության 2009 թվականի հունվարի 22-ի նիստի որոշմամբ հավանության է արժանացել ՀՀ-ում, այդ թվում նաև Արարատի մարզում փոքր հիդրոէլեկտրակայանների զարգացման ծրագիրը: Նախատեսվում է մարզում Ազատ և Վեդի գետերի վրա կառուցել ևս 5 փոքր ՀԷԿ-եր՝ 5.023 մեգավատ հզորությամբ, որոնք տարեկան պետք է արտադրեն 18.73 մլն ԿՎտ/ժամ էլեկտրաէներգիա:

Փոքր ՀԷԿ-երի կառուցումը ոչ միայն մարզում կբացի նոր աշխատատեղեր, այլ նաև կնպաստի արտադրության և ձեռնարկատիրական գործունեության հետագա զարգացմանը:

Ենթակառուցվածքների համակարգում յուրահատուկ տեղ է զբաղեցնում զբոսաշրջությունը, որը համարվում է տնտեսության զարգացման շարժիչ ուժերից, քանի որ այն նպաստում է ազգային տնտեսությունների զարգացմանը, սոցիալ-տնտեսական ցուցանիշների բարելավմանը, դրա ինտեգրմանը համաշխարհային տնտեսության մեջ: Զբոսաշրջությունը արագ զարգացող ոլորտ է, նրա զարգացման տեմպերը գերազանցում են տնտեսության աճի միջին տեմպերին: Այսպես, աշխարհում 1995-2000թթ. զբոսաշրջության աճը կազմել է տարեկան 3 տոկոս, 2002 թ-ին՝ 4.2 տոկոս:<sup>1</sup>

<sup>1</sup> Международные экономические отношения, М., 2005, էջ 173

2010թ-ին համաշխարհային զբոսաշրջության շուկայում գրանցվել է զգալի աճ՝ միջազգային զբոսաշրջիկների թիվն ավելացել է նախորդ տարվա համեմատ 6.7 տոկոս:<sup>1</sup> Ներկայումս աշխարհի արտահանվող ծառայությունների շուրջ 35 տոկոսը կազմում է զբոսաշրջությունը: Համաձայն զբոսաշրջության զարգացման հայեցակարգի մինչև 2020թ. միջազգային զբոսաշրջիկների թիվը կհասնի 1.6 մլրդ-ի, ոլորտում աշխատողների թիվը կկազմի 262 մլն մարդ, իսկ ոլորտում ծախսերը՝ 2 տրիլիոն դոլար:<sup>2</sup>

ՀՀ-ում զբոսաշրջությունը գրանցված է որպես գերակա տնտեսական ոլորտ, զարգանում են այդ ոլորտի ենթակառուցվածքները՝ ճանապարհները, զվարճանքի և սննդի ծառայությունները, հյուրանոցային հնարավորությունները: Դա էլ նպաստել է նրան, որ 2001-2010թթ. զբոսաշրջիկների թիվը ավելացնել 24.3 տոկոսով:<sup>3</sup>

Զբոսաշրջությունը բարիք արտադրող ոլորտ է, ինչի համար էլ այն ունի իր ենթակառուցվածքները, որն էլ հանդիսանում է զբոսաշրջության զարգացման գրավականը: Ներկայումս միջազգային զբոսաշրջության համակարգում կարևոր տեղ է զբաղեցնում ագրոտուրիզմը:

Ագրոտուրիզմը գյուղացու կողմից դրամ վաստակելու նպատակով նրա հնարավորությունների օգտագործումն է զբոսաշրջիկներին ծառայություններ մատուցելու ճանապարհով: Արարատի մարզի պայմաններում ագրոտուրիզմի կիրառումը զբոսաշրջիկին կարող է հրապուրել լճակային տնտեսություններում և գետակներում ձկնորսությամբ զբաղվելը, նավակով զբոսնելը, զբոսանքը գյուղացու ձիով կամ էշով, հոլիկում գիշերելը, ավանդական լավաշի թխելը, թոնրում խորոված անելը, մրգերով հյուրասիրելը և այլն: Նման ծառայությունների մատուցումը, ինչպես նաև ձեռքի արվեստի գործերի վաճառքը, հովեկներին սպասարկման օբյեկտներում լրացուցիչ աշխատատեղեր կբացեն մարզի գյուղական վայրերում: Լ.Հակոբյանի և Ն.Շափաղաբյանի հաշվարկներով նշված միջոցառումների իրականացումը հնարավորություն կտա Արարատյան հարթավայրի գյուղական բնակավայրերում լրացուցիչ կերպով զբաղվածությունն ապահովել 120.7 հազար, իսկ հանրապետությունում՝ 253.2 հազ,

<sup>1</sup> ՀՀ զբոսաշրջության բնագավառի վերլուծություն, 2010թ.: ՀՀ էկոնոմիկայի նախարարություն, Եր., 2011, էջ 2

<sup>2</sup> Զբոսաշրջության զարգացման հայեցակարգ, 2010, էջ 3

<sup>3</sup> ՀՀ զբոսաշրջության բնագավառի վերլուծություն, 2010թ.: ՀՀ էկոնոմիկայի նախարարություն, Եր., 2011, էջ 6



մարդու համար: Եվս 62 հազ. հոգի գյուղական բնակավայրերում կգբաղվեն տնային տնտեսությունում և 16.5 հազ, մարդ կսովորեն արտադրությունից կտրված:<sup>1</sup>

Ամփոփելով ՀՀ Արարատի մարզում զբոսաշրջության առկա վիճակը, կարելի է փաստել, որ դրա հետագա զարգացմանը խանգարում են մի շարք գործոններ, մասնավորապես՝

- զբոսաշրջության տնտեսությունների բացակայությունը,
- գովազդային և տեղեկատվության նյութերի ոչ պատշաճ մատուցումը,
- ներմարզային և տեղական ճանապարհների, համապատասխան ենթակառուցվածքների անբավարար վիճակը,
- ոլորտում ներդրումային ծրագրերի բացակայությունն ու ֆինանսական միջոցների սակավությունը և այլն:

Ուսումնասիրելով ագրարային ոլորտի արտադրական ենթակառուցվածքների զարգացման հիմնահարցերը առաջարկում ենք.

1. Մշակել Արարատի մարզի գյուղատնտեսության ոլորտի արտադրական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացման և պետական աջակցության համալիր ծրագիր:

2. Ապահովել մրցակցային միջավայր սպասարկող կազմակերպությունների համար:

3. Բարելավել սպասարկող կազմակերպությունների և գյուղատնտեսական արտադրողների միջև կապը, այդ նպատակով ներդնել ժամանակակից տեղեկատվական համակարգեր:

4. Բարձրացնել սպասարկող կազմակերպությունների կառավարման գործառույթների իրականացման արդյունավետությունը:

---

<sup>1</sup> Հակոբյան Լ.Լ., Շափաղաթյան Ն.Ա., Ագրարային աշխատանքի շուկան և զբաղվածության հիմնախնդիրները Հայաստանի գյուղատնտեսությունում, Եր., «Հրագրան» հրատ., 1999, էջ 112-114

### 3.4. Տնտեսավարման ձևերի կատարելագործման ուղիները

Տնտեսության զարգացման արտադրության գործոնների մեջ միշտ էլ առանձնացվում է ձեռներեցությունը, որը բարիք ստեղծելու և շահույթ ստանալու նպատակով կոչված է միավորելու արտադրության մյուս գործոններին (հող, աշխատանք, կապիտալ), ինչին կարող է առաջին հերթին նպաստել տնտեսավարման ձևերի զարգացումը: Տնտեսավարումը արտադրության կազմակերպման մեթոդ է, եղանակ, որտեղ ձեռներեցը ձգտում է առավել արդյունավետ օգտագործել տնտեսական ռեսուրսները և շուկայական ենթակառուցվածքները: Շուկայական տնտեսավարման հիմքում, որպես անհրաժեշտ և պարտադիր պայման, հանդիսանում է արտադրության միջոցների հանդեպ բազմասեփականությունը, ինչպես նաև տնտեսական տարբեր կացութաձևերի առկայությունը, տնտեսական գործունեության իրականացման համար իրավական դաշտի ապահովումը, ազատ մրցակցության ծավալումը և այլն: Սեփականությունը էական դերակատարություն ունի տնտեսության զարգացման գործում: Դեռևս մ.թ.ա. 350 թվականին Արիստոտելը իր «Յոթորիկայում» նշում էր՝ «ազգի հարստությունը կայանում է իրի օգտագործման, այլ ոչ թե դրա տնօրինման իրավունքի մեջ»: Դա նշանակում է, որ սեփականության իրավունքը ոչ թե նրա տնօրինման, այլ օգտագործման մեջ է: Ներկայումս տնտեսագիտության մեջ տարածված է այն տեսակետը, որ գոյություն չունի արդյունավետ և ոչ արդյունավետ սեփականության ձև: Սեփականության ձևը դասվում է իրավական կատեգորիաների շարքում, իսկ արդյունավետության հասկացությունը՝ տնտեսավարման ձևերին և մեթոդներին: «Արդյունավետ տնտեսավարումը» բնական հասկացություն է, «արդյունավետ սեփականությունը»՝ իռացիոնալ:<sup>1</sup>

Գյուղատնտեսության ոլորտում տնտեսավարումը տնտեսագիտական հասկացություն է, մարդկային գործունեության ձև՝ ուղղված արտադրության կազմակերպմանը, արտադրանքի իրացմանը, եկամուտների բաշխմանը, արդյունքների օգտագործմանը և վերարտադրության ապահովմանը: Դա միավորվում է մեկ միասնական

<sup>1</sup> Хонькин В., Земельная собственность и предпринимательский менеджмент, “Международный сельскохозяйственный журнал”, N 4, М., 2001, էջ 41

տոցիալ-տնտեսական մարմնի մեջ՝ տեխնոլոգիական, կազմակերպական, տնտեսական, իրավական և հոգեբանական հարաբերությունների միջոցով:

Պատմականորեն, որպես ամենահին և տարածված տնտեսավարման օբյեկտ եղել է գյուղատնտեսությունը, որտեղ կիրառվել են տնտեսավարման բազմաթիվ ձևեր և գյուղացիական տնտեսություններ: Ներկայումս, թեև աշխարհի զարգացած երկրներում գերակշռում են ընտանեկան ագարակային տնտեսությունների ձևերը, այդուհանդերձ դրանց հետ միասին գործում են նաև կոլեկտիվ, կոոպերատիվ, խմբակային, առևտրային կազմակերպություններ, տնտեսություններ և այլն: Տնտեսավարման կազմակերպական-արտադրական և իրավատնտեսական տեսանկյունից գյուղացիական կազմակերպություններն ու տնտեսությունները բաժանվում են երեք հիմնական խմբի.

- գյուղացիական տնտեսություններ
- կոլեկտիվ գյուղացիական տնտեսություններ,
- կոոպերատիվներ,
- գյուղատնտեսական կազմակերպություններ:

Զարգացած երկրներում գյուղատնտեսական կազմակերպությունների հիմնական ձևը ագարակային (ֆերմերային) տնտեսությունն է, իսկ զարգացող երկրներում գերակշռում են գյուղացիական տնտեսությունները: Ընտանեկան գյուղացիական տնտեսությունը դա՝

- ագրարային ֆիրմա է, որի նպատակը գյուղատնտեսական մթերքների արտադրությունն է,

Ընտանեկան գյուղացիական և ագարակային տնտեսությունները հիմնականում իրականացնում են ապրանքային-արտադրական գործառույթ, սակայն ընտանեկանը ավելի շատ կրում է բնամթերային տնտեսության ձև, արտադրանքի գերակշիռ մասը սպառվում է սեփական կարիքների համար, իսկ ագարակայինը՝ կրում է ապրանքային բնույթ, տնտեսությունը հարմարեցնելով շուկայական կոնյուկտուրային պահանջներին, արտադրելով այն, ինչն ունի ավելի մեծ շուկայական պահանջարկ:

Աշխարհում կոլեկտիվ գյուղացիական կազմակերպություններն ներկայիս գյուղատնտեսական արտադրության վարման գերակշռող մասն են կազմում: Առաջին

կոլեկտիվ գյուղատնտեսական կազմակերպությունները ստեղծվել են Իտալիայում դեռևս 1886 թվականին, այնուհետև Ֆրանսիայում և Իսպանիայում, բայց լայնամասշտաբ զարգացում ստացավ 1960-ական թվականներին: Սոցիալիստական կարգերի վերացումից հետո, անցյալ դարի 90-ական թվականներից գյուղատնտեսական ձեռնարկություններ ստեղծվեցին Արևելյան Եվրոպայի նախկին սոցիալիստական երկրներում. տնտեսությունները ձևափոխվեցին կոլեկտիվ գյուղատնտեսական ձեռնարկությունների, որոնց կառավարումն իրականացվում է ընտրովի մարմինների կողմից:

Տնտեսավարման համաշխարհային պրակտիկայից ուշադրության է արժանի նաև գյուղացիական կոոպերատիվները, որոնք հանդիսանում են գյուղատնտեսական արտադրություն վարելու արդյունավետ ձևերից մեկը, քանի որ հնարավորություն է տալիս մանր գյուղացիական սեփականատերերին և գյուղմթերքներ արտադրողներին, չխախտելով իրենց սեփականատիրական ու տնտեսավարման ինքնուրույնությունը, միավորվելու մեկ կառույցի մեջ՝ օգտագործելով խոշոր տնտեսությունների առավելությունները, հանձինս «մասշտաբի էֆեկտի»:

Եվրամիության երկրներում անցյալ դարի 80-ական թվականներին գյուղատնտեսական արտադրանքի իրացման ավելի քան 60 տոկոսը կատարվում է կոոպերատիվների միջոցով, Սկանդինավյան երկրներում՝ մինչև 80, ճապոնիայում՝ ավելի քան 90 տոկոս:<sup>1</sup>

Գյուղատնտեսության ոլորտում կոոպերացիան ձեռք է բերում մեծ առավելություններ, քանի որ հնարավորություն է տալիս ինքնուրույն օգտագործել ռեսուրսները՝ միավորելով ստեղծել առավել հզոր ներուժ, միաժամանակ պահպանելով կոոպերատիվի մեջ մտնողների իրավական և մասնակիորեն տնտեսական ինքնուրույնությունը: Դրա համար էլ գյուղացիական կոոպերատիվները համարվում են գյուղացիական փոքր ընտանեկան ձեռներեցության շարունակությունը: «Գյուղատնտեսական կոոպերացիայի հիմնական գաղափարը պարզ է: Եթե ուշադիր դիտենք գյուղացիական տնտեսությունների կազմն իր բավականին բարդ կառուցվածքով, ապա մենք հեշտությամբ կարող ենք համոզվել, որ մի շարք ճյուղերի համար խոշորացման ձևը կտա անմիջական մեծ օգուտ, ընդ որում, գրեթե միշտ հնարավոր է

<sup>1</sup> Голубев А., Обоснование оптимальных моделей крестьянских (фермерских) хозяйств, “Международный хозяйственный журнал”, N 6, 2000, М., էջ 41

դառնում բավականին հեշտությամբ, չխախտելով տնտեսության մյուս մասերի աշխատանքները և չքանդելով ընտանեկան տնտեսությունը, առանձնացնել առանձին աշխատանքները և միավորել նրանք միասին, միացյալ, հարևանների հետ մի ընդհանուր գործի մեջ»:<sup>1</sup> Այդ առավելություններն ակնհայտ են, ինչի համար էլ կոոպերացիան պետք է դառնա գյուղատնտեսության ոլորտում գերակշռող տնտեսավարման ձևը:

Արդեն բազմիցս նշել ենք, որ ինչպես ամբողջ հանրապետությունում, այնպես էլ Արարատի մարզում գյուղատնտեսության բարեփոխումների արդյունքում ստեղծվեցին մանր գյուղացիական տնտեսություններ, որոնց հիմնական մասը ինքնուրույն չի կարողանում լուծել ոչ արտադրության և ոչ էլ իրացման հարցերը: Համաշխարհային փորձը վկայում է, որ սեփականության և տնտեսավարման տարբեր ձևերի վրա կազմավորված գյուղատնտեսական արտադրության արդյունավետության բարձրացման տնտեսավարման արդյունավետ ձևերից է կոոպերացիան: Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի «Կոոպերատիվ է համարվում քաղաքացիների և իրավաբանական անձանց անդամության վրա հիմնված ու իր անդամների գույքային փայլվճարների միավորման միջոցով մասնակիցների նյութական և այլ կարիքների բավարարման նպատակով ստեղծված միավորումը» (հոդված 117-121)<sup>2</sup>: Կոոպերացիայի զարգացումը հնարավորություն կընձեռի լուծելու մի շարք տնտեսական և սոցիալական հարցեր, մասնավորապես՝

- գյուղատնտեսական մթերքների վերամշակումը,
- գյուղատնտեսական արտադրանքի իրացումը և արտահանումը,
- առաջավոր տեխնոլոգիաների ներդրումը, արտադրության վերազինումը, տեխնիկական և տեխնոլոգիական սպասարկումները,
- գյուղատնտեսական տեխնիկայի օգտագործման արդյունավետության մակարդակի բարձրացումը,
- արտադրության մասնագիտացման խորացումը,

<sup>1</sup> Чаянов А.В. Краткий курс кооперации, М., Коопиздат, 1925, էջ 6

<sup>2</sup> «ՀՀ քաղաքացիական օրենսգրք», գլուխ 5, հոդված 117-121, «ՀՀ պաշտոնական տեղեկագիր», թիվ 17(50): 10.08.1998

- տվյալ համայնքում (գյուղական բնակավայրում) բարոյահոգեբանական մթնոլորտի բարելավումը և այլն:

Չնայած հանրապետությունում և Արարատի մարզում ձեռնարկվող ջանքերին, պետք է նշել, որ դեռևս դանդաղում են կոոպերատիվների ստեղծումը, ինչը պայմանավորված է իրավական դաշտի անկատարությամբ, տնտեսավարման այդ ձևի առավելությունների վերաբերյալ բնակչության իրազեկվածության և պետական աջակցության ցածր մակարդակով և այլն:

### Աղյուսակ 3.3

#### Կոոպերատիվների թիվը 2015 թվականի դրությամբ

Ք/Ք	Մարզ	Արոտօգտագործողների միավորում	Այլ	Ընդամենը
1	Արարատ	0	13	13
2	Արմավիր	0	21	21
3	Արագածոտն	12	8	20
4	Գեղարքունիք	20	2	22
5	Լոռի	8	11	19
6	Կոտայք	0	7	7
7	Շիրակ	17	1	18
8	Սյունիք	18	7	25
9	Վայոց Ձոր	0	23	23
10	Տավուշ	17	23	40
	<b>Ընդամենը</b>	<b>92</b>	<b>116</b>	<b>208</b>

Տվյալների աղբյուրը՝ «ՔՔ Արարատի մարզի 2015-2018թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիր»:

Գյուղատնտեսության մեջ տնտեսավարման ձևերից է նաև վարձակալությունը, որը շատ երկրներում գերակշռող է և համարվում է արտադրության կազմակերպման արդյունավետ ձևերից մեկը: Գյուղատնտեսությունում վարձակալական հարաբերու-

թյունները ձևավորվել են աստիճանաբար՝ դեռևս ֆեոդալիզմի օրոք, երբ կիրառվում էր աշխատավճարային (կոռ) և մթերավճարային (բահրա) վարձակալությունները: Գյուղացիները ֆեոդալ հողասեփականատերերից վարձակալում էին որոշակի հողատարածք՝ դրա դիմաց մշակում նաև ֆեոդալի հողը կամ էլ վճարում բնամթերք: Շուկայական հարաբերությունների որոշակի խորացումից հետո անցում կատարվեց վարձակալության դրամական ձևին, ինչը նպաստեց գյուղում ֆեոդալիզմի քայքայմանը և գյուղատնտեսության մեջ կապիտալիստական (շուկայական) հարաբերությունների ձևավորմանը՝ նպաստելով հողատարածքների խոշորացմանն ու միավորմանը: Դա իր հերթին բերեց տնտեսական հարաբերությունների ընդլայնմանը՝ ընդգրկելով ոչ միայն հողասեփականատերերին ու հողօգտագործողներին, այլ նաև գյուղատնտեսության մեջ կիրառվող վարձու աշխատողներին: Այս պարագայում հողի վարձակալը պետք է հողը մշակի այնքան արդյունավետ, որ դրանից ստացված եկամտի հաշվին վճարի հողի վարձը, աշխատավարձ տա վարձակալած աշխատողին և ունենա նորմալ շահույթ: Հակառակ դեպքում այդ գործարքը դատապարտված է չիրականացման:

Այս ամենը նշանակում է, որ վարձակալական հարաբերությունները բերում են երկու ծայրահեղ մոտեցումների.

ա) արդյունավետության զգալի բարձրացմանը, երբ վարձակալողը պարտավորված պետք է բավարարի վերը նշված պահանջները, ստիպված է առավել արդյունավետ օգտագործել հողը և վարձակալած մյուս միջոցները,

բ) վարձակալողը հանդգնված չէ դրանում, նա չի վարձակալում հողատարածք՝ արդյունքում չեն օգտագործվում հողը և գյուղատնտեսական արտադրության մյուս միջոցները:

Մեր կարծիքով ՀՀ-ում հողատարածքների մի մասի չօգտագործման պատճառներից մեկն էլ կայանում է հենց դրանում: Շատ դեպքերում գյուղատնտեսության բարձր ռիսկայնությունը ոլորտի ձեռներեցներին չի խրախուսում իրականացնել վարձակալական տնտեսավարում: Նման դեպքեր բազմիցս են հանդիպում Արարատի մարզում: Օրինակ, մարզում վարձակալողները խուսափում են ծիրանի այգիների

վարձակալությունից՝ կապված ցրտահարությունների և բերքի իրացման բարդությունների հետ:

Հայաստանում տնտեսավարման վարձակալական ձևի զարգացմանը խոչընդոտում է համապատասխան օրենսդրական դաշտի բացակայությունը: Ձարգացած եվրոպական երկրներում վարձակալական հարաբերություններն ունեն բազմադարյան պատմություն և դրանով իսկ աչքի ընկնում ընթացիկ օրենսդրության հատուկ կարգավորվածության մակարդակով: Մասնավորապես, Ֆրանսիայում դեռևս 19-րդ դարի սկզբին ընդունվել է քաղաքացիական հարաբերությունները կոդիֆիկացված կերպով կարգավորող օրենսգիրք, որում առանձին տեղ էր հատկացված վարձակալական հարաբերությունների կարգավորմանը: Արևելյան Եվրոպայի նախկին սոցիալիստական երկրներում գյուղատնտեսության զարգացման փորձը վկայում է, որ վարձակալությունը լայն տարածում ստացած և արտադրության կազմակերպման արդյունավետ ձև է:

ՀՀ-ի համար ուսանելի կլինի Շվեդիայի և Ֆրանսիայի փորձը, որտեղ վարձակալողների ընտրության հարցը խիստ կանոնակարգված է օրենքով:

ԱՊՀ երկրներից Ղազախստանում և Ղրղզստանում հողի մասնավոր սեփականության իրավունքը չի գործում, հողն այստեղ համարվում է զուտ պետական սեփականություն, որը գյուղացիական տնտեսություններին տրվում է միայն վարձակալության: Վարձակալներին թույլատրվում է վաճառել իրենց վարձակալական իրավունքը, ինչը նպաստում է հողի շուկայի զարգացմանը և նրան, որպեսզի հողն ընկնի առավել արդյունավետ տնտեսավարողի ձեռքը: Հանրապետությունում գյուղատնտեսական արտադրության զարգացման, տնտեսավարման արդյունավետ ձևերի արմատավորման համար դեռևս առկա են մի շարք արգելքներ, որոնք պայմանավորված են

- շրջանառու միջոցների անբավարարությամբ,
- տնտեսությունների չափազանց փոքր չափերով,
- բնակլիմայական անբարենպաստ պայմաններով,
- մեքենայացման ցածր մակարդակով,
- իրավական դաշտի անկատարությամբ,
- վարկերի բարձր տոկոսադրույքով,



- պետական անբավարար աջակցությամբ,
- տեղեկատվության և խորհրդատվության համակարգի աշխատանքի ցածր արդյունավետությամբ,

- ենթակառուցվածքների զարգացման ցածր մակարդակով և այլն:

